ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի գործընկերներ,

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հաշվետու տարվա ընթացքում, հետամուտ լինելով ՀՀ կառավարության կողմից որդեգրած հարկային և մաքսային ոլորտների շարունակական բարեփոխումների իրականացման գերակայություններին, ապահովել է ձեռնարկված ուղղություններով զարգացման նշանակալի դրական արդյունքներ և ցուցանիշներ:

2025 թվականին հաստատվել են հարկային վարչարարության բարեփոխումների և մաքսային ծառայության առաջիկա տարիների զարգացման ռազմավարական ծրագրերը, որտեղ սահմանվել են նաև ինստիտուցիոնալ զարգացման ուղենիշերը՝ ՊԵԿ **առաքելությունը**՝ ապահովել արդար և թափանցիկ հարկային և մաքսային միջավայր, խթանել կամավոր կարգապահությունը և ծառայել քաղաքացիներին ու բիզնեսին՝ հանուն Հայաստանի առաջանցիկ զարգացման, և **տեսլականը**՝ ՊԵԿ-ը դինամիկ զարգացող և առաջատար կառույց է, որը հայտնի է տեխնոլոգիական համարձակ նորարարությամբ և մարդակենտրոն մոտեցմամբ:

Ներկայացվող հաշվետվությունն ամփոփում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 2025 թվականի ընթացքում կատարված աշխատանքների հիմնական արդյունքները, գործունեության կարևոր ցուցանիշները, առաջնահերթությունները, գերակայությունները, իրագործված ծրագրերը, ինչպես նաև համակարգի զարգացման հետագա ուղղությունները:

Կարևորելով ՀՀ տնտեսական զարգացման ապահովման ուղղությամբ ՀՀ ՊԵԿ դերակատարումը՝ 2025 թվականի ընթացքում ՊԵԿ կողմից իրականացվող բարեփոխումներն առավելապես ուղղված են եղել գործարար միջավայրի բարելավման նպատակով հարկային վարչարարության և մաքսային ընթացակարգերի պարզեցմանը, թվային և վերլուծական գործիքների դերի էական բարձրացմանը, ստվերի դեմ թիրախային պայքարին, կամավոր կարգապահության բարձրացմանն ուղղված արդյունավետ, հետևողական վարչարարության իրականացմանը և օրինապահ հարկ վճարողների համար տնտեսական խթանների ընդլայնմանը: Այս ամենը ամուր հիմքեր են ստեղծել հարկային եկամուտների երկարաժամկետ աճի և կամավոր հարկ վճարելու մշակույթի

արմատավորման համար՝ միաժամանակ ստեղծելով ավելի արդար և մրցակցային տնտեսական դաշտ:

Այս առումով առավել առանցքային են հետևյալ արձանագրումները.

1. 2025թ. հարկ վճարողների հետ համատեղ ապահովեցինք պետական բյուջեի մուտքերի բարձր արդյունքներ: Այսպես, 2025թ. արդյունքներով պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 2 տրլն 725.2 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա ցուցանիշից ավել է շուրջ 334.3 մլրդ դրամով կամ 14.0%-ով, իսկ 2017թ.-ից ավել է 1 տրլն 564.8 մլրդ դրամով կամ 134.9%-ով:

2. 2025 թվականի ընթացքում ՊԵԿ կողմից իրականացվել և մեկնարկել են մի շարք առանցքային բարեփոխումներ, որոնցից առավել հատկանշական են.

- ✓ **էլեկտրոնային համակարգերի և ենթակառուցվածքների համապարփակ ախտորոշումը և արդիականացումը,**
- ✓ **հարկային ռիսկերի կառավարման համակարգերի կատարելագործմամբ և թվային հետախուզության գործիքների դերի նշանակալի բարձրացմամբ ստվերի կրճատումը,**
- ✓ **բոլոր ուղղություններով վերլուծական նոր գործիքների մշակումը, արհեստական բանականության նոր գործիքների ներդրումը, հսկիչ նշանների համակարգի կատարելագործումը,**
- ✓ **նպաստների վճարման, հարկային ռեզիդենտության տեղեկանքի տրամադրման, աշխատանքային պայմանագրերի կնքման և առողջության համընդհանուր ապահովագրության վճարների վճարման նոր թվային պլատֆորմների մշակումը,**
- ✓ **մաքսային ռիսկերի համակարգի համապարփակ կատարելագործմամբ մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացումը և գործընթացների ժամանակատարության էական նվազումը,**
- ✓ **«Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի կատարելագործումը, EXIM տեղեկատվական համակարգի մշակումը, մաքսային ռիսկերի համակարգում արհեստական բանականության գործիքների, մաքսային միասնական հաշվի ներդրման և ցամաքային անցման կետերի նոր միասնական թվային պլատֆորմի մշակման մեկնարկը,**
- ✓ **հարկ վճարողների հետ մարդակենտրոն հաղորդակցման գործիքների և հարթակների ընդլայնումը,**

- ✓ **առաջին անգամ շուրջ 4 տասնյակ երկրների հետ ֆինանսական հաշիվների փոխանակումը,**
- ✓ **միջազգային համագործակցության ընդլայնումը և ՊԵԿ-ի միջազգային դիրքերի ամրապնդումը:**

Տարվա ընթացքում արձանագրված ձեռքբերումները և համակարգում շարունակական բարեփոխումների իրականացման էներգիան ու մոտիվացիան, կամքն ու հաստատակամությունը վստահաբար թույլ կտան առաջիկա տարիներին արձանագրել հարկային և մաքսային վարչարարության արդյունավետության շարունակական բարձրացում՝ համահունչ տեխնոլոգիական համարձակ նորարարությանը և մարդակենտրոն մոտեցմանը:

ՀՀ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ 6

1.1 ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԿԵՐ/ՀՆԱ 7

1.2 ՀԱՐԿԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ 12

II. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 29

2.1 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ 30

2.2 ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 32

III. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 73

3.1 ՀԱՐԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 74

3.2 ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 81

3.3 ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ 92

IV. ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 92

4.1 ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ 94

4.2 ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱԶԱՆԳԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ 96

V. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ 97

5.1 ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ SS ՈԼՈՐՏՈՒՄ 98

VI. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 105

6.1 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ 106

VII. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 118

7.1 ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 119

VIII. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ 121

8.1 ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 122

8.2 ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 125

Ի. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

1.1 ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԿԵՐ/ՀՆԱ

2025 թվականին հարկային և մաքսային մարմինների կողմից ապահովվել են 2,725.2 մլրդ դրամի չափով պետական բյուջեի հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որը 334.3 մլրդ դրամով կամ 14.0%-ով ավել է նախորդ տարվա նույն ցուցանիշից: Ընդհանուր առմամբ 2025 թվականին ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող հարկային եկամուտների և պետական տուրքերի փաստացի աճի հիմնական պատճառ են հանդիսացել ներքին տնտեսական ակտիվությունը, աշխատատեղերի ու միջին աշխատավարձի ավելացումը, հարկման դրույքաչափերի բարձրացումը, հարկային վարչարարության արդյունքում ստվերային շրջանառությունների և հարկման բազաների տեղափոխումը հարկման դաշտ:

Աղյուսակ 1. 2023 - 2025թթ. հարկային եկամուտներ և պետական տուրքեր, հարկային եկամուտների ու պետական տուրքերի և ՀՆԱ-ի հավելաճի տեմպը (մլրդ դրամ)

Ցուցանիշ[1]	***2023***	***2024***	***2025***
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	2,273.9	2,390.9	2,725.2
Հարկային եկամուտների և պետական տուրքերի հավելաճի տեմպ	15.9%	5.1%	14.0%
ՀՆԱ (շուկայական գներով)[2]	9,492.5	10,193.4	11,317.5
ՀՆԱ-ի իրական աճ[1]	108.3%	105.9%	107.2%
Անվանական ՀՆԱ-ի հավելաճի տեմպ	11.7%	7.4%	11.0%
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր / ՀՆԱ	24.0%	23.5%	24.1%

2025 թվականին անվանական ՀՆԱ-ն կազմել է 11,317.5 մլրդ դրամ, իսկ անվանական ՀՆԱ-ի աճը՝ 1,124.1 մլրդ դրամ կամ 11.0%: 2025թ. ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 107.2%, իսկ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը՝ 24.1%:

Ըստ ոլորտների, հարկային եկամուտների վրա դրական է ազդել շինարարության ոլորտի կողմից բյուջե մուտքագրված հարկային եկամուտների աճը շուրջ 55.7 մլրդ դրամով, որից միայն ԱԱՀ-ի հաշվին՝ 38.2 մլրդ դրամով, իսկ միայն շահութահարկի հաշվին՝ 9.5 մլրդ դրամով: Բանկերի կողմից բյուջե մուտքագրված հարկային եկամուտների աճը շուրջ 44.4

[1] Թվերը ներկայացված են տասնորդական նիշի ճշտությամբ:
[2] Ըստ ՀՀ ՎԿ տվյալների https://www.armstat.am/am/?nid=12&id=01001

մլրդ դրամով, որից միայն շահութահարկի հաշվին՝ 24.3 մլրդ դրամով, իսկ միայն եկամտային հարկի հաշվին՝ 19.3 մլրդ դրամով: Մյուս կողմից՝ տվյալ ժամանակաշրջանի հարկային եկամուտների աճի վրա իր բացասական ազդեցությունն է թողել հանքարդյունաբերության ոլորտի կողմից բյուջե մուտքագրված հարկային եկամուտների նվազումը շուրջ 27.9 մլրդ դրամով, որից միայն ռոյալթիի հաշվին՝ 34.5 մլրդ դրամով:

Գծապատկեր 1. 2023 - 2025թթ. հարկային եկամուտների և պետական տուրքերի հավելաճի տեմպը, անվանական ՀՆԱ հավելաճի տեմպը, հարկային եկամուտներ ու պետական տուրքեր/ՀՆԱ ցուցանիշ



ՀՀ ներմուծման ծավալները 2025 թվականին կազմել են 5,052.9 մլրդ դրամ, ինչը 25.0%-ով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: ԵԱՏՄ երկրներից ներմուծումները կազմել են 1,942.7 մլրդ դրամ կամ ընդհանուրի 38.4%-ը՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 48.6%-ով, սակայն արտաքին առևտրի մասով գրանցվել է աճ 156.6 մլրդ դրամով կամ 5.3%-ով:

2025 թվականին ՀՀ արտահանման ծավալները կազմել են 3,211.4 մլրդ դրամ, ինչը 36.5%-ով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանման ծավալները կազմել են 1,227.8 մլրդ դրամ կամ ընդհանուրի 38.2%, ինչը 2024 թվականի ցուցանիշից ցածր է 0.3%-ով:

Աղյուսակ 2. ՀՀ արտաքին և փոխադարձ առևտրի ընդհանուր ապրանքաշրջանառությունը (մլրդ դրամ)

Գործարքի բնույթը	*Արտահանում*		*Ներմուծում*		*Ընդամենը*	
	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.
Ընդամենը, այդ թվում՝	**5,059.5**	**3,211.4**	**6,736.0**	**5,052.9**	**11,795.5**	**8,264.2**
Փոխադարձ առևտուր	**1,232.1**	**1,227.8**	**3,782.4**	**1,942.7**	**5,014.5**	**3,170.5**
Արտաքին առևտուր	**3,827.4**	**1,983.5**	**2,953.6**	**3,110.2**	**6,781.0**	**5,093.7**

2025 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել էր ապահովել 2,720.3 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր: Տարեկան ծրագրային ցուցանիշներում կատարված փոփոխությունների համաձայն տարեկան ճշտված ծրագրային ցուցանիշը կազմել է 2,718.4 մլրդ դրամ: 2025 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի կատարողականը կազմել է 2,725.2 մլրդ դրամ, որը ՀՀ պետական բյուջեով ճշտված ծրագրային ցուցանիշի նկատմամբ կազմել է 100.3% (Գծապատկեր 2), կամ 6.8 մլրդ դրամով ավել:

Գծապատկեր 2. Հարկային եկամուտների և պետական տուրքերի կատարողականը 2023 - 2025թթ., (մլրդ դրամ)



Հարկատեսակների և վճարների տեսակարար կշիռը հարկային եկամուտներում ներկայացված է Գծապատկեր 3-ում: 2023-2025թթ. հարկային եկամուտների և պետական տուրքերի մուտքերում ամենամեծ տեսակարար կշիռն ունեցել են ավելացված արժեքի հարկը, եկամտային հարկը և շահութահարկը (Գծապատկեր 4):

Գծապատկեր 3. 2025թ. Հարկատեսակների և վճարների տեսակարար կշիռը հարկային եկամուտներում



Գծապատկեր 4. 2023 - 2025թթ. Հարկային եկամուտներ և պետական տուրք / ՀՆԱ կառուցվածքը



2025 թվականի ընթացքում հարկ վճարողներին վերադարձվել է շուրջ 409.1 մլրդ դրամ (ներառյալ՝ հիփոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը և սոցիալական կրեդիտները), ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշից ավել է շուրջ 16.6 մլրդ դրամով կամ 4.2%-ով (Գծապատկեր 5): Աճը հիմնականում պայմանավորված է հիփոթեքի տոկոսագումարների դիմաց վերադարձված և սոցիալական ծախսերի մասով փոխհատուցված գումարների աճով:

Գծապատկեր 5. 2023 - 2025թթ. ՀՀ բյուջեից փոխհատուցված (վերադարձված) գումարներ



ՀՀ բյուջեից փոխհատուցված (վերադարձված) առանձին հարկատեսակների գումարների տեսակարար կշիռը ընդհանուր փոխհատուցված (վերադարձված) գումարի մեջ ներկայացված է Գծապատկեր 6-ում: Ընդհանուր առմամբ ՀՀ բյուջեից փոխհատուցվել (վերադարձվել) է՝ ԱԱՀ-ի գծով 279.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 290.2 մլրդ դրամի դիմաց, եկամտային հարկի գծով՝ 110.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 88.7 մլրդ դրամի դիմաց, իսկ ակցիզային հարկի գծով՝ 11.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 11.2 մլրդ դրամի դիմաց:

Գծապատկեր 6. 2025թ. Առանձին հարկատեսակներով փոխհատուցված (վերադարձված) գումարների տեսակարար կշիռը / ՀՀ բյուջեից փոխհատուցված (վերադարձված) գումարում



1.2 ՀԱՐԿԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

2025 թվականին ԱԱՀ-ի մուտքերը կազմել են 914.3 մլրդ դրամ: 2024 թվականի համեմատ ԱԱՀ-ի մուտքերն աճել են 158.4 մլրդ դրամով կամ 21.0%-ով (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. 2023 - 2025թթ. ԱԱՀ-ի մուտքերը (մլրդ դրամ)

Ցուցանիշը	***2023***	***2024***	***2025***
ԱԱՀ, այդ թվում՝	767.2	755.9	914.3
ԱԱՀ ներքին շրջանառությունից	250.2	320.7	438.0
ԱԱՀ երրորդ երկրներից ներմուծումից	359.0	285.1	319.8
ԱԱՀ ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծումից	158.0	150.0	156. 5

2025 թվականին ԱԱՀ-ի մուտքերից 476.3 մլրդ դրամն ապահովվել է ՀՀ ներմուծվող ապրանքներից, այդ թվում 156.5 մլրդ դրամը՝ ԵԱՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող ապրանքներից, իսկ 438.0 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից:

2025 թվականին 2024 թվականի համեմատ ներքին շրջանառությունից ԱԱՀ-ն աճել է 117.3 մլրդ դրամով կամ 36.6%-ով, երրորդ երկրներից ՀՀ ներմուծվող ապրանքներից ԱԱՀ-ն աճել է 34.7 մլրդ դրամով կամ 12. 2%-ով, իսկ ԵԱՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող ապրանքներից ԱԱՀ-ն աճել է 6. 5 մլրդ դրամով կամ 4.3%-ով:

ԱԱՀ-ի գծով մուտքերի վրա ազդող հիմնական դրական գործոններից են հանդիսացել ներքին տնտեսական ակտիվության աճը՝ տնտեսական գործունեության ոլորտներում ստեղծված ավելացված արժեքների և սպառման ծավալների ավելացումը, հարկունակ ներմուծման ծավալների աճը 3-րդ երկրներից ներմուծումների մասով, իսկ բացասական գործոններից են հարկունակ ոլորտների իրացման շրջանառությունների (ավելացված արժեքների) կշռի նվազումը ոչ հարկունակ ոլորտների համեմատ, ինչպես նաև հարկունակ ներմուծման ծավալների կրճատումը ԵՏՄ երկրներից ներմուծումների մասով:

Ոլորտային մակարդակով ԱԱՀ-ի մուտքերի վրա դրական ազդեցությունն են թողել շինարարության ոլորտի հարկ վճարողների կողմից վճարված 57.1 մլրդ դրամ ԱԱՀ-ի գումարները՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 37.7 մլրդ դրամով կամ շուրջ 66.0%-ով:

Նշված մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է կառուցապատողների կողմից նախորդ տարիներում կատարված շինարարությունների՝ (հիմնականում բնակարանային շինարարության մասով) 2025թ.-ին հանձնման (սեփականության իրավունքի օտարման) հանգամանքով:

2025 թվականին հարկ վճարողներին վերադարձված ԱԱՀ-ի գումարների կառուցվածքը ներկայացված է ստորև:

Միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների մասով միասնական հաշվին մուտքագրված գումարը կազմել է 278.9 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ նվազել է 10.6 մլրդ դրամով կամ 3.7%-ով:

2025թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում Tax free հաշիվներով ԱԱՀ-ի վերադարձված գումարը կազմել է 605.6 մլն դրամ, ինչը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 7.6%-ով կամ 42.9 մլն դրամով:

ԱԱՀ-ի գծով մուտքերի վրա ազդող գործոններից թերևս հատկանշական է գնաճի գործոնը, ընդ որում, 2025 թվականին սպառողական գների ինդեքսը կազմել է 3.3%, ներմուծման գները աճել են 2.2%-ով, իսկ դեֆլատորի աճը կազմել է 3.2%, այն պարագայում, որ 2025 թվականի բյուջեով դեֆլատորի աճը կանխատեսվել էր 2.5%-ի, իսկ ՍԳԻ-ի աճը 3.6%-ի չափով:

Մյուս առանցքային գործոնը ԱԱՀ-ի գծով վերադարձված գումարների էական կրճատումն է, որն ունեցել է դրական ազդեցություն: Մասնավորապես 2025 թվականին հարկ վճարողներին է վերադարձվել 279.5 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա ցուցանիշից պակաս է 10.6 մլրդ դրամով կամ 3.7%-ով, այն պարագայում, երբ 2024-2023 թվականների համեմատականով վերադարձվել էր շուրջ 1.8 մլրդ դրամով ավել ԱԱՀ գումար: Վերոգրյալը պայմանավորված է հիմնականում հարկունակ ներմուծման ծավալների աճի տեմպի՝ ներքին սպառման ծավալների աճի տեմպի համեմատ էական կրճատմամբ:

2025թ.-ից սկսված յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջացած և Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային չհամարվելու դեպքում փոխհատուցվող գումարը մուտքագրվում է հարկ վճարողի միասնական հաշվին՝ առանց ուսումնասիրության և

ավտոմատ եղանակով: 2025թ.-ի արդյունքներով առանց ուսումնասիրության և ավտոմատ եղանակով՝ հարկ վճարողների միասնական հաշվին փոխանցվել է 16. 8 մլրդ դրամ:

ԱԱՀ-ի գծով մուտքերի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում 2025 թվականին կազմել է 33.6% (Գծապատկեր 7):

Գծապատկեր 7: 2023 - 2025թթ. ԱԱՀ-ի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, ԱԱՀ-ի հավելաճի տեմպը



ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

2025 թվականին շահութահարկի մուտքերը կազմել են 401.5 մլրդ դրամ՝ 2024 թվականի համեմատ աճելով 65.8 մլրդ դրամով կամ 19.6%-ով (Աղյուսակ 4): 2025 թվականի շահութահարկի մուտքերից 367.9 մլրդ դրամն ապահովվել է ռեզիդենտ շահութահարկ վճարող կազմակերպությունների կողմից գանձված գումարներից, իսկ 33.6 մլրդ դրամը՝ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարող կազմակերպությունների կողմից գանձված գումարներից:

Աղյուսակ 4. 2023 - 2025թթ. շահութահարկի մուտքերը (մլրդ դրամ)

Ցուցանիշը	***2023***	***2024***	***2025***
Շահութահարկ, այդ թվում՝	321.5	335.7	401.5
շահութահարկ ռեզիդենտից	297.0	310.1	367.9
շահութահարկ ոչ ռեզիդենտից	24.5	25.6	33.6

Շահութահարկի մուտքերի վրա դրական ազդեցությունն են ունեցել բանկային ոլորտի հարկ վճարողների կողմից վճարված 83.8 մլրդ դրամ շահութահարկի գումարները՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 24.3 մլրդ դրամով կամ շուրջ 29.0%-ով: Նշված մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է բանկերի նախորդ տարվա նկատմամբ շահույթների աճի հանգամանքով:

2025 թվականին ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտներից պահված հարկերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 8.0 մլրդ դրամով կամ 31.2%-ով, ինչը պայմանավորված է շահութահարկի տարբեր դրույքաչափերով հարկվող և աղբյուրի մոտ պահվող եկամուտների հարկման բազաների աճով:

Շահութահարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում 2025 թվականին կազմել է 14.7%՝ 2024 թվականի համեմատ աճելով 0.7%-ով (Գծապատկեր 8):

Գծապատկեր 8: 2023 - 2025թթ. շահութահարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, շահութահարկի հավելաճի տեմպը



ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

2025 թվականի եկամտային հարկի մուտքերը կազմել են 726.9 մլրդ դրամ: 2024 թվականի համեմատ մուտքերն աճել են 76.8 մլրդ դրամով կամ 11.8%-ով:

2025 թվականին եկամտային հարկի մուտքերը, առանց վարկառուներին և համավարկառուներին վերադարձված եկամտային հարկի գումարների, կազմել են 631.3 մլրդ դրամ, որը 2024 թվականի փաստացի մուտքերի համեմատ աճել է 49.8 մլրդ դրամով կամ 8.6%-ով: (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5. 2023-2025թթ. եկամտային հարկի մուտքերը (մլրդ դրամ)

Ցուցանիշ	***2022***	***2023***	***2024***
Եկամտային հարկ	606.5	650.1	726.9

2025 թվականի ընթացքում հարկ վճարողներին վերադարձվել է շուրջ 116.3 մլրդ դրամ (ներառյալ՝ հիփոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը և սոցիալական կրեդիտները), ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշից ավել է շուրջ 27.1 մլրդ դրամով կամ 30.4%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է հիփոթեքի տոկոսագումարների դիմաց վերադարձված և սոցիալական ծախսերի մասով փոխհատուցված գումարների աճով:

Վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների չափով վերադարձվել է 95.6 մլրդ դրամ եկամտային հարկի գումար, ինչը նախորդ տարվա ցուցանիշից ավել է 27.0 մլրդ դրամով կամ 39.4%-ով:

Սոցիալական ծախսերի մասով վերադարձվել է 5.8 մլրդ դրամ, ընդ որում՝ 2024թ. ընթացքում նույն ցուցանիշը կազմել էր ընդամենը 339.5 մլն դրամ:

Վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով վերադարձվել է 301.5 մլն դրամ եկամտային հարկի գումար, ինչը նախորդ տարվա ցուցանիշից ավել է 35.9 մլն դրամով կամ 13.5%-ով:

ՀՀ կառավարության 28.09.2017թ. N1371-Ն որոշմամբ սահմանված կարգով շահաբաժիններից վճարված եկամտային հարկից փոխհատուցվել է 14.2 մլրդ դրամ գումար, ինչը նախորդ տարվա ցուցանիշից պակաս է 5.7 մլրդ դրամով կամ 28.6%-ով:

Եկամտային հարկի աճը հիմնականում պայմանավորված է 2025 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների աշխատատեղերի և միջին աշխատավարձերի աճերով: Մասնավորապես՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աշխատատեղերի աճը կազմել է 5.2%, իսկ միջին ամսական անվանական աշխատավարձի աճը՝ 5.2%: Նշված երկու գործոնների համադրմամբ, եկամտային հարկի հարկման բազայի նպաստումը եղել է շուրջ 10.6% (Գծապատկեր 9):

Գծապատկեր 9: 2023 - 2025թթ. եկամտային հարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, եկամտային հարկի հավելաճի տեմպը



ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ

2025 թվականին շրջանառության հարկի մուտքերը կազմել են 79.2 մլրդ դրամ: 2024 թվականի համեմատ շրջանառության հարկի մուտքերն աճել են 18.3 մլրդ դրամով կամ 30.1%-ով:

Շրջանառության հարկի գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով՝ շրջանառության հարկի դրույքաչափերի բարձրացմամբ, ինչպես նաև տնտեսական ակտիվության աճով, հատկապես այն ոլորտներում, որտեղ գործում են շրջանառության հարկով հարկվող գործունեություն ծավալող հարկ վճարողները: Մասնավորապես, մշակող արդյունաբերության ոլորտում տնտեսական ակտիվությունն աճել է՝ 23.8%-ով, շինարարության ոլորտում՝ 40.0%-ով, առևտրի ոլորտում՝ 14.2%-ով, փոխադրումների և պահեստային տնտեսության ոլորտում՝ 10.5%-ով, կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտում՝ 9.3 %-ով, տեղեկատվության և կապի ոլորտում՝ 60.1%-ով, իսկ մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտում՝ 28.9%-ով:

Շրջանառության հարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում 2025 թվականին կազմել է 2.9%՝ աճելով 0.4%-ով (Գծապատկեր 10):

Գծապատկեր 10: 2023 - 2025թթ. շրջանառության հարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, շրջանառության հարկի հավելաճի տեմպը



ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

2025 թվականին ակցիզային հարկի մուտքերը կազմել են 164.3 մլրդ դրամ: 2024 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 17. 8 մլրդ դրամով կամ 12.1%-ով (Աղյուսակ 6):

Աղյուսակ 6. 2023 - 2025թթ. ակցիզային հարկի մուտքերը (մլրդ դրամ)

Ցուցանիշը	2023	2024	2025
Ակցիզային հարկ, այդ թվում՝	149.4	146.5	164. 3
ՀՀ-ում արտադրվող ապրանքներից	73.4	86.5	89.8
երրորդ երկրներից ներմուծվող ապրանքներից	55.4	53.5	73. 2
ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար	20.6	6.5	1. 3

Ակցիզային հարկի մուտքերի մեջ դրական ազդեցություն են ունեցել մաքսային մարմինների կողմից գանձված ակցիզային հարկի մուտքերը, մասնավորապես՝ մաքսային մարմինների կողմից գանձված ակցիզային հարկի մուտքերը 2025 թվականին կազմել են 73.2 մլրդ դրամ, ինչը 2024 թվականի համեմատ աճել է 19.6 մլրդ դրամով կամ 36.7%-ով: Միաժամանակ, ակցիզային հարկի գծով ընդհանուր մուտքերի վրա իրենց բացասական ազդեցությունն են ունեցել հարկային մարմինների կողմից գանձված ակցիզային հարկի մուտքերը: Հարկային մարմինների կողմից գանձված ակցիզային հարկի մուտքերի մեջ էական բացասական ազդեցություն են ունեցել ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար գանձվող ակցիզային հարկի մուտքերը, մասնավորապես՝ ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար գանձվող ակցիզային հարկի մուտքերը նախորդ տարվա համեմատ նվազել են 5.2 մլրդ դրամով կամ 79.9%-ով, մինչդեռ ՀՀ-ում արտադրվող ապրանքների համար գանձվող ակցիզային հարկի մուտքերն աճել են 3.3 մլրդ դրամով կամ 3.8%-ով:

Ակցիզային հարկի գծով մուտքերի վրա բացասական ազդեցությունը բացատրվում է հիմնականում 2025 թվականին ակցիզային հարկով հարկվող ԵԱՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների ծավալների նվազմամբ:

Ստորև ներկայացվում են ակցիզային հարկով հարկվող այն ապրանքների արտադրության և ներմուծման ծավալների փոփոխությունները, որոնք էական ազդեցություն են ունեցել 2025 թվականի ակցիզային հարկի մուտքերի վրա: Մասնավորապես՝

1) գարեջրի արտադրության ծավալները 2025 թվականին կազմել են 32.1 մլն լիտր, նախորդ տարվա նկատմամբ աճելով 10.5%-ով կամ 3.1 մլն լիտրով, իսկ ներմուծման ծավալներն աճել են 39.1%-ով կամ 3.4 մլն լիտրով՝ կազմելով 12.0 մլն լիտր,

2) գինիների արտադրության ծավալները 2025 թվականին կազմել են 7,692.7 հազ. Լիտր՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 23.3%-ով կամ 2.3 մլն լիտրով, իսկ ներմուծման ծավալներո աճել են 61.5%-ով կամ 731.1 հազ. լիտրով՝ կազմելով 2.0 մլն լիտր,

3) պտուղներից և (կամ) հատապտուղներից պատրաստված օղու (ԱՏԳ ԱԱ 2208 90 480 0) արտադրության ծավալները 2025 թվականին նվազել են շուրջ 31 անգամ,

4) ծխախոտի արտադրության ծավալները կազմել են 2.5 մլրդ տուփ (տուփի մեջ 20 հատ սիգարետ), նախորդ տարվա նկատմամբ աճելով 35.4%-ով կամ 654.4 մլն տուփով, իսկ ներմուծման ծավալները աճել են 9.6%-ով կամ 8.4 մլն տուփով, կազմելով 87.4 մլն տուփ:

Ակցիզային հարկի գծով պետական բյուջեի հարկային եկամուտների վրա իր բացասական ազդեցությունն է թողել նաև վերադարձված ակցիզային հարկի գումարների աճը: 2025 թվականին ակցիզային հարկի գծով ընդհանուր վերադարձված գումարները կազմել են 11.5 մլրդ դրամ, նախորդ տարվա նկատմամբ՝ աճելով 0.2 մլրդ դրամով կամ 2.2%-ով: Մասնավորապես, ՀՀ Կառավարության 24.08.2017թ. թիվ 1048-Ն որոշման համաձայն՝ ակցիզային հարկի (ՀՀ տարածքում ձեռք բերված և արտահանված ապրանքների) փոխհատուցված գումարը 2025 թվականին կազմել է 2.7 մլրդ դրամ, ինչը 4.2 մլրդ դրամով կամ 60.3%-ով պակաս է նախորդ տարվա համեմատ, իսկ ՀՀ կառավարության 08.06.2023թ. թիվ 904-Ն որոշման համաձայն՝ ակցիզային հարկի վերադարձված գումարը 2025 թվականին կազմել է 7.9 մլրդ դրամ, ինչը 4.6 մլրդ դրամով կամ 139.8%-ով ավել է նախորդ տարվա համեմատ: Միաժամանակ, 2025 թվականին ակցիզային հարկի փոխհատուցվող գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումարը կազմել է 429.7 մլն դրամ, ինչը 412.0 մլն դրամով կամ 49.0%-ով պակաս է, քան նախորդ տարվա ցուցանիշը և ՀՀ Կառավարության 28.09.2017թ. թիվ 1208-Ն որոշման համաձայն՝ ակցիզային հարկի (շարժիչային յուղերի) փոխհատուցված գումարը 2025 թվականին կազմել է 403.6 մլն դրամ, ինչը 185.8 մլն դրամով կամ 85.3%-ով ավել է, քան նախորդ տարվա ցուցանիշը:

2025 թվականին ակցիզային հարկը կազմել է հարկային եկամուտների 6.0%-ը՝ 2024 թվականի համեմատությամբ նվազելով 0.1%-ով (Գծապատկեր 11):

Գծապատկեր 11: 2023 - 2025թթ. ակցիզային հարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, ակցիզային հարկի հավելաճի տեմպը



ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐ

2025 թվականին բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի մուտքերը կազմել են 71.0 մլրդ դրամ: 2024 թվականի համեմատ բնապահպանական հարկը և բնօգտագործման վճարը նվազել են 29. 4 մլրդ դրամով կամ 29. 3%-ով (Աղյուսակ 7):

Աղյուսակ 7. 2023 - 2025թթ. բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի մուտքերը (մլրդ դրամ)

Ցուցանիշը	***2023***	***2024***	***2025***
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար, այդ թվում՝	60.6	100.5	71. 0
հարկային մարմնի կողմից ապահովված	53.2	91.3	56.4
մաքսային մարմինների կողմից ապահովված	7.4	9.2	14. 6

Նշված մուտքերի մեջ էական բացասական ազդեցությունն են ունեցել հարկային մարմինների կողմից հավաքագրված բնապահպանական հարկերից և բնօգտագործման վճարներից մուտքերը: Մասնավորապես, հարկային մարմինների կողմից հավաքագրված բնապահպանական հարկերից և բնօգտագործման վճարներից մուտքերը կազմել են 56.4 մլրդ դրամ, ինչը 38.2%-ով կամ 34.9 մլրդ դրամով պակաս է նախորդ տարվա ցուցանիշի համեմատ, իսկ մաքսային մարմինների կողմից՝ 14.6 մլրդ դրամ, ինչը 59.2%-ով կամ 5.4 մլրդ դրամով ավել է նախորդ տարվա ցուցանիշի համեմատ:

Գծապատկեր 12: 2023 - 2025թթ. հարկային և մաքսային մարմինների կողմից ապահովված բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի տեսակարար կշիռները



Բնապահպանական հարկերից և բնօգտագործման վճարների գծով մուտքերի մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունի արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթին, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 33.6 մլրդ դրամով կամ 43.0%-ով:

Համաձայն ՀՀ ՎԿ տվյալների պղնձի խտանյութի արտադրության ծավալները նվազել են 0.4%-ով, ցինկի խտանյութի ծավալներն աճել են 10.5%-ով, իսկ մոլիբդենի խտանյութի արտադրության ծավալները նվազել են ընդամենը 13.6%-ով:

Արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի նվազումը հիմնականում պայմանավորված է «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ-ի 2024թ.-ի համեմատ 19.2 մլրդ դրամով կամ 36.3%-ով ավելի քիչ կանխավճար կատարելու հանգամանքով:

Բացի այդ նվազումը պայմանավորված է նաև օրենսդրական փոփոխությունների արդյունքում ռոյալթիի Բ3 բազայի նվազմամբ, մասնավորապես՝ 2025 թվականին 2024 թվականի համեմատ ռոյալթիի Բ3 բազայի հիման վրա ռոյալթիի մուտքերը պակասել են 4.8 մլրդ դրամով:

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար մուտքերը 2025 թվականին կազմել են 1.3 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա նկատմամբ աճել է 101. 0 մլն դրամով կամ 7.8%-ով: Նշված աճի պատճառ է հանդիսացել այլ պետություններում գրանցված տրանսպորտային

միջոցների՝ ՀՀ սահմանը հատող մարդատար տրանսպորտային մեքենաների քանակի ավելացումը:

ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող բնապահպանական հարկի գծով մուտքերը կազմել են 13.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 5.3 մլրդ դրամով կամ 67.7%-ով: Աճը պայմանավորված է ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ծավալների աճով:

Սիրողական ձկնորսություն կամ որս կատարելու համար՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից գանձվող բնապահպանական հարկի մուտքերը նախորդ տարվա համեմատ նվազել են 1. 3 մլն դրամով կամ 17.2 %-ով, ինչը պայմանավորված է հիմնականում ՀՀ սիրողական ձկնորսություն կամ որս կատարող անձանց քանակի նվազումով:

ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող բնապահպանական հարկի մուտքերը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ նվազել են 0.5 մլրդ դրամով կամ 20%-ով, որը պայմանավորված է հիմնականում շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման քանակի նվազումով:

Գծապատկեր 13: 2023 - 2025թթ. բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում և դրանց հավելաճի տեմպը



ՄԱՔՍԱՏՈՒՐՔ

2025 թվականին ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով սահմանված ներմուծման մաքսատուրքերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի (երեքը միասին՝

Միության տուրքեր) և ֆիզիկական անձանցից գանձվող միասնական մաքսային վճարի գծով մուտքերը կազմել են 75.2 մլրդ դրամ: 2024 թվականի համեմատ մաքսատուրքի մուտքերը նվազել են 1. 0 մլրդ դրամով կամ 1.3%-ով (Աղյուսակ 8):

Աղյուսակ 8. 2023 - 2025թթ. մաքսատուրքերի, Միության տուրքերի և միասնական մաքսային վճարի գծով մուտքերը (մլրդ դրամ)

Ցուցանիշը	***2023***	***2024***	***2025***
Միության օրենսգրքով սահմանված վճարներ, այդ թվում՝	95.0	91.5	84.0
Մաքսատուրք, որից՝	75.3	76.2	75.2
մաքսատուրքեր և Միության տուրքեր	73.0	74.1	69.5
այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներից	-114.4	-52.9	-55.9
մաքսատուրքեր Ֆիզիկական անձանցից (ԵԱՏՄ երկրների միջև չբաշխվող)	2.3	2.1	5.7
Միասնական մաքսային վճար ֆիզիկական անձանցից	19.7	15.3	8.8

Մասնավորապես, 2025 թվականին ԵԱՏՄ շրջանակներում ստացված մաքսատուրքերի գումարը կազմել է 69. 5 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 4. 6 մլրդ դրամով կամ 6. 2%-ով: 2025 թվականին ֆիզիկական անձանց կողմից երրորդ երկրներից ներմուծված ապրանքների գծով մաքսատուրքերի գումարը կազմել է 5. 7 մլրդ դրամ, ինչը 3. 6 մլրդ դրամով կամ 176.6%-ով ավել է նախորդ տարվա ցուցանիշից:

Միաժամանակ, 2025 թվականին ՀՀ-ում գանձված մաքսատուրքը կազմել է 131.1 մլրդ դրամ, որից 125.4 մլրդ դրամը բաշխվել է ԵԱՏՄ երկրների միջև, իսկ ՀՀ պետական բյուջե ԵԱՏՄ երկրներից ստացված մաքսատուրքը կազմել է 69. 5 մլրդ դրամ: Այսինքն 2025 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն Հայասատնի Հանրապետության կողմից հավաքագրված մաքսատուրքից պակաս է ստացել 55.9 մլրդ դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է Ռուսաստանի Դաշնության դեմ Եվրամիության և արևմուտքի մի շարք երկների կողմից սահմանված պատժամիջոցներով:

Գծապատկեր 14: 2023 - 2025թթ. ներմուծման մաքսատուրքի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, ներմուծման մաքսատուրքի հավելաճի տեմպը



ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ

Նպատակային սոցիալական վճարի 2025 թվականի մուտքերը կազմել են 116.5 մլրդ դրամ՝ 2024 թվականի համեմատ աճելով 13.1 մլրդ դրամով կամ 12.7%-ով:

Նպատակային սոցիալական վճարի աճը հիմնականում պայմանավորված է 2025 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների աշխատատեղերի և միջին ամսական անվանական աշխատավարձի աճով:

ԱՅԼ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ հարկային եկամուտները[3] 2025 թվականին կազմել են 80.5 մլրդ դրամ, որը 2024 թվականի համեմատ նվազել է 850.9 մլն դրամով կամ 1.1%-ով:

Այլ հարկային եկամուտների 51.1 մլրդ դրամը՝ 63.5%-ը կազմում է դրոշմանիշային վճարը: 2024 թվականի համեմատ դրոշմանիշային վճարը աճել է 7.2%-ով կամ 3.4 մլրդ դրամով:

2025 թվականին ՀՀ մաքսային մարմինների կողմից ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություններից գանձվող միասնական մաքսային վճարներից մուտքերը կազմել են 8,8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 42.2%-ով կամ 6.5 մլրդ դրամով: Նվազումը բացատրվում է հիմնականում ֆիզիկական անձանց կողմից 3-րդ երկրներից ՀՀ տարածք ներմուծված մարդատար ավտոմեքենաների համար գանձվող վճարների նվազմամբ: 2025 թվականին նվազել են ինչպես ՀՀ ներմուծված մարդատար

[3] Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, արտոնագրային հարկը, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, միասնական մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ:

ավտոմեքենաների քանակը, այնպես էլ դրանց մասով գանձվող գումարները: Մասնավորապես՝ 2025 թվականին ՀՀ ներմուծված 5,567 մարդատար ավտոմեքենաների համար գանձվել է 13,303 մլն դրամ, իսկ 2024 թվականին 2,315 ավտոմեքենաների համար՝ 7,059 մլն դրամ, այսինքն 2025 թվականին ՀՀ ներմուծված մարդատար ավտոմեքենաների համար գանձված վճարները նվազել են 46.9%-ով կամ 6,244 մլն դրամով, ընդ որում, 2025 թվականին 1 մարդատար ավտոմեքենայի հաշվով գանձվող վճարը միջինում կազմել է 3.0 մլն դրամ, ինչը 27.6%-ով կամ 0.7 մլն դրամով ավել է նախորդ տարվա նույն ցուցանիշից: Վերոնշյալ նվազումը հիմնականում բացատրվում է նրանով, որ 2025 թվականին ՀՀ են ներմուծվել տարեթվով ավելի թարմ և արժեքով ավելի մատչելի մարդատար ավտոմեքենաներ:

2025 թվականին հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով մուտքերը կազմել են 10.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 10.1%-ով կամ 1.0 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գծով մուտքերով: Մասնավորապես՝ 2025 թվականին ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գծով մուտքերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 0.9 մլրդ դրամով կամ 10.7%-ով:

Միաժամանակ, ռադիոհաճախականության թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը նվազել են 15.5%-ով կամ 5.0 մլն դրամով՝ կազմելով 26.5 մլն դրամ:

Ճանապարհային հարկերը 2025 թվականին կազմել են 6.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 2.9%-ով կամ 181.6 մլն դրամով: Մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է եղել տնտեսական ակտիվության աճով, որի հետևանքով աճել է Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող սուբյեկտների մուտքն ու ելքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու դեպքերի աճով:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ

2025 թվականին պետական տուրքի գումարները կազմել են 95.8 մլրդ դրամ: 2024 թվականի համեմատ պետական տուրքի մուտքերը աճել են 15.3 մլրդ դրամով կամ 19.0%-ով:

Մասնավորապես, դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար 2025 թվականի պետական տուրքը կազմել է 3.2 մլրդ դրամ, որը 25.7%-ով կամ 0.6 մլրդ դրամով ավել է, քան նախորդ տարվա ցուցանիշը: Նշված աճը պայմանավորված է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճենների (կրկնօրինակների) քանակի աճով:

ՀՀ հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար 2025 թվականի պետական տուրքը կազմել է 2.7 մլրդ դրամ, ինչը 1.5%-ով կամ 42. 0 մլն դրամով պակաս է նախորդ տարվա փաստացի ցուցանիշների համեմատ, որը պայմանավորված է պետական տուրքի վճարում նախատեսող հյուպատոսական ծառայությունների և գործողությունների քանակի նվազմամբ:

Պետական գրանցման համար 2025 թվականի պետական տուրքի գումարը կազմել է 7.1 մլրդ դրամ, ինչը 4.8%-ով կամ 0.3 մլրդ դրամով ավել է նախորդ տարվա ցուցանիշից: Նշված պետական տուրքի աճը պայմանավորված է պետական գրանցման ենթակա գործարքների աճով:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար 2025 թվականի պետական տուրքի գումարը կազմել է 4.7 մլրդ դրամ, ինչը 40.8%-ով կամ 1. 3 մլրդ դրամով աճել է քան նախորդ տարվա ցուցանիշը: Նշվածը պայմանավորված է պետական տուրքի վճարում պահանջող ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների քանակի աճով:

Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար պետական տուրքի 2025 թվականի գումարը կազմել է 51.9 մլրդ դրամ, ինչը 30.9%-ով կամ 12.2 մլրդ դրամով ավել է նախորդ տարվա ցուցանիշից, ինչը պայմանավորված է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ ստանալու քանակի աճով:

Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար պետական տուրքի 2025 թվականի գումարը կազմել է 25.1 մլրդ դրամ, ինչը 2.0 %-ով կամ 0.4 մլրդ դրամով ավել է նախորդ տարվա ցուցանիշից: Նշված պետական տուրքի աճը հիմնականում

պայմանավորված է խաղատների գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տրամադրելու համար գանձնվող պետական տուրքի մուտքերի աճով, մասնավորապես՝ 2025 թվականին խաղատների գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տրամադրելու համար գանձնվող պետական տուրքի մուտքերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 37.3%-ով կամ 8.7 մլրդ դրամով:

Աղյուսակ 9. 2023 - 2025թթ. պետական տուրքի մուտքերը (մլն դրամ)

Ցուցանիշը	***2023***	***2024***	***2025***
Պետական տուրք, այդ թվում[4]	67,448.8	80,462.4	95,772.6
Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), այլ նյութերի կրկնօրինակ տալու համար	2,744.5	2,573.2	3,235.6
Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար	2,786.6	2,771.0	2,729.1
Պետական գրանցման համար	6,529.3	6,846.5	7,172.7
Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար	3,038.8	3,357.7	4,728.7
Լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար	29,582.5	39,693.1	51,940.0
Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար	22,283.0	24,672.4	25,153.8

[4] Աղյուսակում ներառված են առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող պետական տուրքի տեսակները:

II. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

2.1 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2025 թվականին պետական եկամուտների վարչարարության ոլորտում բարեփոխումներն իրականացնելիս հարկային և մաքսային մարմիններն առաջնորդվել են ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրով, ՀՀ կառավարության 18.11.2021թ. N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրով և ՀՀ կառավարության 12.12.2019թ. N 1830-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ՊԵԿ զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագրով:

2025 թվականի ընթացքում Կոմիտեն, հիմք ընդունելով որդեգրած բարեփոխումների հիմնական ուղղությունները, հետամուտ է եղել հարկային և մաքսային ոլորտում հետևյալ ուղղությունների իրագործմանը.

1. էլեկտրոնային համակարգերի և ենթակառուցվածքների արդիականացմանը,
2. հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացմանը և մատուցվող ծառայությունների ընդլայնմանը,
3. հարկային հսկողության ռիսկերի կառավարման համակարգերի կատարելագործմամբ ստվերի կրճատմանը,
4. մաքսային ռիսկերի կառավարման գործիքակազմի կատարելագործմամբ մաքսային հսկողության արդյունավետության բարձրացմանը,
5. «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի կատարելագործմանը,
6. միջազգային համագործակցության ամրապնդմանը:

2025 թվականին շարունակվել են ՀՀ կառավարության 12.12.2019թ. թիվ 1830-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ՊԵԿ զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարության իրագործմանն ուղղված աշխատանքները: Ռազմավարության շրջանակներում աշխատանքներն իրականացվել են հետևյալ ուղղություններով.

1. էլեկտրոնային կառավարման համակարգերի կատարելագործում, հարկ վճարողներին թվայնացված ծառայությունների մատուցում,
2. վարչարարության արդյունավետության բարձրացում, ստվերի դեմ պայքար,
3. ենթակառուցվածքների արդիականացում,

4. հանրության հետ երկխոսության ընդլայնում, թափանցիկության մակարդակի բարձրացում,

5. մարդկային ռեսուրսների կառավարման մեխանիզմների բարելավում:

Վերը նշված ուղղություններով իրականացված աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներառված է հաշվետվության բաժիններում:

Միաժամանակ, 2025 թվականի տարեվերջին ՀՀ ՊԵԿ նախագահի հրամանով հաստատվել են Հարկային վարչարարության բարեփոխումների ու մաքսային մարմնի առաջիկա տարիների զարգացման ռազմավարական ծրագրերը: Նշված ծրագրերով սահմանվել են ՊԵԿ միասնական առաքելությունն ու տեսլականը, որոնք որպես ուղենիշ են ծառայելու ՊԵԿ համակարգի բոլոր ստորաբաժանումների գործունեության իրականացման ու ռազմավարական նպատակների իրագործման գործընթացներում:

Ռազմավարական ծրագրերով սահմանված նպատակներն են՝

Հարկային մարմնի մասով.

ա) հարկային կարգապահության ամրապնդմանն ուղղված հարկային օրենսդրության կատարելագործում,

բ) կարիքների գնահատման հիման վրա մատուցվող ծառայությունների ընդլայնում,

գ) հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգերի կատարելագործում,

դ) հարկային կարգապահության ռիսկերի կառավարման բարելավմամբ կարգապահության բարձրացում և ստվերի կրճատում,

ե) մարդկային ռեսուրսների և ներքին կառավարման համակարգերի կատարելագործում:

Մաքսային մարմնի մասով.

ա) անվտանգ և ապահով առևտուր՝ բնակչության և սահմանների անվտանգություն, հսկողական ենթակառուցվածքների արդիականացում, միջազգային ստանդարտներին և պարտավորություններին համապատասխանություն, հանրության մոտ վստահության ամրապնդում,

բ) հարմարավետ՝ առևտրի դյուրինացում ու մրցունակություն, բարենպաստ լոգիստիկ հանգույց, ընդլայնված ծառայությունների շրջանակ, առավելություններ օրինապահ ԱՏԳ մասնակիցների համար,

գ) նորարար՝ առաջադեմ էլեկտրոնային կառավարման համակարգեր, արհեստական բանականության և մեքենայական ուսուցման գործիքակազմի ներդրում և ընդլայնում,

դ) թիմ՝ կադրային վարչարարության գործընթացների բարելավում, մաքսային մարմնի համալրման ու պահպանման, մասնագիտական կարողությունների շարունակական ընդլայնման, կատարողականի կառավարման, վարձատրության և սոցիալական երաշխիքների արդիականացված համակարգերի ներդրում:

2025 թվականին շարունակվել են ՊԵԿ գործընթացներում կարգապահության ռիսկերի կառավարման համակարգի ամբողջական ինտեգրմանն ու արդյունավետ կիրառմանն ուղղված աշխատանքները՝ հիմնված միջազգային չափանիշների վրա: Այդ համակարգի նպատակն է հարկ վճարողների վարքագծային ռիսկերի գնահատման հիման վրա ընտրել համապատասխան թիրախային գործիքների (աջակցումից հսկողություն) և դրանց կիրառմամբ ապահովել կամավոր կարգապահության բարձր մակարդակ՝ միաժամանակ բարձրացնելով վարչարարության ծախսարդյունավետությանը:

Հարկ է նշել նաև, որ «հարկային մարմնում կարգապահության ռիսկերի կառավարման մեխանիզմների ինտեգրումը» հանդիսանում է Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքի (TADAT) բաղադրիչ: 2025 թվականին ՊԵԿ-ում այդ գործիքով իրականացված գնահատմամբ նշված բաղադրիչն, ընդհանուր առմամբ, դրական է գնահատվել: Այնուամենայնիվ, այս ուղղությամբ շարունակական զարգացումն ու միջազգային չափանիշներին մշտապես համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ 2025 թվականին.

ա) մշակվել ու իրականացվել է կահույքի ոլորտի հարկային կարգապահության բարելավման ծրագիրը (այն ներկայումս ընթացքում է), շարունակվել են 2024թ. հաստատված խոշոր հարկ վճարողների հարկային կարգապահության բարելավման ծրագրով սահմանված միջոցառումները,

բ) հաստատվել է Կարգապահության բարելավման ծրագրերի մշակման նպատակով հարկ վճարողներին ըստ ռիսկայնության դասակարգման ու ծրագրերի արդյունքների գնահատման ուղեցույցը, որի նպատակն է ապահովել ՀՀ ՊԵԿ-ում կարգապահության ռիսկերի կառավարման գործընթացների համակարգված ու միասնական մոտեցումներով իրականացումը,

գ) հաստատվել է հարկային վարչարարության բարեփոխումների ռազմավարական ծրագիրը, որով սահմանվել են կարգապահության ռիսկերի կառավարման գործընթացների զարգացմանն ուղղված ռազմավարական միջոցառումներ,

դ) իրականացվել են կարգապահության ռիսկերի կառավարման կարողությունների ընդլայնմանն ու վերահսկողության գործընթացների արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:

2025 թվականի ընթացքում ՊԵԿ կողմից իրականացվել և մեկնարկել են նաև մի շարք այլ առանցքային բարեփոխումներ, որոնցից առավել հատկանշական են.

- էլեկտրոնային համակարգերի և ենթակառուցվածքների համապարփակ ախտորոշումը և արդիականացումը,
- հարկային ռիսկերի կառավարման համակարգերի կատարելագործմամբ և թվային հետախուզության գործիքների դերի նշանակալի բարձրացմամբ ստվերի կրճատումը,
- բոլոր ուղղություններով վերլուծական նոր գործիքների մշակումը, արհեստական բանականության նոր գործիքների ներդրումը, հսկիչ նշանների համակարգի կատարելագործումը,
- նպաստների վճարման, հարկային ռեզիդենտության տեղեկանքի տրամադրման, աշխատանքային պայմանագրերի կնքման և առողջության համընդհանուր ապահովագրության վճարների վճարման նոր թվային պլատֆորմների մշակումը,
- մաքսային ռիսկերի համակարգի համապարփակ կատարելագործմամբ մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացումը և գործընթացների ժամանակատարության էական նվազումը,
- «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի կատարելագործումը, EXIM տեղեկատվական համակարգի մշակումը, մաքսային ռիսկերի համակարգում արհեստական բանականության գործիքների, մաքսային միասնական հաշվի ներդրման և ցամաքային անցման կետերի նոր միասնական թվային պլատֆորմի մշակման մեկնարկը,
- հարկ վճարողների հետ մարդակենտրոն հաղորդակցման գործիքների և հարթակների ընդլայնումը,
- առաջին անգամ շուրջ 4 տասնյակ երկրների հետ ֆինանսական հաշիվների փոխանակումը,
- միջազգային համագործակցության ընդլայնումը և ՊԵԿ-ի միջազգային դիրքերի ամրապնդումը:

Հաշվի առնելով, որ հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքի (Tax Administration Diagnostic Assessment Tool-TADAT) կիրառմամբ հարկային

վարչարարության արդյունավետության պաշտոնական գնահատում իրականացվել էր 2016 թվականին՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից նախաձեռնվել էր նոր գնահատում, որը և իրականացվել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) փորձագետների կողմից 2025թ. մայիսի 12-ից 27-ն ընկած ժամանակահատվածում:

Գնահատման արդյունքներով փորձագիտական խումբը ներկայացրել է ամփոփ զեկույցը, համաձայն որի, վերջին տարիներին Հայաստանում հարկային վարչարարության բարելավման ուղղությամբ իրականացված աշխատանքները, ընդանուր առմամբ, բարձր են գնահատվել՝ նշելով, որ 2016 թվականին իրականացված գնահատման համեմատ այս տարի իրականացված գնահատման արդյունքերը վկայում են հարկային մարմնի կողմից արձանագրած ակնհայտ առաջընթացի մասին, գերակշիռ ուղղություններով գնահատականները բարելավվել են, սակայն դեռ կան անելիքներ, մասնավորապես՝ 2016թ-ին A-B գնահատական ստացվել էր 30 ցուցանիշից 12-ի համար կամ 40%, ապա 2025թ-ի համար՝ 32-ից 20-ի համար կամ 62.5%-ը: Համապատասխանաբար, կրճատվել է նաև C-D գնահատականների քանակը. 2016թ-ին 30 ցուցանիշից 18-ի դեպքում կամ 60%, իսկ 2025թ-ին՝ 32-ից 12-ի դեպքում կամ 37.5%-ը:

Զեկույցի համաձայն՝ Կոմիտեի <u>ուժեղ կողմերից</u> առանձնացվել են.

- էլեկտրոնային գրանցման, փաստաթղթերի լրացման և վճարման կայացած համակարգը,
- հարկ վճարողների իրազեկման համակարգը (հատկապես՝ այդ նպատակով սոցիալական ցանցերի լայն կիրառությունը),
- միջազգային փորձին համահունչ Հարկային կարգապահության բարելավման ծրագրերի (CIP) մշակումը,
- SS և տվյալների ռիսկերի լավ կառավարումը (համապատասխանություն ISO 27001 ստանդարտին),
- ժամանակային առումով վեճերի լուծման ճշգրիտ մեխանիզմները,
- պլանների հրապարակման շնորհիվ բարձր թափանցիկության ապահովումը:
- Գնահատող խմբի դիտարկմամբ, սակայն դեռևս կան լավարկման անհրաժեշտություն ունեցող մի շարք ոլորտներ, որոնց ուղղությամբ Կոմիտեի կողմից անհրաժեշտ է լրացուցիչ քայլերի իրականացում: Մասնավորապես նշվել է, որ.
- ստուգումների համակարգը և ճիշտ հաշվետվողականությունն ապահովող այլ մեթոդները հետ են մնում միջազգային առաջավոր փորձից,

- ժամանակին վճարման և պարտքի կառավարման գործընթացը լրամշակման կարիք ունի,
- բանկերից տեղեկատվության սահմանափակ հասանելիությունը խոչընդոտ է,
- անհրաժեշտ են վերլուծությունների և տվյալների համադրման ավելի հասուն կարողություններ,
- հարկավոր է բարելավել մարդկային կապիտալի հետ կապված ռիսկերի կառավարման կարողությունները:

Հարկ է նշել, որ գնահատման արդյունքները ներառվել են ՊԵԿ-ի ռազմավարական ծրագրերում և կարողությունների զարգացման գործընթացում: Մասնավորապես.

ՊԵԿ կողմից 2025 թվականին հաստատվել է հարկային վարչարարության բարեփոխումների ռազմավարական ծրագիրը: TADAT գնահատման արդյունքներով ռազմավարական ծրագրում սահմանվել են հետևյալ միջոցառումները.

1) հարկային վարչարարության պարզեցման, փոփոխությունների իրականացման ժամանակ հարկ վճարողների հետ կանոնավոր հետադարձ կապի ապահովման ընթացակարգի մշակում,

2) հարկային կարգապահության ռիսկերի կառավարման մեխանիզմները հարկային մարմի կողմից իրականացվող գործընթացներում ամբողջական ինտեգրում, արդյունավետ կիրառման ապահովում,

3) հարկային ստուգումների գործընթացների բարելավման ծրագրի մշակում,

4) ոլորտային ստվերի և հարկային պոտենցիալի գնահատման միասնական մեթոդաբանության և դրա հիման վրա գնահատման աշխատանքների ավտոմատացման գործիքների մշակում,

5) բողոքարկման արդյունքների հասցեագրման գործընթացի լավարկում,

6) մարդկային ռեսուրսների կառավարման ծրագրի մշակում,

7) բիզնես շարունակականության ապահովման՝ ներքին գործառնական (ինստիտուցիոնալ) ռիսկերի նույնականացման, նվազեցման ընթացակարգերի մշակում (կամ փոփոխություն), դրանց կիրառությանն ու վերահսկողությանն ուղղված գործընթացների ապահովում:

Միաժամանակ, մշակվել և հաստատվել է «Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքի (TADAT) կիրառմամբ Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության արդյունավետության գնահատման արդյունքում հայտնաբերված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ ՊԵԿ նախագահի 2025թ. դեկտեմբերի 8-ի № 1686-Լ հրամանը, որտեղ ներառվել են հարկային վարչարարության բարեփոխումների ռազմավարության մեջ չարտացոլված՝ TADAT գնահատմամբ վերհանված խնդիրների բարեփոխմանն ուղղված միջոցառումները: Միջոցառումների արդյունքները կքննարկվեն եռամսյակային պարբերականությամբ:

2.2 ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

2025 թվականին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից նախաձեռնած հարկային և մաքսային օրենսդրության հիմնական փոփոխությունները կատարվել են հետևյալ ուղղություններով.

2.2.1 Հարկային օրենսդրության հիմնական փոփոխություններ



ՀՀ օրենքներ

1. **«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 29.05.2025թ. ՀՕ-175-Ն օրենքը (ուժի մեջ է 04.07.2025թ.-ից)**

Նշված օրենքով, մասնավորապես, սահմանվել է որ՝

1. օրենսգրքի կիրառության նպատակով «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքով սահմանված կրիպտոակտիվը, այդ թվում՝ էությամբ եզակի համարվող (յուրաքանչյուրն առանձնահատուկ հատկանիշներ ունեցող) և փոխարինելի չհամարվող կրիպտոակտիվը, ինչպես նաև ապակենտրոնացված գրանցամատյանի պահպանման կամ գործարքների վավերացման համար իրականացվող գործունեության արդյունքում ստեղծված կրիպտոակտիվը, հանդիսանում է ակտիվ, բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի իմաստով արժեթղթի կամ ածանցյալ ֆինանսական գործիքի սահմանմանը համապատասխանող կրիպտոակտիվների, «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի իմաստով ֆոնդի փայի (բաժնետոմսի) սահմանմանը համապատասխանող կրիպտոակտիվների և «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի իմաստով բանկային ավանդի (բանկային ավանդի պայմանագրի) սահմանմանը համապատասխանող կրիպտոակտիվների: Ընդ որում, կրիպտոակտիվը հանդիսանում է ֆինանսական ակտիվից, ոչ նյութական ակտիվից տարբերվող այլ ակտիվ, ինչպես նաև չի հանդիսանում ապրանք,

2. կրիպտոակտիվի սկզբնական արժեքը որոշվում է կրիպտոակտիվի ձեռքբերման, ստացման (այդ թվում՝ անհատույց) օրվա դրությամբ՝ ելնելով այդ օրը Կառավարության սահմանած կարգով որոշված բորսայի կողմից ԱՄՆ դոլարով կամ եվրոյով հրապարակված կրիպտոակտիվի գնի նկատմամբ այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից,

3. կրիպտոակտիվների օտարման գործարքների մասով եկամտի ստացման իրավունքի ձեռքբերումը, ինչպես նաև կրիպտոակտիվների ձեռքբերման ծախսերը կարող են փաստաթղթավորվել նշված գործարքները հիմնավորող հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթերով,

4. կրիպտոակտիվի օտարումը միաժամանակ հանդիսանում է ԱԱՀ-ով հարկման օբյեկտ և ԱԱՀ-ից ազատված գործարք, իսկ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց կողմից մատուցվող ծառայություններն ազատված չեն ԱԱՀ-ից,

5. կրիպտոակտիվի օտարման գործարքի դեպքում, շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով, համախառն եկամտից նվազեցման ենթակա չէ կրիպտոակտիվի սկզբնական արժեքի այն մասը, որը գերազանցում է կրիպտոակտիվի օտարման գործարքի դիմաց հաշվեգրված եկամտի գումարը,

6. ֆիզիկական անձանց կողմից կրիպտոակտիվի օտարումից ստացվող եկամուտները համարվում են նվազեցվող եկամուտներ, բացառությամբ էությամբ եզակի համարվող (յուրաքանչյուրն առանձնահատուկ հատկանիշներ ունեցող) և փոխարինելի չհամարվող կրիպտոակտիվի օտարումից ստացվող եկամուտները, ապակենտրոնացված գրանցամատյանի պահպանման կամ գործարքների վավերացման համար իրականացվող գործունեության արդյունքում ավտոմատ կերպով որպես պարգևատրում ստեղծված կրիպտոակտիվների օտարումից ստացվող եկամուտները, որոնց մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1% դրույքաչափով,

7. կրիպտոակտիվներով ծառայություն մատուցող անձինք չեն կարող հանդիսանալ շրջանառության հարկ վճարող, միկրոձեռնարկատիրության սուբյեկտ,

8. կրիպտոակտիվի օտարումից ստացվող եկամուտները հանդիսանում են շրջանառության հարկով հարկման օբյեկտ:

2. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 03.07.2025թ. ՀՕ-255-Ն օրենք (ուժի մեջ է 2025թ. օգոստոսի 2-ից, բացառությամբ նույն օրենքի 2-րդ և 4-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2025թ. սեպտեմբերի 1-ից)

Օրենքով կատարված փոփոխություններով՝

1. սահմանվել է լիազորող նորմ, որը Կառավարությանը թույլ կտա սահմանել այն դեպքերը և կարգը, երբ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը հարկային մարմնի միասնական շտեմարան իրականացվում է էլեկտրոնային եղանակով (հավելվածի միջոցով),

2. սահմանվել է պատասխանատվություն՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվություն հարկային մարմնի միասնական շտեմարան չփոխանցելու կամ փաստացի փոխանցման ենթակա տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն փոխանցելու համար,

3. օրենսգրքի 424-րդ հոդվածում կատարված լրացման արդյունքում նույն հոդվածով սահմանված պատասխանատվությունը կիրառելի կլինի նաև նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոնների խախտման դեպքում,

4. ՀԴՄ կտրոնի վրա տպագրման ենթակա տվյալների ցանկում լրացվել են նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի վաճառքի դեպքում՝ նույնականացման միջոցների քանակը և նույնականացման միջոցների հիման վրա հարկային մարմնի հաստատած ալգորիթմով գեներացվող ստուգիչ համարը (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների):

3. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 13.10.2025թ. ՀՕ-377-Ն օրենք (ուժի մեջ է 04.12.2025թ.)

Նշված օրենքով, մասնավորապես, սահմանվել է որ՝

1. օրենսգրքի 27-րդ հոդվածի 6-րդ մասը ուժը կորցրած է ճանաչվել: Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից աշխատուժի տրամադրման ծառայությունների մասով ՀՀ տարածքում մշտական հաստատություն կձևավորվի ՀՀ հարկային օրենսգրքի ընդհանուր կարգավորումներին և ՀՀ և օտարերկրյա պետությունների միջև գործող «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին» համաձայնագրերով սահմանված կարգավորումներին համապատասխան,

2. օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է 5-րդ կետով, որով սահմանվել է, որ ոչ ռեզիդենտ կազմակերպության վարձած աշխատողներին ՀՀ տարածքում կատարվող աշխատանքների և (կամ)

մատուցվող ծառայությունների դիմաց վճարվող եկամուտները կհամարվեն ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտներ, եթե վճարվող եկամուտները ոչ ռեզիդենտ կազմակերպության ՀՀ-ում հաշվառված մշտական հաստատության համար համարվում են ծախս և (կամ) աշխատողները ներգրավված են մշտական հաստատության գործունեության մեջ,

3. օրենսգրքի 314-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, որին համապատասխան՝ ՀՀ-ում պետական գրանցում ստացած կազմակերպությունները, ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերը և ֆիզիկական անձինք՝ ՀՀ ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանք ստանալու համար (այդ թվում՝ 2025 թվականին նախորդող տարեթվերի համար) դիմումը 2025 թվականի դեկտեմբերի 1-ից ներկայացնում են էլեկտրոնային եղանակով՝ https://e-services.src.am/hy/ հարթակի միջոցով և նույն հարթակի միջոցով վերջիններիս տրամադրվում է ՀՀ ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանք: Ընդ որում, ՀՀ-ում պետական գրանցում ստացած կազմակերպություններին և ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերին տեղեկանքը տրամադրվում է ինքնաշխատ, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ հարկային մարմինը դիմումի հիման վրա ստուգում է ֆիզիկական անձանց ՀՀ հարկային ռեզիդենտ հանդիսանալը հավաստող տեղեկատվությունը և դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է ՀՀ ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանք: Օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված՝ ռեզիդենտության փաստը հաստատող տեղեկանքի ձևը ներկայացնելու դեպքում՝ տեղեկանքը կտրամադրվի դիմումի ներկայացման օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում: ՀՀ ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքն ունենալու է էլեկտրոնային հսկիչ ծածկագիր և QR կոդ, որի վավերականությունը հնարավոր է ստուգել https://e-services.src.am/hy/ կամ https://verify.e-gov.am/am/ կայքէջերում՝ մուտքագրելով հսկիչ ծածկագիրը կամ սկանավորելով QR կոդը:

4. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-104-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» 17.12.2025թ. ՀՕ-496-Ն, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի

ՀՕ-106-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» 17.12.2025թ. ՀՕ-497-Ն, «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-107-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» 17.12.2025թ. ՀՕ-498-Ն, «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-108-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» 17.12.2025թ. ՀՕ-499-Ն, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-109-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» 17.12.2025թ. ՀՕ-500-Ն, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-110-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» 17.12.2025թ. ՀՕ-501-Ն օրենքներ (ուժի մեջ են 2026 թվականի հունվարի 1-ից)

Օրենքներով կատարված փոփոխություններով հարկային պարտավորությունների կատարումն ապահովող արգելադրման գործիքակազմի կիրառության էլեկտրոնային համակարգի ներդրման ժամկետը 2026թ. հունվարի 1-ի փոխարեն սահմանվել է 2026թ. հուլիսի 1-ը:

5. «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի սեպտեմբերի 11-ի ՀՕ-339-Ն օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 17.12.2025թ. ՀՕ-502-Ն, «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի սեպտեմբերի 11-ի ՀՕ-340-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» 17.12.2025թ. ՀՕ-503-Ն, «Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի սեպտեմբերի 11-ի ՀՕ-341-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» 17.12.2025թ. ՀՕ-504-Ն օրենքներ (ուժի մեջ են 2025թ. դեկտեմբերի 30-ից)

Օրենքների փոփոխություններով պետական տուրքի հաշվառման ինքնաշխատ համակարգի ներդրման ժամկետը 2026թ. հունվարի 1-ի փոխարեն սահմանվել է 2026թ. հուլիսի 1-ը:

ՀՀ կառավարություն որոշումներ

Դեբիտորական պարտքերի անհուսալի ճանաչման վերաբերյալ

1. ՀՀ կառավարության 24.07.2025թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N1373-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N994-Ն որոշում (ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025թ. հունվարի 1-ից հետո ծագած պարտավորությունների վրա):

Նշված որոշմամբ սահմանվել է որ՝

1. դեբիտորական պարտքը ճանաչվում է անհուսալի՝ կետանցված դառնալու 366-րդ օրվանից, եթե դեբիտորի պարտքի ընդհանուր գումարը չի գերազանցում 300,000 դրամը,

2. 300 հազ դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի՝

- դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության)՝ օրինական ուժի մեջ մտնելու օրվանից կամ,

- դատարանի կողմից արձակված վճարման կարգադրության՝ օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստանալու օրվանից կամ,

- դեբիտորական պարտքի գումարի բռնագանձման պահանջով նոտարի կողմից արձակված կարգադրության՝ կողմերի համար պարտադիր դառնալու օրվանից կամ,

- դեբիտորական պարտքի բռնագանձման պահանջը քննած արբիտրաժային տրիբունալի կողմից վճիռ (բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի) կայացվելու օրվանից:

Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների փոխանակում

2. ՀՀ կառավարության 05.06.2025թ. «Օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին ֆինանսական հաշիվների մասին տեղեկության փոխանցման, հարկային մարմնի կողմից այդպիսի իրավասու մարմիններից տեղեկության ստացման կարգերը, ինչպես նաև փոխանցված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների պահպանության պահանջները սահմանելու մասին» N718-Ն որոշում (ուժի մեջ է 16.06.2025թ.)

Որոշմամբ սահմանվել են օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին ֆինանսական հաշիվների մասին տեղեկության փոխանցման կարգը, հարկային մարմնի կողմից օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններից ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ստացման կարգը, ինչպես նաև փոխանցված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների պահպանության պահանջները:

Հաշվարկային փաստաթղթերում ԱՏԳ ԱԱ ծածկագրերի լրացման պահանջ

3. ՀՀ կառավարության 29.05.2025թ. «Հաշվարկային փաստաթղթերում ապրանքների արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերը ներառելու դեպքերը, կարգը և ժամկետները սահմանելու մասին» N679-Ն որոշում (ուժի մեջ է 01.09.2025թ.):

Նախատեսվել է որ.

1. ապրանքների, բացառությամբ անշարժ գույքի և «ԵՏՄ մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետագծելիության մեխանիզմի մասին» համաձայնագրի համաձայն հետագծելիության ենթակա ապրանքների, մատակարարման կամ տեղափոխման գործարքների մասով էլեկտրոնային եղանակով դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում (հարկային հաշիվ, ճշգրտող հարկային հաշիվ, հաշիվ վավերագիր, ճշգրտող հաշիվ վավերագիր և բեռնագիր) պետք է լրացվեն ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագրերը: ԱՏԳ ԱԱ ծածկագրերը լրացվելու են առանձին սյունակով՝ 4 նիշի մակարդակով,

2. հաշվարկային փաստաթղթերում ԱՏԳ ԱԱ ծածկագրերը պարտադիր լրացնելու պահանջը կիրառվելու է՝

- 2025թ. սեպտեմբերի 1-ից՝

ա. ներմուծողների կողմից ՀՀ տարածք ներմուծված ապրանքների մատակարարման կամ տեղափոխման գործարքների մասով,

բ. ՀՀ ներմուծված և ՀՀ-ում արտադրված հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա ԱՏԳ ԱԱ 2402, 2404 11 000 9, 2404 12 000 0, 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրանքի և

2204, 2205, 2206 00, 2207, 2208 ծածկագրերին դասվող ալկոհոլային արտադրանքի բոլոր մատակարման կամ տեղափոխման գործարքների մասով,

- 2025թ. նոյեմբերի 1-ից՝ արտադրողների կողմից ՀՀ-ում արտադրված ապրանքների, բացառությամբ հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա ԱՏԳ ԱԱ 2402, 2404 11 000 9, 2404 12 000 0, 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրանքի և 2204, 2205, 2206 00, 2207, 2208 ծածկագրերին դասվող ալկոհոլային արտադրանքի, մատակարարման կամ տեղափոխման գործարքների մասով,
- 2026թ. հունվարի 1-ից՝ ապրանքների մատակարարման կամ տեղափոխման մնացած գործարքների մասով:

Ընդ որում, անկախ վերը նշված ժամկետներից, հարկ վճարողներն իրենց ցանկությամբ 2025թ. սեպտեմբերի 1-ից ապրանքների մատակարարման կամ տեղափոխման գործարքների մասով դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում կարող են ներառել ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագրերը:

4. ՀՀ կառավարության 20.06.2025թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N1976-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N807-Ն որոշում (ուժի մեջ է 01.09.2025թ.)

Փոփոխությունների արդյունքում ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 3-ի N1976-Ն որոշմամբ կիրառվող հասկացությունները համապատասխանեցվել են ՀՀ հարկային օրենսգրքի դրույթներին: Մասնավորապես՝ որոշման մեջ կիրառվող «ապրանքային դիրք» հասկացությունը փոխարինվել է «ԱՏԳ ԱԱ ծածկագիրը» հասկացությամբ:

Դրոշմավորում

5. ՀՀ կառավարության 06.02.2025թ. «Հայաստանի Հանրապետությունում նույնականացման միջոցներով դրոշմավորման ենթակա մի շարք ապրանքների ցանկը, դրոշմավորման ներդրման ժամկետները և ցանկում ներառված ապրանքների՝ նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոնները հաստատելու մասին» N125-Ն որոշում (ուժի մեջ է 08.02.2025թ.):

Նախատեսվել է նույնականացման միջոցներով դրոշմավորումը ներդնել փուլային եղանակով:

Սահմանվել է, որ՝

- մինչև որևէ ապրանքի պարտադիր դրոշմավորման ներդրման ժամկետին նախորդող օրը ներառյալ ներկայացված՝ դրոշմապիտակների տրամադրման հայտերի հիման վրա

ստացված դրոշմապիտակներով դրոշմավորված լինելու դեպքում այդ ապրանքները կարող են չդրոշմավորվել նույնականացման միջոցներով,

- որևէ ապրանքի պարտադիր դրոշմավորման ներդրման ժամկետից սկսած ներկայացված հայտերի հիման վրա ստացված դրոշմապիտակները չեն կարող վերագրվել այդ ապրանքների վրա,



- անկախ որոշմամբ հաստատված ժամկետներից՝ տնտեսվարողներն իրենց ցանկությամբ կարող են մինչև նույնականացման միջոցներով պարտադիր դրոշմավորման ներդրման ժամկետը ապրանքների դրոշմավորումն իրականացնել նույնականացման միջոցներով,

- այն դեպքում, երբ մինչև նույնականացման միջոցներով պարտադիր դրոշմավորման ներդրման ժամկետը տնտեսվարողն իր ցանկությամբ ապրանքների դրոշմավորումն իրականացրել է նույնականացման միջոցներով, ապա այդ դեպքում ապրանքների դրոշմավորումը դրոշմապիտակներով այլևս չի կարող իրականացվել:

6. ՀՀ կառավարության 22.05.2025թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N1418-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N616-Ն որոշում (ուժի մեջ է 23.05.2025թ.)

Փոփոխության արդյունքում հստակեցվել են դրոշմավորման ընթացքում կիրառվող որոշ հասկացություններ, դրոշմավորման ծածկագրերի կարգավիճակները, պատասխանատվության կիրառության առումով դրոշմավորման կանոնի խախտում, ինչպես նաև չդրոշմավորված ապրանքների օտարում համարվելու դեպքերը:

7. ՀՀ կառավարության 22.05.2025թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N1699-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N618-Ն որոշում (ուժի մեջ է 01.06.2025թ.)

Որոշմամբ սահմանվել է, որ՝

- 2026 թվականի հունվարի 1-ից սկսած ներկայացված հայտերի հիման վրա ստացված դրոշմապիտակների վերաբերյալ ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով

գրանցումներ ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող ապրանքների համար չեն կարող կատարվել,

- ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող ապրանքների՝ նույնականացման միջոցներով դրոշմավորումը կարող է իրականացվել նաև մինչև 2026 թվականի հունվարի 1-ը,

- ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող ապրանքների՝ նույնականացման միջոցներով դրոշմավորման դեպքում, հարկ վճարողի կողմից այդ ապրանքների դրոշմավորումը դրոշմապիտակներով չի կարող իրականացվել:

8. ՀՀ կառավարության 22.05.2025թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 6-ի N125-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N644-Ն որոշում (ուժի մեջ է 23.05.2025թ.)

Որոշմամբ փոփոխվել են մի շարք ապրանքների՝ նույնականացման միջոցներով դրոշմավորման ներդրման ժամկետները՝ սահմանվելով 2026թ. հունվարի 1:

9. ՀՀ կառավարության 04.09.2025թ. «Նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը էլեկտրոնային եղանակով իրականացնելու դեպքերը և կարգը սահմանելու մասին» N1264-Ն (ուժի մեջ է 05.09.2025թ.)

Որոշմամբ նախատեսվել է, որ.

1. նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկությունը փոխանցվելու է բջջային հավելվածի միջոցով՝ մինչև դրոշմավորված ապրանքը շրջանառությունից հանելը՝ հետևյալ դեպքերում.

- նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքը այլ ապրանքի (այդ թվում՝ կիսաֆաբրիկատի) արտադրության (պատրաստման) մեջ կամ սեփական կարիքների համար օգտագործում,

- նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի (բացառությամբ խմբային փաթեթավորման և ապրանքի հավաքածուի) մասնակի օտարում,

- ծառայության մատուցման ընթացքում նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի օգտագործում, եթե դրա արժեքը ներառվում է ծառայության արժեքի մեջ,

- վերոգրյալ ենթակետերում չնշված այլ դեպքերում, երբ առկա չէ ՀԴՄ կիրառող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ՀԴՄ-ի կամ դրան միացված ծրագրային կամ տեխնիկական միջոցներով նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների օտարման կամ օտարման պահին ապրանքի դիմաց վճարման փաստ,

2. նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու՝ շահագործումից հանելու դեպքերում այդ նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունը փոխանցվելու է մոնիթորինգի համակարգ՝ մինչև դրոշմավորված ապրանքի նույնականացման միջոցը շրջանառությունից հանելը՝ շահագործումից հանելը՝ հետևյալ դեպքերում.

- նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի դուրս գրում՝ ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի N1261-Ն որոշմամբ սահմանված կարգով փաստաթղթավորված կորուստ համարվելու դեպքում,
- նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի բռնագրավում կամ հօգուտ պետության հրաժարում,
- նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի արտահանում,
- նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի՝ փորձաքննության կամ լաբորատոր փորձարկման նպատակով դուրսգրում,
- ներմուծողի կողմից նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի վերադարձ մատակարարին:

10. ՀՀ կառավարության 04.09.2025թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N1976-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1272-Ն որոշում (ուժի մեջ է 05.09.2025թ.)

Նշված որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 03.12.2020թ. N1976-Ն որոշման N3 հավելվածի 17-րդ կետի 7-րդ ենթակետը, որով հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում այդ ապրանքների վրա առկա հսկիչ (նույնականացման) նշանների վերաբերյալ տեղեկատվությունը չփոխանցելը հարկային մարմնի միասնական շտեմարան դիտվում էր ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում:

11. ՀՀ կառավարության 04.09.2025թ. «Հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա՝ դրոշմավորված ապրանքների մատակարարման դեպքում հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ

տեղեկությունը հաշվարկային փաստաթղթում ներառելու դեպքերը, կարգը և ժամկետները սահմանելու մասին» N1276-Ն որոշում (ուժի մեջ է 25.09.2025թ.)

Որոշմամբ նախատեսվել է, որ.

1. հաշվարկային փաստաթղթում հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը ներառվում է 2026թ. հունվարի 1-ից «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2402, 2404 11 000 9, 2404 12 000 0, 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրանքի և 2204, 2205, 2206 00, 2207, 2208 ծածկագրերին դասվող ալկոհոլային ապրանքների մատակարարման դեպքերում,
2. հաշվարկային փաստաթղթում հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը հնարավոր է լինելու ներառել 2 տարբերակով՝

- հաշվարկային փաստաթղթի դուրս գրման ժամանակ՝ հարկային մարմնի էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի համակարգով (e-invoicing)՝ հսկիչ (նույնականացման) նշանները հաշվարկային փաստաթղթին կցելու միջոցով կամ,
- բջջային հավելվածով՝ հսկիչ (նույնականացման) նշանները սկանավորելու և հաշվարկային փաստաթղթին կցելու միջոցով, բայց ոչ ուշ, քան հաշվարկային փաստաթուղթը ստացողի կողմից ստորագրվելը:

12. ՀՀ կառավարության 25.12.2025թ. «Դրոշմավորման ծածկագրերի տրամադրման գները հաստատելու մասին» N1943-Ն որոշում (ուժի մեջ է 05.09.2025թ.)

Որոշմամբ հաստատվել է դրոշմավորման ծածկագրերի տրամադրման գները 2.5 դրամ (առանց ԱԱՀ)՝ դրոշմավորման յուրաքանչյուր ծածկագրի տրամադրման համար՝ բացառությամբ նույն որոշման 3-րդ կետին համապատասխան հաշվարկված՝ դրոշմավորման ծածկագրերի քանակի, որոնց տրամադրման գինը հաստատվել է 0.01 դրամ (առանց ԱԱՀ-ի): Ընդ որում, սահմանվել է, որ դրոշմավորման ծածկագրի տրամադրման գինը կիրառվում է 2026թ. հունվարի 1-ից մինչև 2028թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ներկայացված՝ դրոշմավորման ծածկագրեր ստանալու հայտերի հիման վրա տրամադրվող դրոշմավորման ծածկագրերի նկատմամբ:

Միաժամանակ, սահմանվել է, որ դրոշմավորման ծածկագրերի տրամադրման 0.01 դրամ (առանց ԱԱՀ-ի) գինը կիրառվում է հարկ վճարողի՝ ներկայացված դրոշմավորման ծածկագրեր ստանալու հայտերի հիման վրա 2025թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ տրամադրված դրոշմավորման ծածկագրերի քանակի և 2.5-ի հարաբերության արդյունքում ստացված քանակի նկատմամբ:

Ժամանակավոր անաշխատունակության, մայրության նպաստների վերաբերյալ տեղեկատվությունը հարկային մարմնին տրամադրելու վերաբերյալ



13. ՀՀ կառավարության 14.08.2025թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N1676-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N1102-Ն որոշում (որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է այն դեպքերի վրա, երբ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքով սահմանված ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը 2025թ. սեպտեմբերի 1-ն է կամ դրանից հետո):

Որոշմամբ կատարված փոփոխությունների արդյունքում Միասնական սոցիալական ծառայությունը վարձու աշխատողին, անհատ ձեռնարկատիրոջը և նոտարին ժամանակավոր անաշխատունակության, մայրության նպաստ նշանակելուց (հաշվարկելուց, վերահաշվարկելուց) հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմնին է տրամադրում՝ նպաստառուի ՀԾՀ-ն կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համարը, ՀՎՀՀ-ն (առկայության դեպքում), ժամանակավոր անաշխատունակության թերթիկի նույնականացման համարը, ժամանակավոր անաշխատունակության օրացուցային ժամանակահատվածի սկիզբը և վերջը, նպաստի տեսակը (ժամանակավոր անաշխատունակության նպաստի դեպքում՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի տեսակը), նպաստի չափը, վարձու աշխատողի դեպքում՝ առանձնացված ըստ գործատուների, ինչպես նաև ըստ գործատուի միջոցներից վճարվող և ՀՀ պետական բյուջեից վճարվող նպաստի չափերի, ՀՀ պետական բյուջեից վճարվող նպաստից հաշվարկված եկամտային հարկի չափը: Ներկայացրած տվյալները 5 աշխատանքային

օրվա ընթացքում մուտքագրվում են վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի անհատական հաշիվ:

Առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակներում հարկային մարմնի և առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի միջև տեղեկատվության փոխանակման վերաբերյալ

14. ՀՀ կառավարության 30.12.2025թ. «Հարկային մարմնի և առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի միջև տեղեկատվության փոխանակման կարգը, ինչպես նաև ֆինանսների բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնին ներկայացվող հանձնարարականի ձևը սահմանելու մասին» N1987-Ն որոշում (ուժի մեջ է 31.12.2025թ.-ից)

Որոշմամբ սահմանվել է հարկային մարմնի և առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի միջև տեղեկատվության փոխանակման (այդ թվում՝ ապահովագրավճարների գծով ամբողջական պարտավորության մարման դեպքում ապահովագրավճար վճարողների ցուցակը առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամին տրամադրելու) կարգը, ինչպես նաև ֆինանսների բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնին ներկայացվող վճարման հանձնարարականի ձևը:

Այլ

15. ՀՀ կառավարության 30.10.2025թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի N922-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» N1530-Ն որոշում (ուժի մեջ է 01.11.2025թ.)

Որոշմամբ լրացումներ և փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2023թ. հունիսի 8-ի «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային մարմնում հաշվառման պարզեցված կարգը սահմանելու մասին» N922-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում սահմանվել է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական

համակարգում մինչև նույնականացման գործընթացի ավարտը համաձայնության տրման դեպքում հարկային մարմնի տեղեկատվական համակարգը այդ անձանց ինքնաշխատ շնորհում է ՀՎՀՀ, իսկ ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման համար անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային մարմինը ինքնաշխատ եղանակով շնորհում է ՀՎՀՀ:

ՀՀ ՊԵԿ նախագահի հրամաններ

Եկամուտների համապարած հայտարարագրում

1. ՀՀ ՊԵԿ նախագահի 20.01.2025թ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N300-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N60-Ն հրաման (ուժի մեջ է 24.01.2025թ. և տարածվում է 2024թ. և հետագա հաշվետու ժամանակաշրջանների վրա)

Հրամանով եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) 2-րդ բաժնում որոշ նվազեցվող (չհարկվող) եկամուտների պարտադիր լրացման առումով սահմանվել է նվազագույն շեմ, ինչպես նաև հարկային մարմնի տեղեկատվական բազայում որոշ եկամուտների վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ ինքնաշխատ լրացման դրույթներ:

Հարկման հատուկ համակարգերի մասով փոփոխությունների հետ կապված հարկային հաշվարկների, հայտարարությունների ձևերի փոփոխություններ

2. ՀՀ ՊԵԿ նախագահի 07.04.2025թ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N299-Ն հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» N420-Ն հրաման (ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից և տարածվում է 2025 հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացվող շրջանառության հարկի հաշվարկների մասով)

Հրամանով շրջանառության հարկի հաշվարկի ձևը և լրացման կարգը համապատասխանեցվել են «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-72-Ն օրենքով կատարված փոփոխությանը:

3. ՀՀ ՊԵԿ նախագահի 27.06.2025թ. «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի օգոստոսի 27-ի N558-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» N817-Ն հրաման (ուժի մեջ է 04.07.2025թ.-ից)

Հրամանով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը համապատասխանեցվել է «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 26.03.2025թ. ՀՕ-72-Ն և «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 29.05.2025թ. ՀՕ-175-Ն օրենքներով կատարված փոփոխություններին:

4. ՀՀ ՊԵԿ նախագահի 27.06.2025թ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հունիսի 27 ի N191-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» N818-Ն հրաման (ուժի մեջ է 04.07.2025թ.-ից)

Հրամանով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը համապատասխանեցվել է «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 26.03.2025թ. ՀՕ-72-Ն և «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 29.05.2025թ. ՀՕ-175-Ն օրենքներով կատարված փոփոխություններին:

Դրոշմանիշային վճարները հարկային հաշվարկներում արտացոլելու վերաբերյալ

5. ՀՀ ՊԵԿ նախագահի 15.10.2025թ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N300-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N1436-Ն հրաման (ուժի մեջ է մտնում 31.10.2025թ.-ից, բացառությամբ դրոշմանիշային վճարներին վերաբերող դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում 01.01.2026-ից),

6. ՀՀ ՊԵԿ նախագահի 15.10.2025թ. «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N749-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N1437-Ն հրաման (ուժի մեջ է մտնում 01.01.2026-ից),

7. ՀՀ ՊԵԿ նախագահի 15.10.2025թ. «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի օգոստոսի 27-ի N558-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» N1438-Ն հրաման (ուժի մեջ է մտնում 01.01.2026-ից):

Վերոնշյալ հրամաններով կատարված փոփոխությունների արդյունքում, մասնավորապես՝ դրոշմանիշային վճարներն արտացոլվելու են համապատասխան հարկային հաշվարկներում:

8. ՀՀ ՊԵԿ նախագահի 30.12.2025թ. «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի հոկտեմբերի 15-ի N1438-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» N1827-Ն հրաման (ուժի մեջ է 01.01.2026-ից),

9. ՀՀ ՊԵԿ նախագահի 30.12.2025թ. «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի հոկտեմբերի 15-ի N1437-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» N1828-Ն հրաման (ուժի մեջ է 01.01.2026-ից),

10. ՀՀ ՊԵԿ նախագահի 30.12.2025թ. «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի հոկտեմբերի 15-ի N1436-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» N1829-Ն հրաման (ուժի մեջ է 01.01.2026-ից),

Վերոնշյալ հրամաններով կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ ՊԵԿ նախագահի 15.10.2025թ. N1436-Ն, N1437-Ն և N1438-Ն հրամաններով սահմանված դրոշմանիշային վճարներին վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնելու 2026 թվականի հուլիսի 1-ից և տարածվելու են 2026 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների վրա:

Ռեզիդենտության տեղեկանքների վերաբերյալ

11. ՀՀ ՊԵԿ նախագահի 27.11.2025թ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի հունիսի 8-ի N345-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» N1629-Ն հրաման (ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի դեկտեմբերի 1-ից հետո ՀՀ ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքների տրամադրման գործընթացի վրա)

Հրամանով փոփոխություն է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 08.06.2018թ. N345-Ն հրամանում՝ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց՝ ՀՀ ռեզիդենտի

կարգավիճակի հաստատման նպատակով էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումների և ռեզիդենտության տեղեկանքի ձևերը հաստատելու նպատակով:

Աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ

12. «Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի տվյալներին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը հասանելիություն տրամադրելու ընթացակարգային կարգավորումներ սահմանելու մասին» ՀՀ ՊԵԿ նախագահի 24.12.2025թ. N1800-L և ՀՀ ներքին գործերի նախարարի 30.12.2025թ. N110-L համատեղ հրաման

Հրամանով սահմանվել է, որ ՀՀ ՊԵԿ կողմից կառավարվող՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի տվյալներին ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը հասանելիություն տրամադրվում է գործատուների կողմից օտարերկրյա քաղաքացիների հետ թվային համակարգի միջոցով կնքված աշխատանքային պայմանագրերին, աշխատանքային պայմանագրում փոփոխություն կամ լրացում կատարելու մասին համաձայնագրերին, ինչպես նաև օտարերկրյա աշխատողների հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտերին՝ հարցումների հիման վրա: Թվային համակարգին օտարերկրյա աշխատողի տվյալներին ծառայությանը հասանելիություն տրվում է այն ծավալով, որն անհրաժեշտ է օտարերկրյա աշխատողի ներգրավման https://workpermit.am միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված դիմումների հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքն ապահովելու համար:



13. «Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի տվյալներին Հայաստանի Հանրապետության առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնին հասանելիություն տրամադրելու ընթացակարգային կարգավորումներ սահմանելու մասին» ՀՀ ՊԵԿ նախագահի 24.12.2025թ. N1801-L և ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 25.12.2025թ. N05-L համատեղ հրաման

Հրամանով սահմանվել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կառավարվող՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի տվյալներին ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին հասանելիություն տրամադրվում է գործատուների կողմից վարձու աշխատողների հետ թվային համակարգի միջոցով կնքված աշխատանքային պայմանագրերին, աշխատանքային պայմանագրում փոփոխություն կամ լրացում կատարելու մասին համաձայնագրերին, ինչպես նաև վարձու աշխատողների հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտերին՝ այն ծավալով, որն անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով վերահսկողական գործառույթների իրականացման ժամանակ աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների նկատմամբ օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում իրականացվող վերահսկողության համար:

Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների փոխանակում

14. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 04.02.2025թ. «Օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտներ հանդիսացող հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին ֆինանսական հաստատության կողմից հարկային մարմնին ներկայացվող տեղեկության ձևը սահմանելու մասին» N122-Ն հրաման (ուժի մեջ է 05.02.2025թ.)

Հրամանով սահմանվել է օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտներ հանդիսացող հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին ֆինանսական հաստատության կողմից հարկային մարմնին ներկայացվող տեղեկության ձևը:

15. «Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների տրամադրման կարգը և տեղեկությունների ձևաչափը սահմանելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025թ. ապրիլի 30-ի N542-Ն և ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2025թ. հունիսի 11-ի N542-Ն համատեղ հրաման (ուժի մեջ է 03.07.2025թ.)

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի և ՀՀ կենտրոնական բանկի նախագահի համատեղ հրամանով սահմանվել է ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների տրամադրման կարգը և ձևաչափը:

2.2.2 Մաքսային օրենսդրության հիմնական փոփոխություններ



Ներպետական մաքսային օրենսդրության փոփոխություններ.

1. «Մաքսային կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-379-Ն օրենք

Օրենքով ապահովվել են միասնական հաշվի համակարգի ներդրման իրավական հիմքերը, մասնավորապես սահմանվել է կանխավճարային միջոցների հաշվին մաքսային վճարների գծով պարտավորությունների ինքնաշխատ վճարման հնարավորություն՝ էլեկտրոնային համակարգի կիրառմամբ: Միասնական հաշվի ներդրման հիմնական նպատակներն են՝

- նպաստել մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացմանը՝ ներդրված ծառայությունների և ներքին բիզնես գործընթացների արդիականացման, թվայնացման, պարտավորությունների հաշվառման գործընթացի դյուրացման միջոցով,

- դյուրացնել մաքսային մարմինների կողմից իրականացվող գործառույթները՝ ավտոմատացնելով և պարզեցնելով մաքսային պարտավորությունների հաշվառումը և դրանց մարման գործընթացները,

- ավտոմատացնել չմարված պարտավորությունների մասով տույժերի հաշվարկը և հաշվառումը,

- մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ հարկերի և տուրքերի, դրանց գծով տույժերի և տուգանքների հաշվառման կենտրոնացված կառավարումը և

հավաքագրված տեղեկատվության օգտագործումը մաքսային հսկողության իրականացման բոլոր փուլերում մաքսային հսկողության օբյեկտների ընտրության համար:

Արդյունքում տնտեսվարողների և մաքսային մարմինների համար նախատեսվում է ապահովել հետևյալ բարելավումները՝

- մաքսային մարմիններին մաքսային միասնական մեկ հաշվի համակարգում մաքսային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի դառնալու պահից ապրանքների բացթողման հնարավորություն, ներկայումս գործող՝ հաշվեգրման կամ անդորրագրի ներկայացման փոխարեն, ինչն էականորեն կկրճատի բացթողման ժամանակահատվածը,
- մաքսային միասնական մեկ հաշվի կիրառում համապատասխան դրամական միջոցների համալրման և այդ միջոցներով պարտավորությունների մարման նպատակով՝ անկախ մաքսային մարմնից և վճարի տեսակից, ինչն էականորեն կդյուրացնի դրամական միջոցների հոսքի հաշվառումը,
- անհատական հաշվի հասանելիություն արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար՝ ինչը վերջիններիս կընձեռի իրենց միջոցների հոսքերի արդյունավետ կառավարման հնարավորություն,
- տույժերի ինքնաշխատ հաշվարկ և հաշվառում՝ համաձայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերի և կարգի, ինչը կապահովի ինչպես եկամուտների հավաքագրման արդյունավետությունը, այնպես էլ կարող է օգտագործվել վարքագծային ռիսկերի գնահատման նպատակով,
- պարտավորությունների ինքնաշխատ մարման հնարավորություն՝ համաձայն վճարողի կողմից նախանշած հերթականության,
- գերավճարների տնօրինման, գումարների վերադարձի ընթացակարգերի ավտոմատացում և դյուրացում, արագացում:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N765-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» N767-Ն որոշում

2025թ. հունվարի 22-ին ընդունված՝ «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-6-Ն օրենքի 1-ին

հոդվածի համաձայն՝ 08. 04. 2010թ. ՀՕ-42-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում նշված անձինք ՀՀ պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) տրամադրման նպատակով տրվող փորձագիտական եզրակացությունը պարտավոր են կազմել և Կոմիտե ներկայացնել ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով: Կոմիտեն ստացված տեղեկատվության հիման վրա վարում և իր պաշտոնական կայքում մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող տասներորդ աշխատանքային օրը աճողական եղանակով հրապարակում է այն ապրանքների ցանկը, որոնց վերաբերյալ, նույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան, տրվել է փորձագիտական եզրակացություն այն մասին, որ դրանք չեն հանդիսանում հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների ցանկում ներառված ապրանքներ: Համանման կարգավորում սահմանվել է նաև ռազմական նշանակության արտադրանքի մասով՝ 2025 թվականի հունվարի 22-ին ընդունված՝ «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-7-Ն օրենքով:

Որոշմամբ նախատեսվել են՝

1. փորձաքննություն իրականացնող անձանց կողմից տրամադրվող փորձաքննության եզրակացության մեջ լրացնել պարտադիր նշման ենթակա՝ փորձաքննության օբյեկտ համարվող ապրանքի նկարագիրը, մոդելը, մակնիշը, արտիկուլը.

2. սահմանել փորձագիտական կազմակերպության կողմից Կոմիտեին եզրակացության ներկայացման ժամկետները.

3. սահմանել փորձագիտական եզրակացությանը կից՝ փորձաքննության օբյեկտ համարվող ապրանքի նկատմամբ մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունները, այդպիսի տեղեկությունների տրամադրման ձևաչափը.

4. սահմանել փորձագիտական եզրակացության տրամադրման եղանակը՝ էլեկտրոնային համակարգով, իսկ մինչև դրա գործարկումը՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N765-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N1866-Ն որոշում

Որոշմամբ սահմանվել է, որ ռազմական և երկակի նշանակության ապրանքների մասով փորձաքննություն իրականացնող անձինք փորձագիտական եզրակացությունը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե կներկայացնեն համապատասխան պահանջի առկայության դեպքում: Նշված նորմի նախատեսման արդյունքում լուծվել են մեծածավալ և հսկողական գործընթացների համար ոչ անհրաժեշտ տեղեկությունների

փոխանցման և պահպանման հետ կապված՝ դրանց էլեկտրոնային եղանակով փոխանցման և պահպանման անհնարինությանն առնչվող խնդիրները:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N1524-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1591-Ն որոշում

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N1524-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ կողմից արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգի 23-րդ կետով սահմանված էր, որ մաքսային մարմինները լիցենզիաների կատարման վերաբերյալ տեղեկություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնում էին անմիջապես լիազոր մարմնին՝ յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ:

Վերոգրյալ նորմի կատարման շրջանակներում մաքսային մարմինների կողմից լիազոր մարմիններին տեղեկությունների տրամադրման գործընթացը պահանջում էր լրացուցիչ ռեսուրսների ներգրավում և հավելյալ ժամանակի ծախս՝ այն դեպքում, երբ լիազոր մարմիններին նշված պարբերականությամբ տեղեկությունների տրամադրման անհրաժեշտությունն առկա չէր: Լիազոր մարմինների կողմից լիցենզիաների տրամադրումից հետո որևէ վերահսկողական գործընթացի կամ մոնիթորինգի իրականացման անհրաժեշտության դեպքում, վերջիններս կարող են համապատասխան տեղեկությունները հայցել մաքսային մարմիններից, որի շրջանակներում մաքսային մարմինները կարող են իրականացնել համապատասխան նպատակային ուսումնասիրություն և տրամադրել լիցենզիաների կատարման վերաբերյալ տեղեկությունները:

Որոշմամբ համապատասխան տեղեկությունների ներկայացման պարբերականության կարգավորումը փոխարինվել է լիազոր մարմնի հարցման հիման վրա տեղեկությունների տրամադրման կարգավորմամբ:

5. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 23-ի «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող մաքսային հսկողության գոտիներում առևտրային գործունեություն իրականացնող անձանց գործունեության իրականացման թույլտվությունների տրամադրման մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N82-Ա հրաման

ՀՀ կառավարության 07.11.2024թ. «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող մաքսային հսկողության գոտիներում առևտրային գործունեություն և անմաքս առևտրի խանութներում գործունեություն իրականացնելու թույլտվության տրամադրման մրցույթի իրականացման կարգը սահմանելու մասին» N1744-Ն որոշման հիման վրա հաստատվել է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող մաքսային հսկողության գոտիներում առևտրային գործունեություն իրականացնող անձանց գործունեության իրականացման թույլտվությունների տրամադրման մրցութային հանձնաժողովի կազմը:

6. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 5-ի «Մաքսային փորձաքննությունների իրականացման պայմանագրի ձևը սահմանելու մասին» N251-L հրաման

«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 338-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մինչև մաքսային մարմինների կողմից նույն օրենքի 236-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ մաքսային փորձաքննություն կատարելու իրավասություն ունեցող մաքսային մարմին հիմնելը մաքսային փորձաքննությունն իրականացնում են մաքսային մարմնի կողմից հավատարմագրված մաքսային փորձաքննություն իրականացնող կազմակերպությունները՝ մաքսային մարմնի ղեկավարի և փորձաքննություն իրականացնող համապատասխան կազմակերպությունների միջև կնքվող պայմանագրի հիման վրա: Հրամանով սահմանվել է նշված պայմանագրի ձևը:

7. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2023 թվականի հունիսի 5-ի N560-L հրամանում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» N344-L հրաման

Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է «Մաքսային կարգավորման մասին» ՀՕ-353-Ն օրենքի 98-րդ հոդվածի 7-րդ մասով, որի համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով նախատեսված դեպքերում մաքսային ընթացակարգերի գործողությունը դադարեցվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի սահմանած ձևով:

Հրամանով սահմանվել է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով նախատեսված դեպքերում մաքսային ընթացակարգերի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշման ձևը: Միաժամանակ, հրամանով կանոնակարգվել են նաև մաքսային

ընթացակարգերի գործողության դադարեցման վերաբերյալ մաքսային մարմնի կողմից որոշման ընդունման և լրացման հետ կապված հարաբերությունները:

8. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի մայիսի 26-ի «Մաքսային մարմինների կողմից տարածքների և շինությունների մաքսային տեսազննման իրականացման կարգադրագրի ձևը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հուլիսի 26-ի N239-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N643-Ն հրաման

«Մաքսային կարգավորման մասին» 14.09.2022թ. ՀՕ-353-Ն օրենքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 330-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան՝ մաքսային մարմինների կողմից տարածքների և շինությունների մաքսային տեսազննումն իրականացվում է մաքսային մարմնի ղեկավարի կարգադրագրի հիման վրա, որի ձևը սահմանում է Պետական եկամուտների կոմիտեն:

Հրամանով սահմանվել են տարածքների և շինությունների մաքսային տեսազննման իրականացման կարգադրագրի ձևն ու դրանում ներառվող տեղեկությունները: Միաժամանակ, նախկինում գործող ոչ արդիական հրամանը նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել:

9. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի օգոստոսի 8-ի «Չհավաքված, կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված տեսքով ապրանքի՝ մինչև հայտարարագրումը նախատեսվող առաքումների վերաբերյալ հայտարարատուի կողմից մաքսային մարմիններ ուղարկվող ծանուցման ձևը և այդ ապրանքի հայտարարագրման ժամկետի երկարաձգման կարգը սահմանելու մասին» N1049-Ն հրաման

«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 88-րդ հոդվածի համաձայն՝ չհավաքված, կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված տեսքով ապրանքը, որի տեղափոխումը նախատեսվում է կատարել մի քանի ապրանքային խմբաքանակով՝ նույն հոդվածով սահմանված ժամանակահատվածում, կարող է հայտարարագրվել ԱՏԳ ԱԱ մեկ ծածկագրով: Մինչև նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ապրանքի հայտարարագրումը, հայտարարատուն էլեկտրոնային կամ թղթային եղանակով մաքսային մարմիններ ուղարկում է ծանուցում նախատեսվող առաքումների վերաբերյալ՝ կցելով մաքսային մարմինների ընդունած՝ ապրանքների դասակարգման մասին որոշումը: Նույն

հոդվածով նախատեսված՝ չհավաքված, կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված տեսքով ապրանքի՝ մինչև հայտարարագրումը նախատեսվող առաքումների վերաբերյալ հայտարարատուի կողմից մաքսային մարմիններ ուղարկվող ծանուցման ձևը սահմանում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեն:

Միաժամանակ, նույն հոդվածի համաձայն՝ կոմպլեկտավորված, ավարտուն ապրանքի վերջին բաղադրիչի համար մաքսային հայտարարագիրը ներկայացնելու ժամկետը սահմանված է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 117-րդ հոդվածի 8-րդ կետով, և մաքսային մարմինը կարող է այն երկարաձգել ևս մեկ տարի ժամկետով՝ հայտարարատուի հիմնավորված դիմումի հիման վրա, որը ներկայացվում է մաքսային մարմիններ մինչև Միության մաքսային օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտը: Անկախ նշված ժամկետից՝ լրացուցիչ երկարաձգման անհրաժեշտության առաջացման պարագայում մաքսային մարմինը կարող է երկարաձգել ապրանքի բաղադրիչների տեղափոխման ժամկետը յուրաքանչյուր անգամ մեկ տարի ժամկետով՝ դիմումը մինչև երկարաձգված ժամկետի ավարտը ներկայացնելու դեպքում, բայց ոչ ավելի, քան ապրանքի առաջին բաղադրիչի համար ներկայացված մաքսային հայտարարագրի գրանցման օրվանից հետո 5 տարին լրանալը:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ չհավաքված, կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված ապրանքի հայտարարագրման ժամկետի երկարաձգման կարգը սահմանում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեն:

Հրամանով սահմանվել են չհավաքված, կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված տեսքով ապրանքի մինչև հայտարարագրումը նախատեսվող առաքումների վերաբերյալ հայտարարատուի կողմից մաքսային մարմիններ ուղարկվող ծանուցման ձևը, ինչպես նաև, չհավաքված, կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված ապրանքի հայտարարագրման ժամկետի երկարաձգման կարգը (դիմումի ներկայացման, քննարկման կարգը, ժամկետները, մաքսային մարմնի կողմից կայացվող որոշումները, դրանց ձևերը):

10. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի օգոստոսի 8-ի «Մինչև մաքսային, այլ փաստաթղթերի կամ տեղեկությունների ստուգման ավարտն ապրանքների բացթողման դեպքում մաքսային մարմինների կողմից մաքսատուրքի, հարկերի, հատուկ, հակագնագցման փոխհատուցման տուրքերի վճարման գծով պարտավորությունների կատարման

ապահովումը չներկայացնելու մասին որոշումն ընդունելու կամ այդ ապահովումը մերժելու կարգը սահմանելու մասին» N1050-Ն հրաման

«Մաքսային կարգավորման մասին» ՀՕ-353-Ն օրենքի 96-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մաքսային մարմինների կողմից նույն մասին համապատասխան մաքսատուրքի, հարկերի, հատուկ, հակագնագցման և փոխհատուցման տուրքերի վճարման գծով պարտավորությունների կատարման ապահովումը չներկայացնելու մասին որոշումն ընդունելու կամ այդ ապահովումը մերժելու կարգը սահմանում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեն: Հրամանով կանոնակարգվել են մինչև մաքսային, այլ փաստաթղթերի կամ տեղեկությունների ստուգման ավարտն ապրանքների բացթողման դեպքում մաքսային մարմինների կողմից մաքսատուրքի, հարկերի, հատուկ, հակագնագցման փոխհատուցման տուրքերի վճարման գծով պարտավորությունների կատարման ապահովումը չներկայացնելու մասին որոշումն ընդունելու կամ այդպիսի որոշման ընդունումը մերժելու հարաբերությունները, մասնավորապես՝ մաքսային մարմինների կողմից համապատասխան որոշումների ընդունման ժամկետները, եղանակները, որոշման ձևը, դրա լրացման կարգավորումները:

11. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի սեպտեմբերի 23-ի «Դրամական միջոցներ ներդրած անձին որպես դրամական միջոցների՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան գանձապետական հաշվին մուտքի հաստատում՝ տրամադրվող անդորրագրի կիրառման կարգը և ձևը, ինչպես նաև որպես մաքսատուրքի, հարկերի, հատուկ, հակագնագցման և փոխհատուցման տուրքերի վճարման ապահովում՝ ներդրված դրամական միջոցների վերադարձման (հաշվանցման) կարգը, վերադարձման (հաշվանցման) դիմումի և մաքսային մարմնի կողմից կայացվող որոշումների ձևերը սահմանելու մասին» N1318-Ն հրաման

Հրամանով սահմանվել են անձանց կողմից մաքսատուրքի, հարկերի, հատուկ, հակագնագցման և փոխհատուցման տուրքերի կամ այլ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով դրամական միջոցների ներդրման դեպքում մաքսային մարմինների կողմից դրանց հաշվառման, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված համապատասխան հիմքերի առկայության դեպքում՝ այդպիսի դրամական միջոցների վերադարձման կամ հաշվանցման հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես սահմանվել են՝

1. որպես վճարման ապահովում ներդրված դրամական միջոցների դեպքում մաքսային մարմնի կողմից անձին տրամադրվող անդորրագրի ձևը, դրա կիրառման կարգը,

2. որպես վճարման ապահովում ներդրված դրամական միջոցների վերադարձման կամ հաշվանցման կարգը, ժամկետները և մաքսային մարմնի կողմից կայացվող որոշումները:

12. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի «Լիազորված տնտեսական օպերատորի կողմից մաքսային մարմիններ ներկայացվող հաշվետվության ձևը սահմանելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի օգոստոսի 26-ի N583-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1422-Ն հրաման

Հրամանով սահմանվել է լիազորված տնտեսական օպերատորի կողմից հատուկ պարզեցումներով տեղափոխվող ապրանքների վերաբերյալ մաքսային մարմիններին ներկայացվող հաշվետվության ձևը, ինչպես նաև ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի օգոստոսի 26-ի «Լիազորված տնտեսական օպերատորի կողմից մաքսային մարմիններ ներկայացվող հաշվետվության ձևը սահմանելու մասին» N583-Ն հրամանը:

13. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի «Մաքսային ներկայացուցիչների կողմից իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը և հաշվետվությունների ձևը սահմանելու մասին» N1424-Ն հրաման (04.11.2025թ. N1505-Ն հրամանի փոփոխությամբ)

Հրամանով սահմանվել են՝ մաքսային ներկայացուցիչների կողմից իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ժամկետները, այդ թվում՝ ներկայացման եղանակները, ճշգրտման դեպքերն ու ճշգրտված հաշվետվությունների ներկայացման կարգը, մաքսային ներկայացուցիչների գործունեության վերաբերյալ մաքսային մարմիններ ներկայացվող հաշվետվության ձևը:

14. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի դեկտեմբերի 10-ի «Մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» N1712-Ն հրաման

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուց հետո Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությունը համապատասխանեցվել է Եվրասիական տնտեսական միությունում

գործող միասնական մաքսային օրենսդրությանը, ինչպես նաև «Մաքսային կարգավորման մասին» ՀՕ-353-Ն օրենքի ուժի մեջ մտնելու հանգամանքով պայմանավորված, առաջացել է մինչև նշված օրենքն ընդունված, և մինչև Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միության անդամակցությունն ընդունված մի շարք հրամանների գործողության դադարեցման անհրաժեշտություն: Մասնավորապես ուժը կորցրած են ճանաչվել՝

-ՀՀ մաքսային վարչության պետի 1997թ. նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ակցիզային հարկի հաշվարկման կարգի մասին» հրահանգի հաստատման մասին» N107 հրամանը,

-ՀՀ մաքսային վարչության պետի 1998թ. փետրվարի 28-ի «Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության պետական ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի հաստատման մասին» N7-ՄՎը հրամանը,

-ՀՀ մաքսային վարչության պետի 1998թ. հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և այլ առարկաների մաքսային ձևակերպման մասին» N70-ՄՎՐ հրամանը,

-ՀՀ մաքսային վարչության պետի 1998թ. հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով փոխադրվող ապրանքների և տրանսպորտային միջոցների բեռնային մաքսային հայտարարագրման, ըստ բացթողման մաքսային ռեժիմների բեռնային մաքսային հայտարարագրի լրացման կարգը հաստատելու մասին» N71-ՄՎՐ հրամանը,

-ՀՀ մաքսային վարչության պետի 1998թ. հունիսի 18-ի «Քաղաքացիների կողմից մաքսային սահմանով փոխադրվող ապրանքների և այլ առարկաների հայտարարագրման ենթակա տեղեկությունների ցանկի մասին» հրահանգը հաստատելու մասին» N74-ՄՎՐ հրամանը,

-ՀՀ մաքսային վարչության պետի 1998թ. հուլիսի 10-ի «ՀՀ մաքսային սահմանով անցնող քաղաքացիների կողմից հայտարարագրման ենթակա տեղեկությունների ցանկի մասին» հրահանգը հաստատելու մասին» N86-ՄՎՐ հրամանը,

-ՀՀ մաքսային վարչության պետի 1999թ. փետրվարի 4-ի ««Անմաքս առևտրի խանութներ կազմակերպելու մասին» հրահանգը հաստատելու մասին» N15-ՄՎ հրամանը,

- ՀՀ պետական եկամուտների նախարարի 2000թ. դեկտեմբերի 26-ի ««Խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների նախնական հայտարարագրման դեպքերը և կարգը սահմանելու մասին» հրահանգը հաստատելու մասին» N02/1623 հրամանը,

- ՀՀ պետական եկամուտների նախարարության 2000թ. դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 70 հոդվածի, 96 հոդվածի 2-րդ կետի և 117 հոդվածի պահանջներն ապահովելու մասին» N02/1508 հրամանը,

- ՀՀ պետական եկամուտների նախարարության 2001թ. փետրվարի 26-ի «Մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագրի լրացման կարգի հաստատման մասին» N02/207 հրամանը,

- ՀՀ պետական եկամուտների նախարարության 2001թ. փետրվարի 26-ի «Մաքսային ձևակերպման նպատակով ապրանքներից նմուշներ և փորձանմուշներ վերցնելու դեպքում կազմվող արձանագրության ձևը հաստատելու մասին» N02/208 հրամանը,

- ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 2006թ. մարտի 1-ի «Փոխադրման ամփոփագրի ձևը, «փոխադրման ամփոփագրի լրացման» ու «փոխադրման ամփոփագրի ձևաթղթերի շրջանառության և հաշվառման» կարգերը հաստատելու մասին» N06/20-Ն հրամանը,

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016թ. դեկտեմբերի 23-ի «Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակի տրամադրման համար անվտանգության առումով ռիսկային չհամարվող երկրների չափանիշները սահմանելու մասին» N280-Ն հրամանը,

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017թ. հունվարի 12-ի «Մաքսային մարմնի կողմից հայտարարատուին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրվող մաքսատուրքի, հարկերի վճարման անդորրագրի ձևը սահմանելու մասին» N4-Ն հրամանը,

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017թ. մարտի 21-ի «Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրերի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի հունիսի 5-ի N357-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N95-Ն հրամանը,

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013թ. հուլիսի 3-ի «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի պարզաբանումները հաստատելու մասին» N290-Ն հրամանը,

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013թ. հուլիսի 17-ի «Պարզեցված մաքսային հայտարարագրի ձևը հաստատելու մասին» N312-Ն հրամանը,

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2014թ. ապրիլի 10-ի «Հայտարարագրված ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողումից հետո մաքսային մարմինների ընդունած մաքսային հայտարարագրի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու ճշգրտումների փաստաթղթի ձևը հաստատելու մասին» N155-Ն հրամանը. ,

- ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից մետաղների խտանյութի արտահանման համար մաքսային մարմիններին մետաղների խտանյութի փորձաքննության վերաբերյալ եզրակացության մեջ ներկայացվող տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» N120-Ն հրամանը,

- ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. հունիսի 8-ի «Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշման ձևը հաստատելու մասին» N369-Ն հրամանը,

- ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. օգոստոսի 26-ի «Լիազորված տնտեսական օպերատորի ռեեստրում հաշվառման մասին վկայականի ձևը և լրացման կարգը հաստատելու մասին» N584-Ն հրամանը:

ԵՏՄ հարթակում «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 11. 04. 2017թ. պայմանագրում փոփոխությունների իրականացման և ԵՏՀ ակտերի նախագծերի մշակման բանակցային աշխատանքներ.

Մաքսային օրենսդրության առանձին դրույթների կատարելագործման նպատակով իրականացվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 11. 04. 2017թ. պայմանագրում փոփոխությունների իրականացման մասին արձանագրության նախագծի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի առանձին ակտերի նախագծերի մշակման աշխատանքներ: Ապահովվել է մասնակցություն՝ թվով շուրջ 80 աշխատանքային նիստերի:

Վերազգային մաքսային օրենսդրության հիմնական փոփոխություններ.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումներ

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2025 թվականի հունվարի 14-ի «Մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողնման մասին դիմումի լրացման կարգի 36-րդ կետում փոփոխություն կատարելու մասին» N2 որոշում

Որոշմամբ սահմանվել են մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողնման մասին դիմումի մեջ ակցիզային հարկով հարկվող ապրանքների համար ակցիզային դրոշմանիշերի մասին տեղեկությունների լրացման առանձնահատկություններ:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2025 թվականի մարտի 24-ի «Որպես ապրանքների հայտարարագիր՝ տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթերի օգտագործման կարգի մասին ուղեցույցի մեջ փոփոխություններ կատարելու մասին» N28 որոշում

Որոշմամբ ստեղծվել է առանձին կատեգորիայի ապրանքների (չգրանցված դեղեր, մարդկային արյուն և դրա բաղադրամասեր, օրգաններ)՝ պարզեցված կարգով մաքսային ձևակերպման հնարավորություն: Մասնավորապես, որպես մաքսային հայտարարագիր կարող են օգտագործվել ապրանքներն ուղեկցող՝ տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթերը:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 08.04.2025թ. «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հոկտեմբերի 16-ի N160 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N37 որոշում

Որոշմամբ սահմանվել են մաքսային արժեքի հայտարարագրում լրացման ենթակա՝ մաքսային արժեքի բաղկացուցիչ համարվող առանձին ծախսերի լրացման և ապրանքային խմբաքանակների միջև բաշխման առանձնահատկություններ:

4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 18.02.2025թ. N19, 08.04.2025թ. N33, 22.04.2025թ. N40, 01.07.2025թ. N61 որոշումներ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից միատեսակ կիրառության նպատակով նշված որոշումներով կայացվել են առանձին ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական

գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան դասակարգման վերաբերյալ որոշումներ:

5. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 01.07.2025թ. «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N170 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N62 որոշում

Որոշմամբ վերախմբագրվել են մաքսային տարանցման ժամկետի երկարաձգմանը, ապրանքների նշանակման վայրի փոփոխության նպատակով մաքսային մարմնի կողմից թույլտվությունների տրամադրմանը, ապրանքների նկատմամբ բեռնային գործողությունների իրականացման նպատակով մաքսային մարմնի կողմից թույլտվությունների տրամադրմանն առնչվող, ինչպես նաև փոխադրման ժամանակ վթարի, անհաղթահարելի ուժի ազդեցության առկայության դեպքում մաքսային գործառնությունների իրականացման կարգերը՝ դրանց միատեսակ կիրառության ապահովման նպատակով:

6. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 19.08.2025թ. «Էքսպրես-բեռների համար ապրանքների հայտարարագրի լրացման կարգում փոփոխություններ կատարելու մասին» N71 որոշում

Որոշմամբ նախատեսվել է արժութային հսկողության ոլորտում օրենսդրության պահանջների պահպանվածությունը հաստատող փաստաթղթերի վերաբերյալ տվյալների՝ մաքսային հայտարարագրում լրացման հնարավորություն:

7. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 17.11.2025թ. «Ապրանքների հայտարարագրի լրացման կարգի 15-րդ կետի 42-րդ ենթակետում փոփոխություն կատարելու մասին» N104 որոշում

Որոշմամբ սահմանվել է ապրանքների ծագման սերտիֆիկատների բնօրինակների՝ ապրանքների հայտարարագրի գրանցումից հետո ներկայացման դեպքում դրա վերաբերյալ տվյալների լրացման առանձնահատկություն:

8. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 24.03.2025թ. N29, 24.03.2025թ. N30, 01.04.2025թ. N32, 26.11.2025թ. N108, 02.12.2025թ. N114 որոշումներ

Նշված որոշումներով փոփոխություններ են կատարվել Մաքսային միության հանձնաժողովի 20.09.2010թ. «Մաքսային փաստաթղթերի լրացման համար օգտագործվող դասակարգիչների մասին» N378 որոշման մեջ, մասնավորապես լրացվել են մաքսային

հայտարարագրերում հայտարարագրման ենթակա՝ առանձին տեղեկությունների մասով նոր դասակարգիչներ:

9. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 16.12.2025թ. «Ապրանքների հայտարարագրի լրացման կարգում փոփոխություններ կատարելու մասին» N125 որոշում

Որոշմամբ սահմանվել են ապրանքների առնչությամբ իրականացված գործարքը բնութագրող առևտրային փաստաթղթերի հիման վրա առանձին տվյալների լրացման առանձնահատկություններ:

10. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 24.12.2025թ. «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N170 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N139 որոշում

Որոշմամբ սահմանվել է մաքսային տարանցման շրջանակներում ապրանքների փոխադրման երթուղու սահմանմանը, փոփոխությանը և պահպանմանն առնչվող մաքսային գործառնությունների իրականացման կարգը:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշումներ

11. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 26.05.2025թ. «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2019 թվականի փետրվարի 22-ի N64 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N42 որոշում

Որոշմամբ սահմանվել է սակագնային առանձնաշնորհումների վերականգնման լրացուցիչ դեպք՝ ապրանքների բացթողումից հետո իրականացված հսկողության շրջանակներում իրականացած գործողությունների մասով, հստակեցվել են սակագնային առանձնաշնորհումների վերականգնմանը վերաբերող առանձին հարցեր:

12. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 26.11.2025թ. «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2022 թվականի մայիսի 19-ի N85 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N91 որոշում

Որոշմամբ մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ը ստեղծվել է ապրանքի ծագման սերտիֆիկատների թղթային կամ էլեկտրոնային պատճենների ներկայացման հնարավորություն՝ ապրանքների հայտարարագրի գրանցումից հետո 6 ամսվա ընթացքում բնօրինակի ներկայացման պայմանով:

13. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 05.12. 2025թ. «Էլեկտրոնային առևտրի ապրանքներին առնչվող առանձին հարցերի մասին» N112 որոշում

Որոշմամբ սահմանվել է ֆիզիկական անձանց կողմից ձեռքբերվող էլեկտրոնային առևտրի ապրանքների համար ներմուծման մաքսատուրքի միասնական դրույքաչափը, ինչպես նաև այն ապրանքների կատեգորիաները, որոնք չեն համարվում էլեկտրոնային առևտրի ապրանքներ:

14. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 05.12. 2025թ. «Արժեքային նորմեր սահմանելու մասին, որոնց շրջանակներում ֆիզիկական անձանց կողմից ձեռքբերված էլեկտրոնային առևտրի ապրանքները ներմուծվում են առանց ներմուծման մաքսատուրքի վճարման» N119 որոշում

Որոշմամբ սահմանվել է առանց ներմուծման մաքսատուրքի վճարման ֆիզիկական անձանց կողմից ձեռքբերված էլեկտրոնային առևտրի ապրանքների ներմուծման 200 եվրո սահմանաչափ:

III. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

3.1 ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵԿ կողմից 2025 թվականի ընթացքում իրականացվել է 548 համալիր հարկային ստուգում, ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 111-ով կամ 16.8%-ով:



Համալիր հարկային ստուգումների արդյունքներով առաջացած լրացուցիչ պարտավորության գումարը կազմել է 39,630.4 մլն դրամ, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ նվազել է 19,076.4 մլն դրամով կամ 32.5%-ով:

Մեկ ստուգմամբ առաջացած լրացուցիչ պարտավորության գումարը կազմել է 72.3 մլն դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 16.8 մլն դրամով կամ 18.8%-ով: Իրականացված 328 լուծարային ստուգումների արդյունքում առաջացած լրացուցիչ պարտավորության գումարը կազմել է 177.8 մլն դրամ, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ նվազել է 3,131.0 մլն դրամով կամ 94.6%-ով: Հարկ է նշել, որ 2025թ. ընթացքում նվազել է լուծարային ստուգումների քանակը:

Աղյուսակ 10. Ստուգման արդյունքում հայտնաբերված գումար, այդ թվում՝ ներկայացված ճշտված հաշվարկներով առաջացած լրացուցիչ հարկային պարտավորություն (մլն դրամ)

Ստուգման տեսակ	*Քանակ*	*Հայտնաբերված գումար*	*Քանակ*	*Հայտնաբերված գումար*
	2024		**2025**	
Համալիր հարկային ստուգում (այդ թվում՝ վերստուգում)	659	58,706.8	548	39,630.4
այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկներ	540	28,106.5	449	31,073.1
Լուծարային ստուգում	445	3,308.8	328	177.8
այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկներ	89	3,306.4	67	175.7
Թեմատիկ ստուգում (ԹՍ)	11926	3,522.6	9567	3,932.2

2025 թվականի ընթացքում իրականացվել է 9567 թեմատիկ ստուգում, ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 2359-ով կամ 19.8%-ով: Մեկ թեմատիկ ստուգմամբ հայտնաբերված լրացուցիչ պարտավորության գումարը միջինում կազմել է 411.0 հազ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 115.6 հազ դրամով կամ 39.2%-ով:

Իրականացվել է 1500 աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և (կամ) աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ճշտության ստուգում, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 68-ով կամ 4.7%-ով: 2025 թվականի ընթացքում իրականացվել է 8775 ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգում, ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 1516-ով կամ 14.7%-ով:

Գծապատկեր 15: 2024 - 2025թթ. Համալիր հարկային և թեմատիկ ստուգումներով և ուսումնասիրություններով արձանագրված գումարներ (մլն դրամ)



2025 թվականին ՀԴՄ կիրառման ճշտության ստուգումներով հայտնաբերված գումարը կազմել է 2,742.7 մլն դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 434.9 մլն դրամով կամ 18.8%-ով: Աճ է գրանցվել նաև ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կամ նույնականացման միջոցների կիրառման ճշտության ստուգման արդյունքում, մասնավորապես առաջադրված գումարը 2025թ. ընթացքում կազմել է 293.5 մլն դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 14.0 մլն դրամով կամ 5.0%-ով (Գծապատկեր 15):

Հարկային մարմնի մշակած և փոփոխվող իրավակարգավորումներին համահունչ ու պարբերաբար արդիականացվող վերլուծական գործիքակազմի ընդլայնումը նպաստում է հարկ վճարողների կամավոր կարգապահության զարգացմանը: Վերլուծությունների, կամերալ ուսումնասիրությունների արդյունքում 2025թ. հունվար–դեկտեմբեր ամիսներին բյուջե է հաշվեգրվել 74.8 մլրդ դրամի լրացուցիչ հարկեր, իսկ նախորդ 2024թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին՝ 67.3 մլրդ դրամի լրացուցիչ հարկեր: Նշված ցուցանիշը գերազանցում է նախորդ տարվա արդյունքը 7.4 մլրդ դրամով, կամ 11.0%-ով:

Թեմատիկ ուսումնասիրությունների վերաբերյալ օրենսդրական փոփոխությունն ունեցել է կարգապահական և մուլտիպլիկատիվ արդյունավետություն՝ որի արդյունքում էապես նվազել է վերլուծությունների արդյունքում կազմվող կամերալ արձանագրությունների քանակը: Առավել ռիսկային և կամերալ արձանագրություններին չարձագանքած հարկ վճարողների մոտ 2025թ. ընթացքում իրականացված 530 թեմատիկ ուսումնասիրությունների արդյունքում առաջադրվել է լրացուցիչ վճարման 22.9 մլրդ դրամ գումար՝ ներառյալ ճշտված հարկային հաշվարկները:

Կամերալ վերլուծությունների արդյունքում ի հայտ եկած անհամապատասխանություններից բացի, հարկ վճարողները ծանուցվում են նաև իրենց կողմից դրսևորած ռիսկային վարքագծի վերաբերյալ: Հարկ վճարողների վարքագծի վերաբերյալ վերլուծություններն իրականացվում են ավտոմատ գործիքակազմի միջոցով: Մասնավորապես վերլուծվում, իսկ հետո նաև մշտադիտարկվում են հարկ վճարողների ՀԴՄ գործարքները, ստացած և դուրս գրած հարկային հաշիվները և հաշիվ վավերագրերը, երրորդ անձանցից ստացած տվյալները և այլն: Նշված ռիսկերի մասով հարկ վճարողների էլեկտրոնային էջերին ներկայացվել է շուրջ 62000 ծանուցագիր:

Վերլուծական գործիքակազմի պարբերաբար փոփոխությունների արդյունքում գործարկվել են նոր պրոֆիլներ՝ այդ թվում՝ դեբետային գումարների վերադարձի ռիսկային գումարների կանխարգելման նպատակով:

ՀՀ հարկային օրենսգրքի փոփոխությունների և 01.01.2025թ.-ից գործող ՀՀ կառավարության N155 որոշման համաձայն, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջացած և Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային չհամարվելու դեպքում փոխհատուցվող

գումարը մուտքագրվում է հարկ վճարողի միասնական հաշվին՝ առանց ուսումնասիրության և ավտոմատ եղանակով:

2025թ.-ի արդյունքներով առանց ուսումնասիրության և ավտոմատ եղանակով՝ 1847 դեպքով հարկ վճարողների միասնական հաշվին փոխանցվել է 16.8 մլրդ դրամ:

2025թ. ընթացքում ձեռնարկվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ հարկային իրավախախտումների և հանցագործությունների կանխման, խափանման ու բացահայտման նպատակով: Աշխատանքներն իրականացվել են հետևյալ ուղղություններով՝

Ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման օրենսգրքով սահմանված պահանջների խախտման դեպքերի բացահայտման ուղղությամբ կատարված աշխատանքներ:

2025թ. ընթացքում իրականացվել է 447 օպերատիվ-հետախուզական միջոցառում, որի արդյունքում 440 դեպքով արձանագրվել է առանց համապատասխան ուղեկցող փաստաթղթերի 147.8 մլն դրամի օրենսգրքի պահանջների խախտումով ապրանքների մատակարարում և տեղափոխություն: Թվով 26 հարկ վճարողների մոտ խախտումներն արձանագրվել են 2 և ավել անգամ (22-ի մոտ՝ 2, 3-ի մոտ՝ 3, 1-ի մոտ՝ 4 անգամներ):

Ապօրինի ձեռնարկատիրության բացահայտման ուղղությամբ կատարված աշխատանքներ:

2025թ. ընթացքում ապօրինի ձեռնարկատիրության բացահայտման նպատակով ձեռնարկվել են 282 օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքում 266 դեպքով կազմվել են համապատասխան արձանագրություններ, համաձայն որոնց ձեռնարկատիրական եկամտի չափը կազմել է 1,510.5 մլն դրամ:

Լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելը կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու ուղղությամբ կատարված աշխատանքներ:

2025թ. ընթացքում ձեռնարկվել են 241 օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքում 229 դեպքով արձանագրված խախտման չափը կազմել է 890.0 մլն դրամ:

Վերոնշյալ բոլոր դեպքերով կազմված արձանագրություններն ուղարկվել են ՊԵԿ իրավաբանական վարչություն՝ վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով:

ՀԴՄ կիրառման և ՁԱ գրանցման ճշտության ստուգումների ուղղությամբ կատարված աշխատանքներ: (ՕՀՄ և ստուգում):

2025թ. ընթացքում իրականացվել են թվով 24 ՀԴՄ-ի կիրառման և չձևակերպված աշխատողի գրանցման ճշտության ստուգումներ:

2 դեպքով իրականացվել են ստուգումներ, որի արդյունքում արձանագրվել է ՀԴՄ-ի շահագործման կանոնների խախտում՝ 3.6 մլն դրամ,

22 դեպքով արձանագրվել է 153 չգրանցված աշխատող, տուգանքի գումարը կազմել է 38.3 մլն դրամ,

Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման և (կամ) դրոշմապիտակավորման կանոնների պահպանության ուղղությամբ կատարված աշխատանքներ (ՕՀՄ և ստուգում):

2025թ. ընթացքում իրականացվել է ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման և (կամ) դրոշմապիտակավորման կանոնների պահպանության նկատմամբ թվով 52 հսկողություն: Իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել է 25.6 մլն դրամի դրոշմապիտակնորով դրոշմավորման և (կամ) դրոշմապիտակավորման կանոնների պահպանության կանոնների խախտումներ: Բոլոր դեպքերով կազմված արձանագրություններն ուղարկվել են ՊԵԿ իրավաբանական վարչություն:

Իրացման ծավալների, ԱՎՈՒՄ-ների, ԱԱՀ-ի հաշվարկների և այլ հարկվող օբյեկտների թերհայտարարագրումների ճշտման ուղղությամբ կատարված աշխատանքներ:

2025թ. ընթացքում 635 դեպքերով ներկայացվել են ճշտված հաշվարկներ: Արդյունքում նախկինում ներկայացված 80.3 մլրդ դրամի իրացման շրջանառության փոխարեն արտացոլվել է 128.2 մլրդ դրամի իրացման շրջանառություն, որոնց ճշտված հարկային հաշվարկներով ավելացված շրջանառությունը կազմել է՝ 47.9 մլրդ դրամ և հաշվարկվել է լրացուցիչ բյուջե վճարման ենթակա 9.0 մլրդ դրամ հարկի գումար:

Հարկային իրավախախտման, կանխման շրջանակներում ԵԱՏՄ տարածքից ներմուծված ապրանքների ինվոյսներում գների արժանահավատությունը ճշտելու ուղղությամբ կատարված աշխատանքներ:

2025թ. ընթացքում ինվոյսային արժեքների ճշտման ուղղությամբ ձեռնարկվել է թվով 4687 միջոցառում, բոլոր դեպքերով ներկայացվել են ճշտված հայտարարագրեր:

Արդյունքում նախկինում ներկայացված 7.6 մլրդ դրամ ինվոյսային արժեքի փոխարեն արտացոլվել է 15.7 մլրդ դրամ իրվոյսային արժեք և ներկայացված ճշտված հայտարարագրերով հաշվարկվել է լրացուցիչ բյուջե վճարման ենթակա 1.6 մլրդ դրամ:

Շահութահարկի թաքցված հարկվող օբյեկտները բացահայտելու ուղղությամբ կատարված աշխատանքներ:

2025թ. ընթացքում ՀՕՀ վարչության աշխատակիցների կողմից տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացվել է թվով 145 օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որի արդյունքում 101 դեպքով ավելացվել է հարկվող շահույթը 6.8 մլրդ դրամ, իսկ շահութահարկի գումարը՝ 1.3 մլրդ դրամ: Տնտեսվարող սուբյեկտների մոտ թվով 44 դեպքով կատարվել է ծախսերի մասով նվազեցումներ 2.8 մլրդ դրամի չափով իսկ շահութահարկը կազմել է 482.7 մլն դրամ:

Հարկման համակարգերի փոփոխությունների ուղղությամբ կատարված աշխատանքներ:

2025թ. ընթացքում ՀՕՀ վարչության աշխատակիցների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում թվով 22 հարկ վճարողի կողմից ներկայացվել են համապատասխան հայտարարություններ՝ ըստ հետևյալի.

Թվով 2 հարկ վճարող միկրոձեռնարկատիրության սուբյեկտից անցել է ԱԱՀ հարկման դաշտ,

Թվով 4 հարկ վճարող միկրոձեռնարկատիրության սուբյեկտից անցել է շրջանառության հարկի դաշտ,

Թվով 16 հարկ վճարող շրջանառության հարկից անցել է ԱԱՀ հարկով հարկման դաշտ:

Ձեռնարկված ՕՀՄ-ների արդյունքում ձեռք բերված տեղեկությունները հետագա հարկային հսկողության ընթացքում օգտագործելու նպատակով կատարված աշխատանքներ:

2025թ. իրականացվել է թվով 1091 օպերատիվ-հետախուզական միջոցառում, որի արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվությունն ուղարկվել է այլ ստորաբաժանումներ հետագա հարկային հսկողություն սահմանելու նպատակով:

ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը 2025թ. ընթացքում կայացել է 97 նիստ, որտեղ քննության են առնվել հարկ վճարողների կողմից ներկայացված դիմում-բողոքները:

Աղյուսակ 11. ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի կողմից 2024 - 2025թթ. հունվար-դեկտեմբեր ամիսներին կայացված որոշումների վերաբերյալ (հատ)

Ցուցանիշ	***2024***	***2025***	***Աճի տեմպ %***
ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներ, որից՝	2,325	2,281	-1.9%
բավարարվել է	855	593	-30.6%
բավարարվել է մասնակի	86	166	93.0%
մերժվել է	1,088	1,210	11.2%
կասեցվել է	0	1	0%
կարճվել է	296	311	5.1%
վերսկսվում	0	0	0%

3.2 ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչությունը 2025 թվականի ընթացքում իրականացրել է թվով 82 մաքսային ստուգում, ինչի արդյունքում առաջադրել է 1.6 մլրդ դրամ լրացուցիչ պարտավորություն, իսկ 2024թ. ընթացքում թվով 93 մաքսային ստուգում 2.1 մլրդ դրամ (ներառյալ անբողոքարկելի չդարձած ակտերը) լրացուցիչ պարտավորություն:

2025 թվականին հետբացթողումային հսկողության շրջանակում ապահովվել է 1.4 մլրդ դրամ (ներառյալ անբողոքարկելի չդարձած ակտերը), 2024 թվականին նույն ցուցանիշը կազմել է 1.1 մլրդ դրամ:

2025 թվականին մաքսային մարմինների կողմից իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել է հետբացթողումային հսկողության արդյունավետության աճ՝ 21.3%-ով:

Հետբացթողումային հսկողության արդյունավետության հաշվարկման ընթացքում չեն ներառվել պետական այլ գերատեսչությունների կողմից նախաձեռնված ստուգումների արդյունքները, որոնց հաշվարկներն ու ստուգման ակտերը կազմվել է Հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության կողմից, 2024 թվականին՝ 966 մլն դրամ, և 2025 թվականին՝ 218 մլն դրամ:

Գծապատկեր 16. 2023-2025թթ. հետբացթողումային հսկողության վարչության կողմից իրականացված ստուգումների քանակը և արձանագրված մաքսային վճարները



2025 թվականի հունիսի 1-ից ապրանքների արտահանման գործընթացը կազմակերպվել է 24/7 ռեժիմով: Ինչի արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությունից արտահանվող ապրանքների մաքսային սպասարկումն իրականացվում է շուրջօրյա ռեժիմով: Մինչ այս բարեփոխումը՝ երկրի ներսում արտահանման գործընթացը սպասարկվում էր միայն աշխատանքային օրերին և միայն աշխատանքային ժամերին, իսկ ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝ արտահանման ձևակերպումները կարող էին իրականացվել միայն պետական սահմանի անցման կետերում:



Իրականացվել են մաքսային ռիսկի չափանիշների ամբողջությամբ վերանայմանն ուղղված աշխատանքներ: 2025 թվականի ընթացքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, որդեգրելով տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող արտաքին տնտեսական գործունեությունն էլ ավելի դյուրինացնելու քաղաքականությունը, դեռ տարվա սկզբից իրականացրել է լայնածավալ աշխատանքներ՝ ՀՀ ՊԵԿ կողմից կիրառվող թե՛ սակագնային, թե՛ ոչ սակագնային և թե՛ թիրախային հսկողության ռիսկի պրոֆիլների վերանայման ուղղությամբ: Այդ աշխատանքների շրջանակներում իրականացվել են վերլուծություններ թե՛ մակրո, թե՛ միկրո մակարդակներում: Մաքսային ռիսկերի կառավարման համակարգում ռիսկի չափանիշների ամբողջական վերանայման և արդիականացման շնորհիվ շեշտակի աճել է «կանաչ ուղի» ընթացակարգով ապրանքների հայտարարագրերի բացթողնման տեսակարար կշիռը: 2024 թվականի ընթացքում, նոյեմբերի տվյալներով «կանաչ ուղու» միջերեսային արտացոլմամբ ապրանքների հայտարարագրերի բացթողումը կազմել է ընդամենը 56.4%, իսկ 2025 թվականի նույն ժամանակահատվածում՝ 70.2%: Արձանագրված աճին զուգահեռ՝ զգալի նվազել է նաև «դեղին ուղի» և «կարմիր ուղի» ընթացակարգերով ապրանքների հայտարարագրերի բացթողումների քանակը: Ռիսկերի կառավարման համակարգում տարեսկզբից մեկնարկած աշխատանքներն ավարտվել են նոյեմբերին: 2025 թվականի դեկտեմբեր ամսվա արդյունքների համաձայն՝ «կանաչ ուղի» միջերեսային արտացոլմամբ ապրանքների հայտարարագրերի բացթողումը կազմել է շուրջ 73%:

Մաքսային շարունակական բարեփոխումների շրջանակներում՝ քաղաքացիների հարմարավետությունն ապահովելու նպատակով, **2025 թվականի հոկտեմբերի 1-ից բեռնափոխադրող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց անվամբ ՀՀ ներմուծված անձնական օգտագործման ապրանքների մաքսային ձևակերպման ամբողջ գործընթացն իրականացվում է մեկ վայրում՝ այն ժամանակավոր պահպանման պահեստի սպասարկման սրահում, որտեղ փաստացի գտնվում են տվյալ ապրանքները:** Նշված բարեփոխման արդյունքում բարելավվել է ֆիզիկական անձանց սպասարկման գործընթացը, մասնավորապես՝ ստեղծվել է ապրանքների ժամանակավոր գտնվելու վայրերում ձևակերպումներն իրականացնելու և ապրանքները ստանալու հնարավորություն:

2025 թվականին **հաստատվել են մաքսային սպասարկման միասնական մոտեցումներ սահմանող ընթացակարգերը՝ ՀՀ ՊԵԿ նախագահի 2025թ. օգոստոսի 12-ի № 1060-Լ հրամանով**: Այս հրամանի շրջանակներում կարգավորվել են բոլոր այն ընթացակարգային հարցերը, որոնք նախկինում կարգավորված էին միմյանցից անջատ գործող մի քանի տասնյակ ներքին (լոկալ և անհատական) իրավական ակտերով, որոշ դեպքերում շրջաբերական կամ հանձնարարական գրություններով: Կարգավորման ենթակա հարցերին տրվել են արդիականացված ամփոփ լուծումներ, որոնք ըստ էության հանդիսանում են մաքսային սպասարկման միասնական ստանդարտներ: Բացի այդ ընթացակարգային բոլոր հարցերի մեկ միասնական իրավական ակտի շրջանակում կարգավորված լինելն էականորեն բարձրացնում է վարչարարության թափանցիկությունը ու դրա հիմքերի հասանելիությունը:

Խելացի ռիսկերի համակարգի ստեղծման նպատակով աշխատանքներ են իրականացվել Համաշխարհային բանկի հետ համագործակցության շրջանակներում: Մասնավորապես, Համաշխարհային բանկի փորձագետի հետ համատեղ մշակվել է մաքսային ոլորտում արհեստական բանականության և մեքենայական ուսուցման գործիքակազմերի վրա հիմնված «խելացի» ռիսկերի կառավարման համակարգի տեխնիկական բնութագիրը:

Տեխնիկական հագեցվածության բարձրացման նպատակով մեկնարկել է ռենտգեն պատկերների վերլուծության ժամանակակից մոնիթորինգային կենտրոնի ստեղծման աշխատանքները (ԱՄՆ աջակցությամբ):

ՀՀ ՊԵԿ համակարգում ռադիացիոն հսկողության արդյունավետ իրականացման նպատակով՝ ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի կողմից նվիրաբերվել է թվով 7 հատ

ռադիոմետր-սպեկտրոմետր: Ինչպես նաև նվիրաբերվել է թվով 5 հատ CT-40 մակնիշի մաքսանենգության դետեկտոր ճամպրուկ:

ՎԶԵԲ-ի հետ քննարկումների արդյունքում հաստատվել է «Բավրա», «Բագրատաշեն» և «Գոգավան» սահմանային անցման կետերում տեխնիկական միջոցների արդիականացման ցանկը:

«Բագրատաշեն» սահմանային անցման կետում տեղադրվել են թվով 2 հատ բեռնատարների էլեկտրոնային ստացիոնար կշեռքներ:

2025թ. նախնական մաքսային հայտարարագրման ինստիտուտից օգտվել են 377 կազմակերպություններ՝ 2024թ. համեմատ գրանցելով 49% աճ: 2025թ. ընթացքում նախնական մաքսային հայտարարագրման ինստիտուտից օգտվող կազմակերպությունների կողմից ներկայացվել են 22459 նախնական մաքսային հայտարարագրեր, որը գերազանցում է 2024թ. ներկայացված նախնական մաքսային հայտարարագրերի քանակը 21,2%-ով: Նախնական հայտարարագրերով ներմուծված ապրանքների քանակը 2025թ. ընթացքում կազմել է 1317916 տոննա, որը 2024թ. ցուցանիշը գերազանցել է 33,5%-ով:

ՀՀ ՊԵԿ կառուցվածքում 2024 թվականի ապրիլի 11-ից գործող հատուկ մասնագիտացված աշխատանքային խմբի կողմից ՀՀ «Արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» էլեկտրոնային հարթակում հասանելի «Թույլատվական փաստաթղթեր» (sw.gov.am) ենթահամակարգի միջոցով հայտատուների կողմից երկակի և (կամ) ռազմական նշանակության ապրանքների վերաբերյալ եզրակացություն ստանալու համար ներկայացված՝ անվճար հիմունքներով ուսումնասիրված հայտերի ընդհանուր քանակը 2025թ. ընթացքում կազմել է 14865 հայտ (2024 թվականի համեմատ աճելով շուրջ 67.2%-ով): Ներկայացված հայտերի հիման վրա ուսումնասիրվել է 49891 ապրանքատեսակ:

Մաքսային մարմնի կողմից հայտերի ուսումնասիրմանն ուղղված աշխատանքների արդյունքում տնտեսվարողները տնտեսել են նախ՝ ժամանակ (յուրաքանչյուր հայտի մասով՝ շուրջ 2-4 աշխատանքնային օր) և ֆինանսական միջոցներ՝ շուրջ 194.6 մլն դրամ (2024 թվականի ցուցանիշը գերազանցելով շուրջ 57.8%-ով), որից 128.7 մլն դրամ՝ ռազմական նշանակության ապրանքների և 65.8 մլն դրամ՝ երկակի նշանակության ապրանքների մասով ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքէջում հրապարակվող երկակի և (կամ) ռազմական նշանակության չհանդիսացող ապրանքների պարբերաբար թարմացվող ցանկերը ներառում են 60827 ռազմական և 14876 երկակի նշանակության չհանդիսացող ապրանքատեսակներ:

Շարունակվում է «Ագարակ» սահմանային անցման կետի շինարարությունը:

«Ագարակ» սահմանային անցման կետի վերակառուցման շրջանակներում Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի (ՎԶԵԲ) հետ քննարկումների արդյունքում հաստատվել է նոր տեխնիկական միջոցների ձեռքբերման ցանկը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ Հայաստան-Վրաստան սահմանային անցման կետի զարգացման շրջանակներում տեղի են ունեցել հանդիպումներ վրացական և հայկական կողմերի միջև:

Մաքսային սպասարկման ոլորտում արձանագրվել են նաև մաքսային մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացում արձանագրող հետևյալ ցուցանիշները՝

- օրական սպասարկվող բեռնատարների թվի աճը կազմել է՝ 5%,
- ներմուծման ձևակերպումների գործընթացի տևողությունը միջինում արագացվել է շուրջ՝ 10%-ով,
- մաքսային հսկողության ընթացքում զննման դեպքերը 2025թ. ընթացքում նախորդ տարվա 8% ցուցանիշից հասել են 4.9%-ի:

Մաքսային իրավախախտումների մասով առկա են հետևյալ խոշոր բացահայտումները՝

- շուրջ 250 տրանսպորտային միջոցների ՀՀ ապօրինի տեղափոխման դեպքերի բացահայտում՝ 1.3 մլրդ դրամ պետությանը հասցված վնաս,
- թվով 38 դեպքով կեղծ վկայականներով մաքսային վճարների արտոնությունների ստացման դեպքերի բացահայտում (մշտական բնակության քողի ներքո)՝ 228 մլն դրամ պետությանը հասցված վնաս,
- կեղծված ՌԴ համարանիշներով մեքենաների ներմուծման բացահայտում՝ 72 մլն դրամ պետությանը հասցված վնաս,
- կեղծված լիցենզիայի հիման վրա 7551 տոննա ցեմենտի ներմուծման բացահայտում՝ 60 մլն դրամ պետությանը հասցված վնաս:

ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության կողմից 2025 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքում արձանագրվել է մաքսային

իրավախախտումների 528 դեպք: Հայտնաբերված դեպքերից՝ 385 հանդիսացել են մաքսանենգության դեպքեր, որից 360 դեպքը՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգություն գործերով, իսկ 143 դեպքով հարուցվել է վարչական վարույթ՝ հնարավոր մաքսային կանոնների խախտման հատկանիշներով:

Քրեական գործեր

Նշված ժամանակահատվածում հայտնաբերված և ապօրինի շրջանառությունից դուրս բերված ապրանքների, այդ թվում թմրամիջոցների քանակական ցուցանիշները հետևյալն են՝



1. Հերոին –165 կգ 680 գրամ
2. Մեթամֆետամին –15 կգ 315.77 գրամ
3. Մարիխուանա –10 կգ 906.41 գրամ
4. Կոկաին –2 կգ 573.29 գրամ
5. ՄԴՄԱ – 2 կգ 248 գրամ
6. Հաշիշ-85 կգ 348.43 գրամ
7. Հաշիշի յուղ-39 կգ 224.83 գրամ և 38 հատ էլ սիգարետ,
8. Տետրահիդրոկաննաբինոլ – 1կգ 151.033 գրամ և 7 հատ,
9. Ամիլնիտրիտ-899 գրամ և 6 շիշ
10. α-PVP– 296.5 գրամ
11. Ափիոն – 25.16 գրամ
12. ԼՍԴ- 25 բլոտտեր
13. Ֆենտանիլ – 37 թիթեղ և 22 հատ,
14. Թմրամիջոցի և հոգեմետ նյութի պարունակությամբ դեղահաբեր 32542 հաբ, 116 գրամ և 20մլ:

Նշված ժամանակահատվածում հայտնաբերված և ապօրինի շրջանառությունից դուրս բերված ապրանքների, բացառությամբ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի քանակական ցուցանիշները հետևյալն են՝

1. Ծխախոտ 848 000 գլանակ,
2. Գումար – 341 175 դոլար, 8 800 000 ռուբլի, 55 000 եվրո և 2600 ավստրալական դոլար,
3. Ոսկի (ձուլակտոր, զարդեր)- 9397 գրամ,
4. Հրապատիճ – 2819 հատ,

5. Փամփուշտ - 619 հատ,
6. Հրազեն - 501 հատ,
7. Արծաթյա գոտի – 467 գրամ,
8. Ադամանդ – 86 հատ,
9. Զենք - 27 հատ,
10. Հուշադրամ - 75 գրամ,
11. Կտավ՝ Մինաս Ավետիսյան 1973թ Մտորումներ- 1 հատ,
12. Ատրճանակ- 1 հատ:

2025 թվականի ընթացքում մաքսանենգության դեմ պայքարի վարչության կողմից արձանագրված նշանակալի դեպքերը.

- 2025 թվականի հունվարի 23-ին «Ապավեն Տերմինալ» ՓԲ ընկերության մաքսային հսկողության գոտում մաքսային հսկողություն է իրականացվել ԱՄՆ-ից «Տրանս Շիփփինգ» ՍՊ ընկերության միջոցով ՀՀ ներմուծված միջազգային սուրհանդակային առաքանիների նկատմամբ, որի ընթացքում Մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական կենտրոն-բաժնի հատուկ վարժեցված շունը ներմուծված միջազգային սուրհանդակային առաքանու նկատմամբ դրսևորել է թմրամիջոցի հայտնաբերման վարքագիծ: ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի, արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչությունների աշխատակիցները, ԱԱԾ աշխատակիցների հետ միասին, մաքսային զննության արդյունքում, բացի սպորտային հագուստից և կոշիկներից՝ առաքանիում հայտնաբերել են արծաթագույն կպչուն ժապավենով փաթեթավորված «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 2 փաթեթ, որոնց քաշը կազմել է 920 գրամ:

- 2025 թվականի փետրվարի 26-ին «Ագարակ» անցման կետում, ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի և պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության աշխատակիցները համատեղ մաքսային զննման են ենթարկել ԻԻՀ-ից ժամանած ԻԻՀ-ի քաղաքացու կողմից շահագործվող բեռնատար ավտոմեքենան և կցորդը: Արդյունքում կցորդին ամրացված ջրի տարայից հայտնաբերվել է փայլաթիթեղյա տարաների մեջ լցված և փաթեթավորված ընդհանուր՝ 11. 962 գրամ քաշով 15 փաթեթ՝ լցված «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցին նմանվող սպիտակ բյուրեղանման զանգվածով:

- 2025 թվականի ապրիլի 5-ին ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության և ՀՀ ՊԵԿ պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության աշխատակիցները զննման են ենթարկել Իրանի Իսլամական Հանրապետությունից ՀՀ ժամանած ԻԻՀ քաղաքացու կողմից շահագործվող բեռնատար ավտոմեքենան և կցորդը, որի ռենտգեն զննության արդյունքում կցորդի հատակի հատվածում՝ նախապես պատրաստված գաղտնարաններից, հայտնաբերվել են 85164 գրամ համաքաշով, թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով և փայլաթիթեղով փաթեթված, թվով 112 փաթեթ «Հաշիշ» տեսակի թմրամիջոց:

- 2025 թվականի հուլիսի 23-ին Ագարակ սահմանային անցման կետում ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության և պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության աշխատակիցները, մաքսային զննման են ենթարկել ԻԻՀ-ից ժամանած բեռնատար ավտոմեքենան: Արդյունքում հայտնաբերվել է պոլիէթիլենային փաթեթ, որի մեջ եղել է 282 գրամ «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց և մետաղյա տարա՝ լցված 33 գրամ «հաշիշի յուղ»-ով: Օպերատիվ հետախուզական միջոցառումների շրջանակում պարզվել է, որ հայտնաբերված թմրամիջոցները պետք է տեղադրվեին Երևան քաղաքի գերեզմանատներից մեկում, որն էլ դարանակալվել է ՄԴՊ վարչության օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցների կողմից: Գերեզմանատուն են ժամանել ամուսիններ՝ ովքեր ՀՀ քաղաքացիներ են: Վերջիններս թմրամիջոցները թաքստոցից վերցնելուց հետո ձերբակալվել են: Պարզվել է, որ վերջիններս հանդիսանում են թմրամիջոցների վաճառքով զբաղվող տելեգրամյան հարթակի օգտատերեր և վերցված թմրամիջոցները պատրաստվում էին իրացնել հենց տելեգրամյան հարթակով: Տարված բացատրական աշխատանքների արդյունքում ձերբակալված անձն օպերատիվ-հետախուզության բաժնի աշխատակիցներին ներկայացրել է նաև մաքսանենգ եղանակով ձեռք բերած և ՀՀ տեղափոխված 327 գրամ «մեթամֆետամին» տեսակի, 75.5 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոցներ, ինչպես նաև թմրամիջոցներ փաթեթավորելու և վաճառելու համար նախատեսված գործիքներ ու նյութեր: Ձեռք են բերվել տվյալներ նաև այն մասին, որ ԻԻՀ քաղաքացի կողմից շահագործվող բեռնատար ավտոմեքենայի թաքստոցներում ևս առկա են «մեթամֆետամին»

տեսակի թմրամիջոցներ: Խուզարկության արդյունքում բեռնատարից հայտնաբերվել է 650 գրամ «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց:

2025 թվականի նոյեմբերի 24-ին «Ագարակ» սահմանային անցակետում ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության և Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության աշխատակիցները ռենտգեն սարքավորման միջոցով մաքսային զննության են ենթարկել ԻԻՀ-ից ՀՀ ժամանած բեռնատար ավտոմեքենան և կցորդը: Արդյունքում կասկածներ են առաջացել, որ Թուրքիայի Հանրապետության քաղաքացու կողմից շահագործվող բեռնատարի կցորդի առջևի մասում առկա է գաղտնարան: Օգտագործելով տեխնիկական միջոցներ՝ իրականացվել է բեռնատար մեքենայի և կցորդի զննությունը: Մաքսային զննման արդյունքում նշված բեռնատարի կցորդի նախապես պատրաստված գաղտնարանից հայտնաբերվել է 161 կիլոգրամ ընդհանուր քաշով 322 հատ թափանցիկ ինքնակպչուն ժապավենով փաթաթված սև փաթեթներ՝ լցված «հերոին» տեսակի թմրամիջոցով: Թմրամիջոցի մաքսանենգություն կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալվել է Թուրքիայի Հանրապետության քաղաքացին: ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նշված 161 կիլոգրամ «հերոին» տեսակի թմրամիջոցը պետք է բեռնատար ավտոմեքենայով ՀՀ տարածքով տեղափոխվեր Վրաստան:

Վարչական գործեր

ՀՀ ՊԵԿ ՄԴՊ վարչության կողմից 2025 թվականի ընթացքում հայտնաբերված 143 վարչական իրավախախտումները՝ ըստ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի հոդվածների բաշխվածության՝

- 73 դեպքով իրականացվել է վարչական վարույթ՝ Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքի 316-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշներով /Ապրանքի և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ դրանց հայտարարագրելը ոչ իրենց անվամբ կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը/,

- 34 դեպքով իրականացվել է վարչական վարույթ՝ Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքի 313-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշներով /Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապրանքի տեղափոխումը՝ մաքսային հսկողությունից թաքցնելով/,

- 28 դեպքով իրականացվել է վարչական վարույթ՝ Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքի 308-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշներով /առանց մաքսային մարմնի թույլտվության ապրանքներ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը, ինչպես նաև կորցնելը/,

- 5 դեպքով իրականացվել է վարչական վարույթ՝ Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքի 314-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշներով /Կանխիկ դրամական միջոցները, վճարային գործիքները ապօրինի տեղափոխելը/,

- 1 դեպքով իրականացվել է վարչական վարույթ՝ Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքի 312-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշներով /Մաքսային մարմնի պաշտոնատար անձի գործողությունները խոչնդոտելը և մաքսային մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջին չենթարկվելը / և 313-րդ հոդվածներով նախատեսված զանցանքի հատկանիշներով /Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապրանքի տեղափոխումը՝ մաքսային հսկողությունից թաքցնելով/,

- 1 դեպքով իրականացվել է վարչական վարույթ՝ Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքի 312-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշներով /Մաքսային մարմնի պաշտոնատար անձի գործողությունները խոչնդոտելը և մաքսային մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջին չենթարկվելը,

- 1 դեպքով իրականացվել է վարչական վարույթ՝ Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքի 306-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշներով /Մաքսային նույնականացման միջոցները հանելը, վնասելը, կորցնելը կամ փոխելը/ 307-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշներով /Առանց մաքսային մարմնի թույլտվության կատարվող բեռնային և այլ գործառնությունները/ և 308-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշներով /Առանց մաքսային մարմնի թույլտվության ապրանքներ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը, ինչպես նաև կորցնելը/:

Շնագիտական կենտրոնը

ՀՀ ՊԵԿ ՄԴՊ վարչության շնագիտական կենտրոնի 4 կինոլոգները՝ իրենց ամրակցված ծառայողական շների հետ միասին, 24/7 ռեժիմով հերթապահություն են իրականացնում «Ագարակ»

պետական սահմանի անցման կետում, իսկ թվով 1 անձ մշտապես հերթապահություն է իրականացնում ԱՄՕ «Զվարթնոց» օդանավակայանի ՀՀ ժամանող/մեկնող քաղաքացիների ուղեբեռների նկատմամբ: 7 կինոլոգներ՝ իրենց ամրակցված ծառայողական շների հետ, ծառայություն են իրականացնում Երևան քաղաքում գործող մաքսային հսկողության գոտիներում: Նրանք հսկողություն են իրականացնում նաև միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների, ներկրված ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ, ինչպես նաև Զվարթնոց միջազգային օդանավակայան-ի «Կարգո» բեռնային համալիրի մաքսային հսկողության գոտում:

Կինոլոգներին կցվել են ծառայողական շներ, որոնք բուծվել են ՀՀ ՊԵԿ ՄԴՊ վարչության շնագիտական կենտրոնում ներդրված՝ տարբեր տեսակի վարժեցումների համար պիտանի շների բուծման համակարգի շնորհիվ:

Ներկայումս ՀՀ ՊԵԿ շնագիտական կենտրոնում առկա են 15 ծառայողական շներ, այդ թվում՝

- 7-ը բելգիական հովվաշուն-մալինուա ցեղատեսակի,
- 2-ը լաբրադոր-ռետրիվեր ցեղատեսակի,
- 2-ը անգլիական կոկեր-սպանիել ցեղատեսակի,
- 2-ը միքս ցեղատեսակի
- 2-ը գերմանական հովվաշուն:

Վերը նշված շներից թվով 4-ը մշտական ծառայություն են իրականացնում «Ագարակ» սահմանային անցման կետում:

Շներից թվով 13-ը՝ այդ թվում 6 բելգիական հովվաշուն-մալինուա, 2 գերմանական հովվաշուն, 2 միքս, 1 լաբրադոր-ռետրիվեր և 2 անգլիական կոկեր-սպանիել ցեղատեսակի շներ մասնագիտացված են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի հայտնաբերման ուղղությամբ, իսկ 2-ն էլ՝ այդ թվում 1 լաբրադոր-ռետրիվեր և 1 բելգիական հովվաշուն-մալինուա ցեղատեսակի՝ թութունի հայտնաբերման ուղղությամբ:

2025 թվականի ընթացքում ՀՀ ՊԵԿ ՄԴՊ վարչության շնագիտական կենտրոնի նյութատեխնիկական բազան համալրվել է ծառայողական շներին անհրաժեշտ դեղորայքներով, սննդով, ինչպես նաև վարժեցման, պահպանման և խնամքի տարատեսակ պարագաներով:

3.3 ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Աղյուսակ 12. 2024 - 2025թթ. ընթացքում ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ (մլն դրամ)

Հ/Հ	Ցուցանիշ	2024թ.		2025թ.	
		Քանակ	Գումար	Քանակ	Գումար
1.1	Հարկային մարմնի և մաքսային մարմնի մասով կայացված գանձման որոշումներ, ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, սնանկության դիմումներ	×	×	×	×
1.1.1	Գանձման որոշումներ,	152220	121,836.5	121703	144,338.8
1.1.2	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված սնանկության դիմումներով վճիռներ, որոնք բավարարվել են	417	13,045.8	460	41,817.1
1.1.3	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված սնանկության դիմումներով վճիռներ, որոնք մերժվել են	39	733.7	48	1,826.2
1.1.4	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, այդ թվում՝ նոր հայցադիմումներ, որոնք բավարարվել են	2017	10,843.2	1202	10,731.1
1.1.5	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, այդ թվում՝ նոր հայցադիմումներ, որոնք մերժվել են	391	54,906.7	443	59,051.4
1.2	ՀՀ հարկային օրենսգրքի 428-րդ հոդվածով (ՀՀ հարկային օրենսգրքի 402.1-ին, 402.2-րդ, 407-410-րդ, 422-րդ և 423-րդ հոդվածներ)սահմանված վարչական վարույթներ	×	×	×	×
1.2.1	Հարուցված վարույթներ	1432	106,961.3	1212	1,880.1
1.2.2	Կազմված վարչական ակտեր	1392	106,961.3	997	1,880.1
1.3	Հարկային մարմնի և մաքսային մարմնի մասով վարչական տույժ նշանակելու մասին որոշումներ	41725	1,387.5	47474	1,703.8

2025թ. ընթացքում ՀՕՀ վարչության աշխատակիցների կողմից իրականացված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում 558 դեպքով նախապատրաստվել են նյութեր՝ կազմվել են 113.4 մլրդ դրամի նախնական հաշվարկներ, համապատասխան նյութերն ուղարկվել են հետաքննություն և նախաքննություն իրականացնող մարմիններին:

IV. ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

4.1 ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ

2025 թվականի ընթացքում իրականացվել են հարկային և մաքսային օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ: Այդ նպատակով, համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցությամբ, պատրաստվել և հրապարակվել են մամուլի հաղորդագրություններ, տեսանյութեր, հարցուպատասխաններ և տեղեկատվական բնույթի այլ նյութեր: Օրենսդրական փոփոխությունների լուսաբանումն ապահովելու համատեքստում ՏՀԿԲ-ն համագործակցել է նաև տարբեր զանգվածային լրատվության միջոցների հետ:

Իրազեկման նյութերը հրապարակվել են ՊԵԿ պաշտոնական www.src.am կայքէջի «Նորություններ» և «Տեսադարան» բաժիններում, պաշտոնական սոցիալական հարթակներում՝ Facebook, Twitter, Telegram և Instagram, ինչպես նաև ՊԵԿ պաշտոնական Youtube-յան էջում: Ըստ անհրաժեշտության՝ տեղեկատվությունը տարածվել է նաև 130-ից ավելի ԶԼՄ-ներով և սոցիալական ցանցերի մասնագիտական խմբերում (Facebook):

Ընդհանուր առմամբ՝ 2025 թվականի ընթացքում իրականացվել է 283 հանրային իրազեկման միջոցառում:

ՀՀ հարկային օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն 2025 թվականին օրինապահ հարկ վճարողներին՝ էլեկտրոնային փոստին ծանուցման միջոցով, ուղարկվել է թվով 1742 իրազեկում հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ:

Հարկային և մաքսային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ իրազեկումներ և պարզաբանումներ ստանալու վերաբերյալ 2025թ. ընթացքում կազմակերպությունների և քաղաքացիների կողմից Պետական եկամուտների կոմիտե է ներկայացվել շուրջ 6710 գրություն, որոնց վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգավորումների շրջանակներում տրվել են համապատասխան իրազեկումներ (պարզաբանումներ):

2025 թվականին «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են հետևյալ դասընթացները.

ՀՀ ՊԵԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

- կազմակերպվել են հարկային և մաքսային ծառայողների համար ուսումնական 85 դասընթացներ 1342 ակ/ժ տևողությամբ որոնց մասնակցել են 1684 մասնակիցներ:

- հարկային և մաքսային ծառայողների պատրաստման նպատակով կազմակերպվել են 55 դասընթացներ, 2143 ակ/ժ տևողությամբ, որոնց մասնակցել են 1151 մասնակիցներ, ընդ որում 1028 ակ/ժ դասընթաց իրականացվել է ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոնի էլեկտրոնային ուսուցման հարթակի միջոցով՝ հեռավար ձևաչափով:

- Հարկ վճարողների համար իրականացվել են 90 դասընթացներ, 979 ակ/ժ տևողությամբ որին մասնակցել են 1865 մասնակիցներ (Աղյուսակ 13):

Աղյուսակ 13: 2024 - 2025թթ. «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի դասընթացների վերաբերյալ

Հ/Հ	Ցուցանիշ	2024թ.	2025թ.
		Քանակ/Անձ	Քանակ/Անձ
1	Հարկ վճարողների համար կազմակերպված դասընթացներ	93	90
1.1	*մասնակիցներ*	2,006	1,865
1.2	*դասաժամեր*	1,431	979
2	Հարկային ծառայողի պատրաստման դասընթացներ	6	41
2.1	*մասնակիցներ*	288	872
3	Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացներ	16	14
3.1	*մասնակիցներ*	428	279

4.2 ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱԶԱՆԳԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ

Տնտեսվարող սուբյեկտների մոտ ծագող հարցերի ու խնդիրների օպերատիվ լուծման նպատակով ակտիվորեն գործել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հեռախոսազանգերի կենտրոնը:

Մասնավորապես, հարկային և մաքսային հարաբերությունները կարգավորող օրենսդրության և վարչարարության վերաբերյալ **2025 թվականի ընթացքում ստացվել է 209,728 հարցադիմում (հարկային մասով 80%, մաքսային՝ 20%):** Հարցադիմումներից 209,093-ը ստացվել են հեռախոսակապի, իսկ մնացած 635-ը էլեկտրոնային փոստի միջոցով: Նույն ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից ստացվել են նաև 991 դիմում-բողոք և 1 առաջարկություն:

Հեռախոսազանգերի կենտրոնը կազմակերպություններին և ֆիզիկական անձանց տրամադրում է տեղեկատվություն հարկ վճարողների իրավունքների և պարտականությունների, հարկերի, մաքսատուրքերի, մաքսային և այլ պարտադիր վճարների, դրանց հաշվարկման և վճարման կարգերի, հարկային հաշվետվությունների (հաշվարկների, հայտարարագրերի, տեղեկանքների) ձևերի լրացման և ներկայացման կարգերի, ինչպես նաև հարկային ու մաքսային մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իրավասությունների և լիազորությունների վերաբերյալ: Միաժամանակ կենտրոնի կողմից ընդունվում են առաջարկություններ և բողոքներ:

Բողոքները վերաբերել են ՀԴՄ-ների կիրառման կանոնների խախտումներին (մասնավորապես՝ խոսքը վերաբերում է քաղաքացիներին ՀԴՄ կտրոն չտրամադրելուն), չգրանցված աշխատողներին, ապօրինի ձեռնարկատիրական գործունեությանը: Առաջարկությունները հիմնականում վերաբերվել են «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային» և «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի և գրքերի դուրս գրման» համակարգերին:

Էլեկտրոնային համակարգերի արդիականացումը և կառավարման համակարգերի կատարելագործումը նպաստել է հարկ վճարողների սպասարկման որակի բարելավմանը և հետադարձ կապի ամրապնդմանը:

V. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ



5.1 ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ՏՏ ՈԼՈՐՏՈՒՄ

2025 թվականին «Ջի Սոլյուշնս» ՊՈԱԿ-ն իր աշխատանքներն իրականացնելիս հիմնականում առաջնորդվել է ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ ՊԵԿ զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագրի դրույթներով:

2025թ. ընթացքում նոր էլեկտրոնային համակարգեր, ենթահամակարգեր և մոդուլներ ստեղծելու ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ ՊԵԿ կարիքներից ելնելով իրականացվել է նոր հաշվետվությունների մշակում BI տեղեկատվական համակարգում, ինչպես նաև նախագծվել են նոր աղյուսակներ: 2025 թվականի ընթացքում համակարգը համալրվել է նոր հաշվետվական ձևերով որոնց քանակը կազմել է 56 հատ:

- 2025 թվականի ընթացքում նախագծվել, ծրագրավորվել և ներդրվել է Հանրային ծառայությունների մատուցման ոլորտում լիցենզիա ստացած, ինչպես նաև ջրային ոլորտում գործունեություն իրականացնող այլ հարկ վճարողների կողմից բաժանորդներին կամ սպառողներին (այդ թվում՝ ֆիզիկական անձանց) մատուցվող ծառայությունների շրջանակում մատակարարվող ապրանքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման էլեկտրոնային համակարգը:

- ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքում ծրագրավորվել է «Շրջանառության հարկի հաշվիչ» էջը, որտեղ հարկ վճարողները, եթե իրականացնում են 2 և ավելի տեսակի գործունեություն, հնարավորություն ունեն մուտքագրել իրենց կողմից իրականացված ծախսերը և տեսնել ուղղակիորեն տվյալ գործունեությանը չվերագրվող վարչական և իրացման ծախսերը՝ 2 կամ ավելի գործունեությանը վերագրվող առանձնացման (բաշխման) ենթակա վարչական և իրացման ծախսեր դաշտում լրացված արժեքից ելնելով: Ինչպես նաև հնարավոր է պարզապես հաշվարկել վճարման ենթակա շահութահարկի գումարը:

- Ներդրվել է Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտի կարգավիճակի հաստատման մասին տեղեկանքների տրամադրման գործընթացի պարզեցման ավտոմատացված համակարգը, որի միջոցով ՀՀ-ում պետական գրանցում ստացած կազմակերպությունները, ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերը և ֆիզիկական անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմել ՀՀ ռեզիդենտի կարգավիճակի հաստատման մասին տեղեկանքներ ստանալու համար https://e-services.src.am/hy/ նորաստեղծ հարթակի միջոցով: Տեղեկանք ստանալու համար վերջիններս ներկայացնում

են դիմում՝ լրացնելով համապատասխան վավերապայմանները՝ ներկայացման երկիր, հարկային տարի՝ ընտրելով տեղեկանքի լեզուն: Տեղեկանքները կարող են տրամադրվել նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով: Դիմումի մեջ կարող է կցվել նաև այլ երկրի ձևաչափով տեղեկանք, որը հաստատվում է հարկային մարմնի կողմից: Արդյունքում գեներացվում է տեղեկանքը, որն ունի QR կոդ և հսկիչ ծածկագիր, որի միջոցով տրամադրված տեղեկանքների վավերականությունը հարկ վճարողները կամ գործընկեր կազմակերպությունները հնարավորություն ունեն ստուգելու www.src.am կամ https://verify.e-gov.am/am/ կայքէջում՝ մուտքագրելով հսկիչ ծածկագիրը կամ սկանավորելով QR կոդը:

- Ներդրվել է Պետական եկամուտների կոմիտեի, Առողջապահության նախարարության և Սոցիալական ապահովության ծառայության համատեղ միասնական էլեկտրոնային հարթակը, որի միջոցով ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների նշանակման ու ստացման ամբողջ գործընթացը իրականացվում է էլեկտրոնային եղանակով: Անաշխատունակության թերթիկի բացման և փակման վերաբերյալ տվյալները բժշկական կազմակերպությունը լրացնում է միայն էլեկտրոնային եղանակով և փոխանցում ՊԵԿ-ին՝ Միասնական սոցիալական ծառայության համակարգի միջոցով: Տեղեկատվությունն արտացոլվում է հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում ստեղծված «Նպաստներ» էջում՝ հնարավորություն ընձեռելով գործատուին տեղեկացված լինելու աշխատակիցների անաշխատունակության վերաբերյալ: Անաշխատունակության թերթիկի փակման վերաբերյալ տվյալը ստանալուց հետո՝ ՊԵԿ-ը Միասնական սոցիալական ծառայությանը փոխանցում է նպաստը հաշվարկելու համար անհրաժեշտ տվյալները, որի հիման վրա հաշվարկում է ինչպես գործատուի, այնպես էլ պետական բյուջեի կողմից վճարվելիք նպաստի գումարները: Միաժամանակ, գործատուի կողմից ճշտում իրականացնելուց հետո վճարված նպաստի գծով ևս իրականացվում է վերահաշվարկ:

- «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ»-ի ներդրման համար ՀԲ-ի հայտարարած մրցույթի արդյունքում կա հաղթող կապալառու ընկերություն, և այժմ իրականացվում է վերջինիս գնահատումը:

- Ներդրվել է աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգը: 2025թ. հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ավելի քան 400 գործատուներ և աշխատողներ աշխատանքային պայմանագրերը կնքել են համակարգի միջոցով կամավորության սկզբունքով, իսկ արդեն 2026թ. հունվարի 1-ից աշխատանքային նոր պայմանագրերը համակարգի միջոցով կնքելը, ինչպես նաև նախկինում կնքված թղթային պայմանագրերը թվայնացնելն ու համակարգ մուտքագրելը դարձել են պարտադիր:

- Ներդրվել է Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների գրանցման ենթահամակարգը:

- Ներդրվել է «Ծանուցումների և անձնակազմի կառավարման» նոր համակարգը, ինչի արդյունքում մաքսային մարմնի և ԱՏԳ մասնակիցների ու նրանց ներկայացուցիչների միջև շփումը իրականացվում է բացառապես էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով:

- Առողջության համապարփակ ապահովագրության շրջանակներում անցումային համակարգի ներդրման աշխատանքներն իրականացված են, ապահովված է հաշվարկման, պարտավորության առաջադրման գործընթացը:

- Գործարկվել է էլեկտրոնային ծանուցումների համակարգը, ինչը հնարավորություն է տվել էլեկտրոնային եղանակով ապահովել մաքսային հայտարարագրերի շարժը մաքսային մարմնի ներսում: Համակարգի գործարկման արդյունքում՝ դեպքերի գերակշիռ մեծամասնությունում վերացվել է հայտարարատուների կողմից մաքսային մարմիններ այցելելու անհրաժեշտությունը:

- Իրականացվել են ինքնաշխատ բացթողնման համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքներ: Ծավալուն վերլուծությունների արդյունքում մշակված մի շարք չափանիշների և իրականացված բարդ տեխնոլոգիական կարգաբերումների արդյունքում 2025 թվականի մայիսից գործարկվել է ապրանքների և տրանսպորտային միջոցների ինքնաշխատ բացթողնման գործիքակազմը, որը մեծ գոհունակությամբ է ընդունվել արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող հայտարարատուների կողմից: 2025 թվականի մայիս – դեկտեմբեր ժամանակահատվածի արդյունքներով ինքնաշխատ բացթողնման տեսակարար կշիռը կազմել է բոլոր բացթողնված ապրանքների հայտարարագրերի 6.8%-ը: Հարկ է նշել, որ դեկտեմբեր ամսվա արդյունքներով այդ ցուցանիշը կազմել է 8.2%: Որպես համեմատական ցուցանիշ կարելի է նշել, որ 2024

թվականի ամբողջ ընթացքում ինքնաշխատ բացթողնման տեսակարար կշիռը կազմել է ապրանքների հայտարարագրերի ընդամենը 0.1%-ը:

- Մեկնարկել են մաքսային գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը պարունակող էլեկտրոնային հարթակի (EXIM) ստեղծման աշխատանքները: Հարթակն ԱՏԳ մասնակիցներին հնարավորություն է տալու ծանոթանալ մաքսային գործառնություններ իրականացնելու համար անհրաժեշտ ամփոփ տեղեկատվությանը (ինչպես օրինակ ըստ ապրանքի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի մաքսատուրքերի դրույքաչափերին, արգելք սահմանափակումների ոլորտի կարգավորումներին և այլն):

- Մեկնարկել են ՀՀ պետական սահմանի ցամաքային անցման կետերի միասնական էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները: Մասնավորապես՝ մշակվել է Էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագրությունը և անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթը:

2025թ. ընթացքում գործող էլեկտրոնային կառավարման համակարգերը լրացվել են նոր ենթահամակարգերով և մոդուլներով.

- Նույնականացման միջոցներով պարտադիր դրոշմավորում: Ընդլայնվել է պարտադիր դրոշմավորված ապրանքների ցանկը, իրականացվել են համակարգի հետ ինտեգրման աշխատանքներ:

- Իրականացվել են ֆիզիկական անձանց եկամուտների և ծախսերի հայտարարագրման համակարգի բարելավման աշխատանքներ՝ տվյալների ինքնաշխատ լրացման հնարավորությամբ:

- «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» (e-invoicing) համակարգում ներդրվել են հաշվարկային փաստաթղթերում նույնականացման միջոցների վերաբերյալ տվյալները ներառելու հնարավորություն, ստացված հաշվարկային փաստաթղթով դրոշմավորված ապրանքը (ապրանքները) ստացողի կողմից վերջնական սպառման ենթակա լինելու դեպքում մինչև հաշվարկային փաստաթղթի ստորագրելը (վավերացնելը) ստացողի կողմից «Ապրանքը նախատեսված է վերջնական սպառման համար» նշման հնարավորություն, նույնականացման միջոցների տվյալները csv ֆայլի տեսքով արտահանելու, դրանց կարգավիճակների մասին տվյալներ որոնելու և դիտելու հնարավորություն: «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» (e-invoicing) համակարգում ավելացվել է ապրանքների մատակարարման գործարքների մասով հաշվարկային փաստաթղթերում ԱՏԳ ԱԱ ծածկագրերի լրացման հնարավորություն: «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» (e-invoicing) համակարգում սոցիալական ծախս պարունակող հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու համար սոցիալական ծախսի տեսակ դաշտում ավելացվել է «Ատամնաբուժական ծառայություններ» տեսակը: «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» (e-invoicing) համակարգում սոցիալական ծախս պարունակող հաշվարկային փաստաթղթերում՝ ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի տվյալներ» հատվածում ավելացվել է «Ապահովադիր գործատու» նշատուփը՝ ապահովագրական պայմանագրի համաձայն որպես ապահովադիր հանդես եկած գործատուի՝ ապահովադիր անձի անունով հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու նպատակով:

- Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկը լրացնելիս՝ հարկ վճարողների համար հաշվարկի ձևում «Prefiling»-ի միջոցով տվյալների նախալրացման մասով իրականացվել են փոփոխություններ և նախկինում չնախալրացվող որոշ դաշտեր, այժմ նախալրացվում են:

- Հարկատու 3 համակարգի «Իրավական վարույթներ» ենթահամակարգում իրականացվել են փոփոխություններ: Տարեկան հայտարարագրերի գծով առաջացող պարտավորությունների կատարման համար նոր վերջնաժամկետներ են սահմանվել՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա նոյեմբերի 1-ը ներառյալ (2024 և 2025 թվականների

համար) և հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը ներառյալ (2026 և հետագա հաշվետու տարիների համար):

- Իրականացվել է ներդրված տարանցման հայտարարագրի համակարգի համապատասխանեցում հետևյալ որոշումներին:

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում 2023 թվականի մայիսի 30-ի N 73 «Տրանզիտային հայտարարագրի ձևը և դրա լրացման կարգը հաստատելու մասին, ինչպես նաև Մաքսային միության հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշ որոշումների փոփոխության և ուժը կորցրած ճանաչելու մասին»

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում 2023 թվականի մայիսի 30-ի N 74 «Տրանզիտային հայտարարագրի կառուցվածքի և ձևաչափի մասին և փոփոխություններ կատարելու վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումներում»

Ինչի արդյունքում հնարավոր է եղել ապահովել ՀՀ և ԵԱՏՄ անդամ պետությունների միջև տարանցման ընթացակարգերի համապատասխան ապրանքների անխափան տեղափոխությունը և հսկողության իրականացումը:

- Շարունակվել են վերլուծական գործիքակազմի զարգացման աշխատանքները: 2025 թվականի ընթացքում Power BI համակարգի վրա հիմնված վերլուծական հաշվետվությունների հարթակում ներդրվել է մաքսային ոլորտի տարբեր գործառույթներին առնչվող թվով 13 նոր հաշվետվություն: Միևնույն ժամանակ իրականացվել են ծավալուն աշխատանքներ մի շարք հաշվետվությունների լրամշակման և արդիականացման ուղղությամբ՝ կապված Power BI հաշվետվությունների հարթակում կատարված փոփոխություններով, իրավական ակտերի փոփոխություններով, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ կառուցվածքային ստորաբաժանումների պահանջներով:

- Իրականացվել են հարկ վճարողի անձնական հաշվի քարտի (ԱՀՔ) համակարգի ընթացիկ սպասարկման աշխատանքներ և նոր մոդուլների ներդրման աշխատանքներ, մասնավորապես՝ պետական տուրքի ինքնաշխատ հաշվառման էլեկտրոնային համակարգի տեխնիկական բնութագիրը կազմվել է ՊԵԿ կողմից ՀԲ-ի համար և ներկայացվել է կարծիքի, իսկ դրոշմանիշային վճարի էլեկտրոնային համակարգի

մրցույթում հաղթող չի ճանաչվել, ինչի արդյունքում համակարգն այժմ գրվում է «Ջի Սոլյուշնս» ՊՈԱԿ-ի ուժերով:

- «Հարկատու 3» համակարգում ներդրված «Ծանուցումների համակարգի» բարելավում:
- Օրենսդրական փոփոխություններով պայմանավորված ծրագրային համապատասխանելիության ապահովում:

VI. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

6.1 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Վրաստանի հետ համագործակցության շրջանակում աշխատանքներ են տարվել Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հետ համատեղ իրականացվող հայ-վրացական սահմանային անցակետերի արդիականացման և համատեղ օգտագործման ցամաքային մաքսային անցման կետի ներդրման ծրագրի ուղղությամբ, մասնավորապես՝



- հայ-վրացական Համատեղ կոմիտեի ստեղծում,
- Կոմիտեի կողմից հայ-վրացական Համատեղ աշխատանքային խմբի ստեղծում,
- Համապատասխան սահմանային անցակետի ընտրություն, որտեղ նախատեսվում է նախագծել համատեղ օգտագործման ցամաքային մաքսային անցման կետի ներդրման պիլոտը,
- Հայաստանի և Վրաստանի սահմանային հսկողության մարմիններին ԱԶԲ կողմից «Միասնական կամ ընդհանուր հարմարություններով» մոդելի նկարագրի և ներդրման հայեցակարգի ներկայացում,
- ՀՀ փոխվարչապետի որոշմամբ Միջգերատեսչական աշխատանքային խմբի ստեղծում և կազմի հաստատում (12. 12. 2025, N 792-Ա):

Իրանի Իսլամական Հանրապետության հետ համագործակցության շրջանակում իրականացվել են ակտիվ աշխատանքներ, մասնավորապես՝

- Հայ-իրանական սահմանին Պարզեցված կամ Կանաչ մաքսային միջանցքի ներդրման ուղղությամբ, այդ թվում՝ փոխհամաձայնեցման նպատակով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ԻԻՀ մաքսային վարչության միջև «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության տարածքներով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվության փոխանակման կազմակերպման մասին («Պարզեցված մաքսային միջանցք»)» արձանագրության նախագիծը ՊԵԿ կողմից ԱԳՆ ներկայացում,

- Տվյալների էլեկտրոնային փոխանակման համակարգի գործարկման ուղղությամբ աշխատանքների իրականացում,

- Լիազորված տնտեսական օպերատորների փոխճանաչման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ համագործակցության շրջանակում աշխատանքներ են տարվել Լիազորված տնտեսական օպերատորների փոխճանաչման ուղղությամբ, մասնավորապես՝

- Փոխճանաչման ծրագրի մեկնարկի, փոխճանաչման հնարավորությունների գնահատման նպատակով ՀՀ ՊԵԿ-ի և ՉԺՀ մաքսային գլխավոր վարչության պաշտոնատար անձանց միջև 2025թ. դեկտեմբերին Երևանում հանդիպում, «Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային գլխավոր վարչության և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի միջև լիազորված տնտեսական օպերատորի ծրագրի փոխճանաչման մասին» համաձայնագրի նախագծի մշակման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

Ուզբեկստանի Հանրապետության հետ համագործակցության շրջանակում աշխատանքներ են տարվել հետևյալ նախագծերի շուրջ՝

- «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Ուզբեկստանի Հանրապետության էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության պետական մաքսային կոմիտեի միջև մաքսային սահմանը հատող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվության փոխանակումը կազմակերպելու մասին» համաձայնագրի նախագծի մշակում և ներպետական համաձայնեցման իրականացում,

- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուզբեկստանի Հանրապետության կառավարության միջև մաքսային հարցերով համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագրի նախագծի մշակում և ներպետական համաձայնեցման իրականացում:

Շվեդիայի Թագավորության Հարկային գործակալության հետ համագործակցության շրջանակում՝

- Հարկային վարչարարության բարելավման ոլորտում համագործակցության հնարավոր ուղղությունները քննարկելու նպատակով 2025թ. սեպտեմբերին Շվեդիայի Հարկային գործակալության պատվիրակության այց ՊԵԿ,
- ՊԵԿ պատվիրակության մասնակցություն Շվեդիայի Թագավորության Հարկային մարմնի կողմից Ստոկհոլմում կազմակերպված ճանաչողական այցին՝ համագործակցության հնարավոր ուղղությունները քննարկելու նպատակով,
- Շվեդիայի Հարկային գործակալության ներկայացուցիչների փաստահավաք երկրորդ այց՝ 2026թ. փետրվարի 2-6,
- Հանդիպումների ընթացքում համագործակցության ուղղությունների հստակեցում:

Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակում՝

- Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար ապրանքների տեղափոխման հետ կապված գործընթացների մասով EXIM տեղեկատվական հարթակի նախագծում, մասնավորապես՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ EXIM հարթակի ստեղծման նպատակով մրցույթի հայտարարում, մրցույթը հաղթած GovTech ընկերության հետ GIZ ընկերության կողմից Պայմանագրի կնքում: Պայմանագրով ամրագրված պարտավորությունները GovTech ընկերության կողմից ավարտվել են: ՊԵԿ-ը նախատեսում է զբաղվել հարթակի բովանդակության ձևավորմամբ:
- Մաքսային լաբորատորիայի ներդրմանն ու գործարկմանն ուղղված ակտիվ աշխատանքների իրականացում, մասնավորապես՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ լաբորատորիայի ինստիտուցիոնալ և իրավական մոդելի մշակման նպատակով տեխնիկական աջակցության ծրագրի մշակում, մրցույթի հայտարարում, համապատասխան փորձագետի ներգրավում, փորձագետի կողմից լաբորատորիաների 3 հնարավոր մոդելների ներկայացում՝ 1) ՊՈԱԿ-ի, 2) մաքսային ծառայության ներքո գործող վարչության, 3) գործակալության ֆորմատներով:

- Nighthawk-BTX (Viken Detection) ձեռքի հետադարձ ցրման ռենտգեն սկաների ձեռքբերման մրցութային գործընթացի կազմակերպում, մրցույթի արդյունքում հաղթած «Millenium Force» ՍՊԸ հետ GIZ կողմից համապատասխան պայմանագրի կնքում, ՊԵԿ-ին նշված սկաների տրամադրում:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) հետ համագործակցության շրջանակում՝

- Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնի ստեղծման նպատակով 2025թ. սեպտեմբերին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև վարկային և դրամաշնորհային համաձայնագրերի կնքում,

- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ֆինանսական աջակցությամբ ոչ միայն Երևանի, այլ նաև Սյունիքի մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցմանն ուղղված աշխատանքների իրականացում,

- Մեղրիի սահմանային անցակետի վերակառուցման և արդիականացման աշխատանքների շարունակականություն,

- Նոր ռենտգենյան սարքավորումների և մաքսային հսկողության նորարարական տեխնոլոգիաների ձեռքբերման նպատակով ակտիվ համագործակցության շարունակականություն,

- Երևանի և Սյունիքի մաքսային և լոգիստիկ կենտրոնների կառուցման Ծրագրերի իրականացման աջակցության թիմի անհատ փորձագետների TOR-ի մշակում և մրցույթի կազմակերպում:

- Մաքսային լաբորատորիայի ներդրմանն ու գործարկմանն ուղղված աշխատանքների իրականացում, մասնավորապես՝

մաքսային լաբորատորիայի կառուցման ծրագրի ներառում Սահմանային անցակետերի արդիականացման ծրագրի մեջ, ինչի շրջանակում ներկայումս ՀՀ ՊԵԿ-ի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև իրականացվում են մաքսային

լաբորատորիայի տեխնիկա-տնտեսական ուսումնասիրության/վերլուծության (feasibility study) տեխնիկական բնութագրի մշակման աշխատանքներ (TOR):

Եվրոպական միության (EU) հետ համագործակցության շրջանակում՝

- 2025թ. Եվրոպական հանձնաժողովի հարկային և մաքսային միության գլխավոր տնօրինությունից (DG TAXUD) աշխատանքային կարգով ստացված առաջարկի հիման վրա՝ ԵՄ մաքսային մարմինների միջև գործող CUSTOMS և հարկային մարմինների միջև գործող FISCALIS ծրագրերին ՀՀ միանալու ուղղությամբ աշխատանքների իրականացում:

- ԵՄ «Միասնական տարանցման մասին» կոնվենցիային և տարանցման ողջ ընթացակարգը վերահսկելու նպատակով գործարկվող «Նոր համակարգչային տարանցման համակարգին» (“New Computerized Transit System” (NCTS)) միանալու ուղղությամբ օրենսդրական հնարավորությունների վերլուծության և Կոնվենցիային միանալու համար անհրաժեշտ քայլերի հաջորդականության մշակման ուղղությամբ աշխատանքների իրականացում:
- «Ժամանման նախնական տեղեկատվության փոխանակման հարթակի ստեղծում և թմրանյութերի անօրինական շրջանառության կանխարգելման լավագույն փորձի ուսումնասիրություն» թեմայով ԵՄ Թայեքս գործիքի ներքո ՀՀ փոխվարչապետի գրասենյակ ծրագրային առաջարկի ներկայացում:

Համաշխարհային մաքսային կազմակերպության (ՀՄԿ) հետ համագործակցության շրջանակում՝

- 2025թ. հոկտեմբերի 6–10-ը ՀՄԿ Թմրամիջոցների հայտնաբերման կարողությունների զարգացման ծրագրի դասընթացի կազմակերպում և անցկացում,
- Միացում ՀՄԿ «Խելացի մաքսատուն» (Smart Customs) ծրագրին,
- 2025թ. նոյեմբերին ՀՄԿ կողմից իրականացվող՝ Կենտրոնական Ասիայի և Կովկասի մաքսային վարչարարության անվտանգային ծրագրի (CCASP) շրջանակներում Երևանում Հայաստանի

WORLD CUSTOMS ORGANIZATION

Հանրապետության և Վրաստանի մաքսային մարմինների առաջնագծի մաքսային ծառայողների համար վերապատրաստման դասընթացի կազմակերպում:

Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) և Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) հետ համագործակցության շրջանակում՝

- Համատեղ հարկային վարչարարության բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացում: Փորձագետների այց, դասընթացների կազմակերպում,
- Հայաստանում խաղային գործունեության կարգավորման պատասխանատու օպերատորի ընտրության մրցութային գործընթացին աջակցություն,
- ԶՖԳ ներկայացուցիչների հետ 2025թ. նոյեմբերին տեղի ունեցած հանդիպման ընթացքում ՀՀ ՊԵԿ տեխնիկական աջակցության կարիքների քննարկում, որի շրջանակում առանձնացվել են այն ոլորտները, որոնց շրջանակում հնարավոր է ստանալ աջակցություն,

Քաղաքականության վրա հիմնված վարկավորման (policy-based lending) ռազմավարական նախագծի մասով՝

- Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի (DTA) կիրառում և Հարկման բազայի խեղաթյուրում և շահույթների տեղաշարժ ծրագրի իրականացում,
- Տեղեկատվության ավտոմատ փոխանակման (AEOI) համակարգի ներդրում, ինչպես նաև իրավաբանական և վարչական ընթացակարգերի բարելավման առաջարկություններ և հարկային վարչարարության գործընթացների բարելավման համար SS լուծումների արդիականացում ծրագրի իրականացում:

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ համագործակցության շրջանակում՝

- «Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքի» (TADAT) կիրառմամբ գնահատման իրականացում: 2025թ. հոկտեմբերին ավարտական զեկույցը հրապարակվել է ՀՀ ՊԵԿ ինտերներտային կայքում,
- «Հարկային ճեղքի վերագնահատում», որի վերաբերյալ ավարտական զեկույցը ԱՄՀ ներկայացուցիչների կողմից ներկայացվելու է 2026թ. փետրվարին,
- 2025թ. դեկտեմբերին տեղի ունեցած առցանց հանդիպման ընթացքում տեխնիկական աջակցության ծրագրերի իրականացման հնարավոր ուղղությունների քննարկում, ինչ արդյունքում առանձնացվել են այն ոլորտները, որոնց շրջանակում հնարավոր է ԱՄՀ հետ համագործակցություն, մասնավորապես՝

- Աշխատողների գրանցման և հարկային վարչարարության գործընթացների բարելավում,
- Մաքսային գործառնությունների և ռիսկերի կառավարման ժամանակակից մեթոդների ներդրում,
- Մասնագիտական վերապատրաստումների արդյունքում մաքսանենգության դեմ պայքարի կարողությունների զարգացում:

Համաշխարհային բանկի (ՀԲ) հետ համագործակցության շրջանակում՝

- Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագրի (PSMP-4) շրջանակում իրականացվող նախագծերի, Մաքսային վարչարարության զարգացման ծրագրի երկրորդ փուլի ընթացքի, ՀԲ կողմից հնարավոր տեխնիկական աջակցության ուղղությունների քննարկում,
- ԱՀԿ Առևտրի դյուրացման մասին համաձայնագրի կատարման գործընթացում առկա բացերի գնահատման առաքելության շրջանակում մաքսային գործառնությունների թափանցիկության բարձրացման, ինչպես նաև պետական սահմանի անցակետերում «Մեկ պատուհան» սկզբունքի ներդրման ուղղությամբ բարեփոխումների օրակարգի քննարկում,
- «Լավ կառավարման հիմնադրամ»-ի աջակցությամբ իրականացվող ծրագրերի համատեքստում հուլիսին ՊԵԿ նախագահի գլխավորությամբ ՊԵԿ-ում հանդիպման կազմակերպում, որի ընթացքում քննարկվել են իրականացված ծրագրերը, ինչպես նաև նախանշվել առաջիկա նախաձեռնությունները:
- ՀԲ Զարգացման Քաղաքականության Գործառնության (ԶՔԳ (DPO)) ծրագրի համատեքստում Հայաստանի համար նախատեսվող նոր բարեփոխումների ծրագրերի մշակման նպատակով կազմակերպված հանդիպումների ընթացքում ՊԵԿ նախագահի հետ 2025թ. դեկտեմբերին տեղի ունեցած հանդիպման շրջանակում DPO-ի ներքո նախատեսվող բարեփոխումների շրջանակի քննարկում և առևտրի դյուրացման համատեքստում ՊԵԿ-ի համար առաջնահերթ հիմնական ուղղությունների առանձնացում:

ԱՄՆ Արտահանման վերահսկման և սահմանների անվտանգության (EXBS) ծրագրի շրջանակում՝

- «CertScan» համակարգի ներդրման, համակարգի հետ սկաներների ծրագրային ինտեգրման մեխանիզմների մշակման, կենտրոնացված վերլուծությունների իրականացման նպատակով Մոնիտորինգային կենտրոնի ստեղծման ուղղությամբ «S2 Global» ընկերության աջակցությամբ աշխատանքների իրականացում,

- Ռիսկերի կառավարման շրջանակում աջակցություն,

- Մաքսային հսկողության սարքավորումների, հիմնականում՝ Ագարակի անցման կետի վերազինման շուրջ բանակցությունների իրականացում:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հետ համագործակցության շրջանակում՝

- 2025թ. հոկտեմբերին աշխատանքային հանդիպում՝ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորումի ներկայացուցիչների հետ: Քննարկվել են Հայաստանում Միասնական հաշվետվողական ստանդարտի արդյունավետ ներդրման և դրա կիրառման ընթացիկ փուլերը, մշակվել հետագա քայլերի ճանապարհային քարտեզ:

- ՊԵԿ նախագահի գլխավորած պատվիրակությունը մայիսի 26-28-ը Հյուսիսային Մալեում (Մալդիվների Հանրապետություն) և դեկտեմբերի 1-ից 5-ը Հնդկաստանում մասնակցել է ՏՀԶԿ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորումի 18-րդ տարեկան համաժողովի շրջանակում անցկացվող Ասիական նախաձեռնության 8-րդ և 9-րդ բարձրաստիճան հանդիպումներին, որպես համանախագահող՝ Մալդիվների հարկային մարմնի ղեկավարի հետ վարել համաժողովը: Հանդիպմանը շեշտադրվել են հարկային եկամուտների հավաքագրման, հարկային կարգապահության բարձրացման և ապօրինի հարկային հոսքերի դեմ պայքարի ուղղությամբ տարվող աշխատանքները:

ԵԱՏՄ և ԱՊՀ հետ համագործակցության շրջանակներում՝

- Երևանում փետրվարի 26-ից 28-ը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 49-րդ նիստի անցկացում,

- 04.06.2025թ. ՀՀ ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանի գլխավորած պատվիրակության մասնակցություն Ղրղզստանի Հանրապետությունում Եվրասիական տնտեսական միության անդամ

պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 50-րդ և Անկախ պետությունների համագործակցության մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 80-րդ նիստերին,

- 26.09.2025թ. ՀՀ ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանի գլխավորած պատվիրակության մասնակցություն Դուշանբեում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 51-րդ և Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 81-րդ նիստերին,

- 12.12.2025թ. ՀՀ ՊԵԿ նախագահի մասնակցություն Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 52-րդ նիստին,

- Ստորագրվել է «Բարձրագույն կրթության կրթական ծրագրերով և լրացուցիչ մասնագիտական ծրագրերով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մաքսային ծառայությունների համար կադրեր պատրաստելու մասին» համաձայնագիրը,

- Ստորագրվել է «ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային մարմինների մաքսային նպատակներով փորձաքննությունների և հետազոտությունների կենտրոնի մասին» համաձայնագիրը,

- Էլեկտրոնային նավիգացիոն կապարակնիքների կիրառմամբ՝ ԵԱՏՄ ապրանքների՝ ընդհանուր սահման չունեցող մի անդամ պետությունից մեկ այլ անդամ պետություն անդամ չհանդիսացող պետության տարածքով տեղափոխման անխոչընդոտ ապահովման համար Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև պիլոտային ծրագրի իրականացումը՝ նախատեսված 2025 թվականին, հետաձգվել է և ԵՏՀ խորհրդի համապատասխան որոշումներով տեղափոխվել 2026 թվականի հունիսի 1-ից 30-ն ընկած ժամանակահատված:

- ԱՊՀ մասնակից պետությունների հարկային (ֆինանսական) հետաքննությունների մարմինների ղեկավարների համակարգող խորհրդի (ՀՀՄՂՀԽ) հերթական՝ 24-րդ նիստի անցկացում Երևանում՝ 2025թ. սեպտեմբերին մասնակից երկրների բարձրաստիճան պատվիրակությունների հյուրընկալմամբ:

ՀՀՄՂԽՀ 24-րդ նիստում Հայաստանի՝ ԱՊՀ մասնակից պետությունների հարկային (ֆինանսական) հետաքննությունների մարմինների ղեկավարների համակարգող

խորհրդի նախագահության ստանձնում, ԱՊՀ մասնակից երկրների միջև հարկային իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, տնտեսական անվտանգության ապահովման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ հակազդմանը վերաբերող հարցերի քննարկում:

- 2025թ. հոկտեմբերին ՀՀ ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանի գլխավորած պատվիրակության մասնակցություն Ռուսաստանի Դաշնությունում ԱՊՀ մասնակից պետությունների հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհրդի (ԱՊՀ ՀԾՂՀԽ) 32-րդ նիստին, ՊԵԿ նախագահի կողմից «Հարկային տեսուչ՝ այսօր և վաղը» շնորհանդեսի ներկայացում:

Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության հետ համագործակցության շրջանակում՝

- 2025թ. նոյեմբերին Պետական եկամուտների կոմիտեում առցանց ձևաչափով Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) կազմակերպության Մաքսային հարցերով աշխատանքային խմբի նիստի անցկացում, որի նախագահությունն առաջիկա երկու տարվա համար ստանձնել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեն:
- Որպես համակարգող երկիր՝ Մաքսային հարցերով աշխատանքային խմբի՝ 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև 2027 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի գործողությունների ծրագրի ներկայացում, աշխատանքային խմբի կողմից ծրագրի ընդունում:

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման (UNDP) ծրագրի շրջանակում՝

- Թվային հետախուզության լաբորատորիայի կարողությունների զարգացման և ծրագրային թարմացման ուղղությամբ աշխատանքներ,
- Հիմնական ոլորտների և ուղղությունների նախանշում, որոնք կարող են ներառվել ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի առաջիկա հինգ տարիների ռազմավարական ծրագրում և որոնց ուղղությամբ կարող են իրականացվել տեխնիկական աջակցության նոր ծրագրեր:

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության (IOTA) հետ համագործակցության շրջանակում՝

- «Արագ փոխակերպվող միջավայրում զարգացող և ճկուն հարկային վարչարարության ապահովում» խորագրով ՀՄՆԿ 2025թ. տարեկան 29-րդ Գլխավոր վեհաժողովին մասնակցություն՝ 2025թ. հունիսին՝ առցանց եղանակով, վեհաժողովի ընթացքում ՀՀ կողմից 2027-2028թթ. ընթացքում նախագահության ստանձնման հնարավորության հաստատում:

Մաքսանենգության դեմ պայքարի վարչության համագործակցությունը

1. 2025 թվականի մարտի 10–14-ը Ավստրիայի Հանրապետության Վիեննա քաղաքում անցկացված ՄԱԿ Թմրամիջոցների հարցերով հանձնաժողովի (CND) 68-րդ նստաշրջանին մասնակցել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե մաքսանենգության դեմ պայքարի վարչության պետը:
2. 2025 թվականի ապրիլին ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն առաջին անգամ հյուրընկալեց ԱՊՀ երկրների մաքսային ծառայությունների կինոլոգիական ստորաբաժանումների ղեկավարներին: Անկախ Պետությունների Համագործակցություն անդամ պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվեց կինոլոգիական հարցերով աշխատանքային խմբի 31-րդ նիստը, որտեղ ներկայացվեցին ծառայողական շների թմրամիջոցների հայտնաբերման հմտությունների զարգացման առանձնահատկությունները: Ձեռք բերվեց պայմանավորվածություն, որ 2026թ. Ռուսաստան ԴՄԾ շնագիտական կենտրոնի բազայում կկազմակերպվեն ՀՀ ՊԵԿ համապատասխան բաժնի երկու մասնագետների վերապատրաստման դասընթացներ:
3. 2025 թվականի մայիսի 25–31-ը Ռուսաստանի Դաշնություն մաքսային ակադեմիայում տեղի է ունեցել «Տեղեկատվության ներմուծում BTaмO CEN համակարգ և վերլուծական գործիքների ուսումնասիրություն» թեմայով վերապատրաստում:
4. 2025 թվականի սեպտեմբերի 9-11-ը Ղազախստանի Հանրապետության Ալմաթի քաղաքում տեղի է ունեցել ԱՊՀ անդամ-պետությունների ՄԾՂԽ ԻՍՂԿ 25-րդ նիստը և վերջինիս աշխատանքային խմբերի նիստերը, ինչպես նաև «ՌԻԼՈ-Մոսկվա» տարածաշրջանային կապի հանգույցի 24-րդ նիստը:
5. ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության ներկայացուցիչները 2025 թվականի սեպտեմբերի 15–19-ը ԱՄՆ-ի Էլ Պասո քաղաքում մասնակցել են «Սահմանային խախտումների կանխարգելում» խորագրով միջազգային դասընթացին: Դասընթացն

իրականացվել է ուսուցման տարբեր ձևաչափերով՝ ներառելով տեսական դասախոսություններ և այցեր մաքսային հսկողության օբյեկտներ:

6. 2025 թվականի սեպտեմբերին շնագիտական (կենտրոն) բաժնի պետի Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա այցի շրջանակում «Ցուցիչ գործիքների լաբորատորիայի» գլխավոր տնօրենի տեղակալի հետ համագործակցությամբ ներկայացվեցին թղթադրամների հոտային նմանակիչների կիրառմամբ ծառայողական շների վարժեցման առանձնահատկությունները և դրանց տարբերությունները իրական թղթադրամների հայտնաբերման վարժանքներից:

7. Մոլդովայի Հանրապետություն մաքսային ծառայության հետ համագործակցության շրջանակում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2025թ. նոյեմբերին կազմակերպվել է մոլդովացի գործընկերների այցը ՀՀ Պետական եկամուտների կոմիտե ՄԴՊՎ շնագիտական (կենտրոն) բաժին: Անցկացվել են տեսական և գործնական դասընթացներ ինչպես բաժնում, այնպես էլ Զվարթնոց միջազգային օդանավակայանում: Միաժամանակ իրականացվել է

ծառայողական շների թեստավորում, ինչպես նաև կազմակերպվել են այցեր Երևան քաղաքի մաքսային տերմինալներ և մոտակա սահմանային անցակետեր: Մոլդովացի մասնագետները բարձր են գնահատել ՊԵԿ շնագիտական կենտրոնի գործունեությունը և շեշտել, որ այն ոչնչով չի զիջում առաջադեմ երկրներում գործող նմանատիպ կենտրոնների չափանիշներին:

VII. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

7.1 ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2025 թվականին հարկային ծառայողների թիվը կազմել է 1221, նախորդ տարվա նկատմամբ նվազելով 1.3%-ով, մաքսային ծառայողների թիվը կազմել է 1246, նախորդ տարվա նկատմամբ աճելով 0.8%-ով, իսկ քաղաքացիական ծառայողների թիվը կազմել է 115՝ նախորդ տարվա նկատմամբ մնալով նույնը: Խրախուսված հարկային ծառայողների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 5 անգամ, իսկ խրախուսված մաքսային ծառայողների թիվը՝ մոտ 3 անգամ:

Շարունակվել է հարկային և մաքսային համակարգը նոր որակի ծառայողներով համալրելու, ինչպես նաև հարկային ծառայողների որակավորման բարձրացման նպատակով անցկացվող դասընթացները, որոնց շրջանակներում իրականացվել է նաև նրանց բարեվարքության գնահատումը:

Աղյուսակ 14: 2025թ. հարկային, մաքսային և քաղաքացիական ծառայողների վերաբերյալ

Հ/Հ	Ցուցանիշ	Հարկային ծառայող		Մաքսային ծառայող		Քաղաքացիական ծառայող	
		2024	**2025**	**2024**	**2025**	**2024**	**2025**
1	Ծառայողների թիվը	1205	1221	1236	1246	115	115
2	Վերապատրաստված ծառայողների թիվը	59	-	208	-	35	53
3	Խրախուսված ծառայողների թիվը	29	137	43	141	-	15
4	Կարգապահական պատասխանատվության ենթարկված ծառայողների թիվը, այդ թվում՝	21	44	22	24	-	2
4.1	Նախազգուշացում	9	10	8	16	-	2
4.2	Նկատողություն	10	24	12	4	-	-
4.3	Խիստ նկատողություն	2	10	2	3	-	-
4.4	Նյութական պատասխանատվություն	-	-	-	-	-	-
4.5	Ծառայության դադարեցում	-	-	-	1	-	-
5	Անցկացված մրցույթների, հարցազրույցների քանակը	6	46	7	56	12	11
	Աշխատատեղերի թիվը	276	455	859	537	12	11
5.1	Մրցույթների	304	525	948	4796	25	98

	մասնակիցների թիվը						
5.2	Մրցույթների հաղթողների թիվը	249	292	852	428	10	9
5.3	Մրցույթների արդյունքում աշխատանքի նշանակվածների թիվը	249	423	403	447	10	9
6	Ժամանակավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու նպատակով փաստաթղթերի ընդունման վերաբերյալ հայտարարությունների թիվը	122	53	296	28	7	2
6.1	Դիմորդների թիվը	305	197	1594	160	23	30
6.2	Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներով աշխատանքի նշանակվածների թիվը	108	35	268	20	7	2

VIII. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

8.1 ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵԿ ներքին աուդիտի վարչության կողմից 2025 թվականի ընթացքում շարունակվել են իրականացվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ ՊԵԿ ստորաբաժանումների ռիսկերի գնահատման հիման վրա ռազմավարական և տարեկան ծրագրերի կազմման և դրանցով նախատեսված աուդիտների կատարման աշխատանքները, ինչպես նաև աուդիտին առնչվող վերահսկողական և վերլուծական բնույթի այլ աշխատանքներ: Վերոնշյալ ներքին վերահսկողական աշխատանքների արդյունքում տրվել են համապատասխան առաջարկություններ բացահայտված ռիսկերի նվազեցման ուղղությամբ:

Վարչության կողմից 2025 թվականի ընթացքում իրականացվել են աուդիտորական առաջադրանքներ 12 միավորներում, որից 9 միավորներում իրականացվել է հավաստի-ացման աուդիտ, իսկ 3 միավորներում՝ խորհրդատվական աուդիտ:

Իրականացված աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմվել են հաշվետվություններ, որոնցում ներկայացվել է 128 բնույթի անհամապատասխանություն (այդ թվում ռիսկեր և խնդիրներ) և դրանց վերացման համար կազմվել ու հաստատվել է 78 միջոցառում: Նշենք, որ դրանց կատարման նկատմամբ Վարչության կողմից իրականացվում է մշտական հսկողություն:

Աուդիտի արդյունքում արձանագրված թերությունները և ներկայացված առաջարկությունները վերաբերվում են տարբեր ստորաբաժանումների կողմից հարկերի, տուրքերի և այլ վճարների հաշվարկմանն ու գանձմանը, ՊԵԿ կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների պլանավորմանը, դրանց գնման գործընթացներին, ՊԵԿ կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների իրականացման ընթացքում իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանմանը, այլ բնույթի ռիսկերի նվազեցմանը և աուդիտի միավորների առավել արդյունավետ աշխատանքների իրականացմանը:

Իրականացվել են նաև վերստուգման աշխատանքներ:

Բացի ՊԵԿ գործունեության բարելավմանն ուղղված՝ ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի արդյունավետության բարձրացման, ընթացակարգային բացերի վերացման, բիզնես պրոցեսների վերաբերյալ ներկայացված բազմաթիվ առաջարկություններից՝ ներքին վերահսկողական աշխատանքներով բացահայտված

անհամապատասխանությունների և թերությունների վերացման արդյունքում ՀՀ պետական բյուջե վերականգնման են առաջադրվել լրացուցիչ գումարներ, ՊԵԿ կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների պլանավորման և ձեռքբերման մասով եղել են տնտեսումներ:

Աուդիտորական առաջադրանքների արդյունքները քննարկելու նպատակով 2025 թվականի ընթացքում կազմակերպվել են ՊԵԿ ներքին աուդիտի կոմիտեի թվով 4 նիստեր:

2025 թվականի ընթացքում Վարչության կողմից իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները.

- Գնման գործընթացների ընթացիկ ուսումնասիրություններ, որոնց շրջանակում ուսումնասիրվել է 865 հանձնման-ընդունման արձանագրություն և 216 գնման պայմանագիր:
- ՊԵԿ մաքսային տարածքներում (հսկողության գոտիներում) տեղակայված տնտեսվարող սուբյեկտների գործունեություն վերլուծություն:
- Շահութահարկի հաշվարկի համախառն եկամուտների վերլուծության արդյունքում ռիսկերի վերհանում և տրամադրում հսկողական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումներին:
- 2023-2025թթ. ՊԵԿ էլեկտրաէներգիայի գծով ծախսերի վերլուծություն և դինամիկայի կազմում:
- Հարկման ընդհանուր դաշտից շրջանառության հարկի դաշտ տեղափոխված հարկ վճարողների կողմից նախորդ ժամանակաշրջաններում հաշվանցված ԱԱՀ-ի գումարների վերաձևակերպումներ չիրականացնելու ռիսկերի վերհանում և տրամադրում հսկողական գործառույթ իրականացնող ստորաբաժանումներին:
- «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջների խախտման հնարավոր ռիսկերի վերհանում և տրամադրում հսկողական գործառույթ իրականացնող ստորաբաժանումներին:
- Մեծ ծավալների ապրանքային մնացորդների առկայությամբ գործունեությունը դադարեցրած հարկ վճարողների ոչ իրատեսական մնացորդներով ռիսկային ցանկերի վերհանում և տրամադրում հսկողական գործառույթ իրականացնող ստորաբաժանումներին:
- Ակնհայտ ազատ միջոցների առկայության պայմաններում շահաբաժինների վճարումից խուսափելու կամ վճարված շահաբաժիններից եկամտային հարկ չպահելու ռիսկով շահաբաժիններ չձևակերպած հարկ վճարողների ցանկերի վերհանում և տրամադրում հսկողական գործառույթ իրականացնող ստորաբաժանումներին:

- Շահութահարկի հաշվարկներով հայտարարագրած վնասների վերլուծությամբ ռիսկերի դուրսբերում և տրամադրում հսկողական գործառույթ իրականացնող ստորաբաժանումներին:

- «Քարի սղոցում, մշակում և հարդարում» ոլորտի հարկ վճարողների կոմունալ ծախսերի և իրացման շրջանառությունների համադրմամբ վերլուծության արդյունքում ռիսկերի վերհանում և տրամադրում հսկողական գործառույթ իրականացնող ստորաբաժանումներին:

- ՀԷՑ-ի դուրս գրած հարկային հաշիվների ուսումնասիրությամբ ֆիզիկական անձանց ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման կամ վարձակալությամբ կազմակերպություններին անշարժ գույքի տրամադրման ռիսկերի վերհանում և տրամադրում հսկողական գործառույթ իրականացնող ստորաբաժանումներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

- Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի կիրառման ճշտության ուսումնասիրություն:

- ԵՏՀ կոլեգիայի համապատասխան որոշումներով սահմանվող մաքսատուրքերի ժամանակավոր արտոնությունների կիրառման ուսումնասիրություն:

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի կողմից 2025 թվականի ընթացքում իրականացվել է հաշվեքննություն Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում 2025 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից հաշվեքննության արդյունքների մասով ներկայացվել են արձանագրություններ, որոնցում նկարագրվել են կատարման ընթացքի վերաբերյալ եզրակացություններ և տեղ գտած անհամապատասխանություններ: ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացվել են լրացուցիչ հիմնավորումներ, առարկություններ կամ պարզաբանումներ արձանագրությունների վերաբերյալ և օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվել է հետագա ընթացքի իրականացումը:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2025 թվականի ընթացքում իրականացվել է ՊԵԿ ներքին աուդիտի որակի արտաքին գնահատում, որի արդյունքները քննարկվել են ՊԵԿ ներքին աուդիտի կոմիտեի նիստում:

8.2 ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՊԵԿ գործունեության վերաբերյալ գոհունակության գնահատման հարցումն իրականացվել է 2025 թվականի ապրիլի 1-ից մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Հարցումն իրականացվել է հարցաթերթիկի միջոցով, որը տեղադրվել է ՊԵԿ պաշտոնական կայքում և «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային (file-online)» համակարգում՝ դեպի ՊԵԿ պաշտոնական կայք ուղղորդող հղումով: Հարցումն իրականացվում է 4-րդ տարին անընդմեջ և նպատակ է հետապնդում գնահատել հարկ վճարողների գոհունակությունը մատուցվող ծառայությունների և իրականացվող վարչարարության նկատմամբ:

Հարցման ընթացքում գնահատվել է ՊԵԿ կողմից մատուցվող ծառայությունների որակը:

Հարկ վճարողներին հնարավորություն է տրվել նաև ներկայացնել առաջարկություններ, որոնք ըստ իրենց, կբարելավեն հարկային և մաքսային մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակը: Ներկայացված առաջարկներն ամփոփելով կարող ենք փաստել, որ դրանք ընդգրկել են էլեկտրոնային ծառայությունների մատուցման, խորհրդատվության և իրազեկման, օրենսդրական կարգավորումների, ծառայողների կողմից իրավաչափ վարքագծի, հարկային/մաքսային վարչարարության պարզեցման խնդիրները:

ՊԵԿ կողմից իրականացված հարցումներից բացի՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ 2025թ.-ի հունվար-մայիս ամիսներին իրականացվել է մաքսային վարչարարության նկատմամբ հարկ վճարողների ընկալման և վերաբերմունքի վերաբերյալ հարցում: Ընթացքի մեջ է հարկային վարչարարության վերաբերյալ հարցումը:

Իրականացված հարցումների արդյունքներն, ընդհանուր առմամբ, դրական են գնահատվել:

2025թ. ընթացքում տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից հանրության իրազեկվածության բարձրացման ու ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գործունեության թափանցիկության ապահովման ուղղությամբ իրականացվել են տարաբնույթ նպատակային միջոցառումներ:

Մասնավորապես՝ հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է Կոմիտեի գործունեության բազմակողմանի լուսաբանում: ՊԵԿ նախագահի և Կոմիտեի այլ պաշտոնատար անձանց մասնակցությամբ պարբերաբար կազմակերպվել են մամուլի ասուլիսներ, վերջիններս տարբեր զանգվածային լրատվության միջոցներով մասնակցել են հարցազրույցների և հեռուստատեսային հաղորդումների՝ ներկայացնելով Կոմիտեի գործունեության ընթացիկ ուղղությունները, նախաձեռնությունները, իրականացված և իրականացվող բարեփոխումները և այլն:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը (ՏՀԿԲ) հետևողականորեն ապահովել է Կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ միջազգային, ներպետական և ոլորտային նշանակության միջոցառումների, ինչպես նաև պաշտոնական հանդիպումների և քննարկումների լուսաբանումը՝ ապահովելով դրանց վերաբերյալ ամբողջական և օպերատիվ տեղեկատվության պատրաստումն ու տարածումը:

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է ՀՀ ազգային ժողովի, ԱԺ հանձնաժողովների, ինչպես նաև Կառավարության նիստերում քննարկված՝ Կոմիտեին և, առհասարակ, ոլորտին առնչվող հարցերի լուսաբանումը:

Բաժնի կողմից լուսաբանվել է նաև մաքսանենգության, մաքսային կանոնների խախտման, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտված իրավախախտումների դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հանրային հաղորդակցության շրջանակում կիրառվել են տեղեկատվության լուսաբանման տարբեր ձևաչափեր և խորագրեր: 2025 թվականին ընթացիկ խորագրերն ու ձևաչափերը համալրվել են նորերով: Մասնավորապես՝ «Հարցուպատասխան», «Իրազեկման թերթիկ», «Բիզնեսի հայացքից», «Մաքսանենգության և մաքսային կանոնների խախտման դեպքեր. շաբաթվա բացահայտումներ», «Միասին ամփոփենք նախորդ շաբաթվա նորությունները» գործող խորագրերին և ձևաչափերին ավելացել է ևս չորս նոր խորագիր՝ «Կարևոր է իմանալ», «Շաբաթվա հարց», «Օրենքը քո լեզվով» և «Օրվա թիվ»:

2025 թվականի ընթացքում ՊԵԿ մասնագետները «Գործարար Ալիք FM 106.5» ռադիոկայանի եթերում «պոդքաստ» ձևաչափով անդրադարձել են Կոմիտեի

գործունեությանն առնչվող կարևոր իրադարձություններին և թեմաներին: Այդ նպատակով ռադիոկայանի հետ համագործակցությամբ ստեղծվել և իրականացվել է «Պաշտոնականից դուրս» հաղորդաշարը:

ՏՀԿԲ բաժնի կողմից պատրաստվել է նաև Կոմիտեի 2025 թվականի գործունեությունն ամփոփող ֆիլմ: Հաշվետու ժամանակաշրջանում հրապարակվել են նաև պարզաբանումներ, ինֆոգրաֆիկաներ, տեղեկատվական հոլովակներ, կարճ տեսանյութեր և այլն: